Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ-3

(2012-2014թթ.)

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ 2015

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5 (2Հ)
Գ 888

Գրիգորյան Վ.
Գ 888 Հուշամատյան-3/ Վ. Գրիգորյան.- Ստեփանակերտ:
Դիզակ պլյուս, 2015.- 160 + 40 էջ ներդիր:

Վերա Գրիգորյանի կողմից կազմված «Հուշամատյան 3»-ը՝ (որը հեղինակի թվով 18-րդ գիրքն է) ընդգրկում է ԼՂՀ ԱԿԱՀՄ հուշաթղթարան այցելած մեր հայրենակիցների եւ արտերկրից ժամանած հյուրերի գրառումները, կարծիքներն ու խոհերը, որոնք կազմակերպության 16-ամյա գործունեության յուրահատուկ գնահատականներ են, ինչպես նաեւ՝ ցավն ու հույսը ազգովի կիսելու, միմյանց նեցուկ լինելու բացառիկ օրինակ:

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5 (2Հ)

ISBN 978-99941-2-696-5
© Վ. Գրիգորյան, 2015

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆՈՒՄ

Անհայտությունից սկսվում է տեսիլքների ոգին
Ես քանի՞ անգամ եմ շրջանցել մահը,
Եվ պարուրվել դատարկության արեւածագով…
Գրառումները հուշամատյանում՝
Ճակատագրի նշանացույցեր…
Վերադարձի ճանապարհն է երկարում,
Ինչպես հույսի ձեռք:
Պոկված ծաղիկ է
Հյացքը սալաքարի:
Ինչպես բզեզ խճճվել է
Խաղաղության ոստայնում
Արցունքը լռության կտավին նկարում է
Ճյուղեր հորիզոնի:
Տողի համբերության միջով
Սուրո՞ւմ է խորհուրդը Աստղի:
Վիհերից ծորում է առավոտը
Դատարկ պատուհանն ի վար:
Պոկված ծաղիկ է
Հայացքը սալաքարի:

Խմբագիր՝
Ռոբերտ Եսայան

Խոնարհվում ենք հայրենիքի համար նահատակվածների եւ անհայտ կորած հերոսների առջեւ: Անմահ են նրանց անունները: Փառք ու պատիվ նրանց: Խոստանում ենք, որ կլինենք հայրենիքի պաշտպանության եւ հայրենապահպանության գործի՝ նրանց արժանի հետեւորդները:

Գիշու միջնակարգ դպրոցի աշակերտներ,
դասղեկ՝ Մ.Ավանեսյան,
ուսուցչուհի՝ Ան. Ավանեսյան
30,03,2012թ.

Փա՜ռք ու պատիվ մեր անմեղ նահատակներին եւ հակառակորդի զնդաններում դեռ տառապողներին: Մենք սպասում ենք ձեզ ու հավատում, որ հարության օրը գալուց առաջինը դու՛ք եք հառնելու… Այսօր, երբ Արցախում եմ, երբ Հայաստանից եկել եմ զինվոր որդուս հետ տեսակցելու, նոր հասկացա, թե որչափ արժեր կռվել այս հողի համար… Դուք քաջաբար արել եք ձերը, վստահ եղեք, որ գործը ձեր պատվով կշարունակեն ներկա եւ ապագա սերունդները: Ոչ մի թիզ հող չենք հանձնի դարավոր թշնամուն, անհոգ եղեք:

Ամեն հայ իր պատքն է համարում հարգել ու բարձր պահել ձեր հիշատակը, մարտական դիրքերում զոհված եւ անհայտ կորած մեր սիրելի տղաներ:

Զինվորի մայր՝ Հերմինե Ավագյան
ՀՀ թ.Վանաձոր
30.03.2012թ.

Նայեցի մեր անհայտ կորած զինվոր տղաների նկարներին եւ նրանց հայացքներից հասկացա, որ ամեն գնով փորձել են պաշտպանել մեր հողը, ոմանք երեեւի թե նույնիսկ ավտոմատն առաջին անգամ էին բռնում, բայց չնահանջեցին, առաջ գնացին…: Նրանց մայրերն ու քույրերը շատ են արցունք թափել ու միաժամանակ հպարտացել…

Հիմա ես ծառայում եմ Արցախում, հրետանային գնդում, եւ նույնպես պատրաստ եմ արյունս տալ ազգիս հարատեւության համար: Վարորդ եմ, Ստեփանակերտում եմ՝ մայիսի 9-ի զինվորական շքերթին պատրաստվելու համար:Իսկական օրը Վերածննդի հրապարակով անցնելիս, տղաներ՝ իմ ավագ եղբայրներ, անպայման հիշելու եմ ձեզ, դուք «կքայլեք» ինձ հետ…

Մեր Հայոց բանակն ու ես հասակակիցներ ենք:

Զինվոր Դավիթ Խաչատրյան
30.03..2012թ.

Փառք ու համբերություն մեր անհայտ կորած զինվորներին, որ չխնայելով իրենց՝ պաշտպանում էին հողը հայրենի: Ես խոնարհվում եմ բոլոր զոհված եւ անհայտ կորած զինծառայողների առջեւ: Նայելով ԱԿԱՀՄ հուաթանգարանի այս նկարներին, հասկանում եմ, թե որքան զոհեր ենք ունեցել, նրանց թափած արյունն ու ջանքերն իզուր չեն անցել…

Ես եկել եմ Վանաձորից, սովորում եմ հարազատ քաղաքի պետական բժշկական քոլեջում: Իսկ ծնվել եմ Շուշիի ազատագրման օրը: Շուշին էլ է ինձ հարազատ՝ Վանաձորիս նման: Ձեր հիշատակն անմեռ կմնա, հարազատներից հեռու ծերացո՜ղ տղաներ…

Զինվորի քույր՝ Լիլիթ Խաչատրյան
08.05.2012թ.

Ամեն անգամ այցելելով ԱԿԱՀՄ թանգարան, սրտիս խորքում ասես վերապրում եմ մեր անհայտ կորած ազատամարտիկների ճակատագիրը, նրանց՝ ովքեր մինչեւ այսօր դաժան հեռուներում են…

Հավատացած եմ, որ կգա մի օր, երբ Արցախը կճանաչվի որպես ինքնիշխան պետություն, եւ մեր մարտական ընկերների հետ միասին կտոնենք այդ վերջնական հաղթանակը:

Թաղավարդի ազատամարտիկների անունից խորը երախտագիտություն եմ հայտնում տիկին Վերա Գրիգորյանին՝ թանգարանի ստեղծման գործում ունեցած աննախադեպ ավանդի համար:

Նախկին ազատամարտիկներ՝
Բաղասյան Ռ.Ն.
Շահնազարյան Վ.Բ.
Միրզոյան Ա.Ա.
Մարգարյան Կ.Բ.
03.04.2012թ.

April 18th, 2012

Even though I don't understand everything explained to me, the museum is a moving experience, and the boss, Vera, certainly does her best to inform me. Also received a "missing people - calendar" as a gift. Merci!

/Björn Lohse, Sweden

Այսօր մենք՝ Գառնաքարի հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվը եւ աշակերտներն, այցելեցինք ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Երեխաներն, իրենց մատաղ տարիքին չնայած, խորապես տպավորվեցին տեսածով:

Մենք ապրում ենք Արցախում՝ անզուգական գեղեցկու-

թյամբ մեր փոքրիկ երկրամասում, ուր ամեն ինչ մաքուր է եւ անմեղ, ու միայն պատերազմն է, որ խաթարում էր այդ գեղեցկությունը: Հաղթեցինք մեր տղաների կամքի ու բազկի շնորհիվ: Մենք՝ հետպատերազմյա Արցախի սերունդներս, կծաղկեցնենք մեր երկիրը: Այսօր շատ հուզվեցինք՝ տեսնելով անհայտ կորածների թողած սուրբ մասունքները:

Թող այլեւս պատերազմ չլինի, չլինեն անհայտ կորածներ, աշխարհում հաղթի միայն բարին:

Գառնաքարի հիմնական դպրոցի
մանկավարժական եւ
աշակերտական կոլեկտիվներ
9.04.2012թ.

Խնածախի՝ զոհված ազատամարտիկ Արմեն Ավագյանի անվան միջնակարգ դպրոցի «Արծվիկ» ռազմամարզական թիմն այցելելով ԼՂՀ Անհայտ կորածների հուշաթանգարան՝ գլուխ է խոնարհում նրանց նկարների, մասունքների եւ հիշատակի առջեւ:

Մենք ասում ենք՝ փառք ու պատիվ ձեզ, մեր կորած եղբայրներ ու հայրեր, դուք ձեր արյան ու ազատության, շատերդ նաեւ կյանքի, գնով ստեղծեցիք մեր ազատ Այսօրը: Մենք՝ արծվիկներս, կշարունակենք ձեր գործը՝ հարկ եղած պահին պաշտպանել հայրենիքը, մեր հարազատ Արցախը: Շնորհակալություն ձեր ծնողներին, որ ձեզ նման հերոսներ են ծնել:

Խնածախի միջն. դպրոցի զինղեկ Բարսեղյան
մանկական կազմակերպիչ Բարխուդարյան
աշակերտուհի Միրզոյան
աշակերտ Բաբայանյան
19.04.2012թ.


19.04.2012
C'est avec beaucoup d'émotion que nous avons visité ce musée et rencontré les anciens combattants. Nous souhaitons beaucoup de courage et d'espoir pour le Haut Karabagh.
Laurence Berberian (France)

Ամեն անգամ, երբ ոտք եմ դնում ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, համակվում եմ ցավի ու ափսոսանքի, սիրո եւ անհուն կարոտի, ուրախության եւ հպարտության զգացումներով:

Թերթում եմ յուրահատուկ ալբոմները, մեր դյուցազունների անձնական իրերը, հայացքս հառում նրանց խոսուն նկարներին եւ ակամայից շշնջում. «Ի՜նչ տղաների ենք կորցրել… Ո՜ւր էր թե նրանց ծնողները, հարազատներն այսքա՜ն երկար չսպասեին, Սպասման մոմի փոխարեն նրանց Վերադարձի՜ արդար մոմը վառեին… Սպասում ենք, այո, բոլորս: Թախծում ենք - արտասվում - հպարտանում - մխիթարվում: Մխիթարվում նրանով, որ նրանք Անհայտ կորել են ազգային-ազատագրակա՛ն պայքարի ճանապարհին, հող-հայրենիի՛ համար մղված ահեղ մարտերում՝ զենքը ձեռքներին, հայացքները հառած Արցախ աշխարհի բարձր լեռներին: Փա՜ռք ու պատիվ նրանց՝ մեր տղաներին: Փա՜ռք ու պատիվ նրանց հերոս մայրերին էլ՝ որ այսքան տարիներ դիմակայել ու դիմակայում են կորստի ցավին, տառապանքին:

Հարգանք ու պատիվ՝ հուշաթանգարանի տնօրեն Վերա Գրիգորյանին, որի նվիրական ջանքերի, պրպտուն մտքի ու

խելքի եւ, որ ամենակարեւորն է՝ հոգատար ձեռքի ու գորովանքի շնորհիվ թանգարանը դարձավ սրբատեղի, որտեղ ամե՜ն-ամեն ինչ պատմում է հայ զինվորի հերոսական վարի ու արարքի մասին:Տիկին Վերայի ամենակարող ձեռքի տակ շունչ ու կենդանություն են առել թանգարանի բոլոր նմուշները: Տղաների լուսանկարներն այցելուին մեկ բան են ասում. «Տառապում ենք, այո, թուրքի զնդանում, շա՜տ-շա՜տ ենք հեռու ձեզանից, բայց հոգով ու սրտով ձեզ հե՛տ ենք՝ մեր օջախներում, մեր Արցախում»:

Միքայել Բալյան
Արցախի 20-րդ դարի լավագույն մանկավարժ
գ. Մեծ Թաղեր
20.04.2012թ.

Մարմնովս սարսուռ անցավ, երբ մտա թանգարան: Նույն զգացումն ինձ համակում է, երբ եկեղեցի եմ մտնում: Սա էլ է սրբավայր, այո:

Ներս մտա, եւ ինձ թվաց, թե նրանք ողջ են՝ մեր զինվոր մարտիրոսները: Այստեղ պահվում են նրանց սուրբ մասունքները: Նկարներից մեզ նայող աչքերն այնքա՜ն խոսուն են: Խորհրդավոր. լռության մեջ ասվող շատ բառեր կան…

Ձեզ, տիկին Վերա, անձնվեր ու հայրենասիրական գործի համար՝ շնորհակալություն:

Ստեփանակերտի հ.8 դպրոցի
հայոց լեզվի եւ գրականության
ուսուցչուհի Լիանա Ներսիսյան
23.04.2012թ.

Նորից այս թանգարանում եմ ու չեմ կարողանում հայացքս պոկել յուրաքանչյուր դիմանկարից, ուզում եմ կռահել, թե այս պահին ինչ են մտածում նրանք՝ եթե դեռ կենդանի են, թե ար-

դեն ում է «լքել» անկատար մնացած երազանքը՝ Հայրենիքը տեսնել լիովին ազատագրված…

Թող ձեր հոգիները հանգիստ լինեն, սիրելիներս, վաղուց է իրականացել ձեր ու մեր իղձը՝ Արցախն ազատ է եւ անկախ: Մենք գլուխ ենք խոնարհում ձեր հիշատակի առջեւ:

Շնորհակալություն Վ.Գրիգորյանին՝ նման թանգարան ստեղծելու մեծ գործի ձեռնարկման եւ այն ի կատար ածելու համար:

Ստեփանակերտի հ.8 ավագ դպրոցի
հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի
23.04.2012թ.

Այս թանգարանն անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը վառ պահող սրբավայր է, որտեղ յուրաքանչյուրը խոնարհումով պետք է մտնի: Արժանի գնահատականն է այն նվիրյալների, որոնք ոչինչ չխնայեցին հայրենիքի պաշտպանության ու ազատագրման համար:

Փառք ու պատիվ մեր կորուսյալ ազատամարտիկներին:

Հույսով ու կարոտով սպասում ենք նրանց:

Ստեփանակերտի քաղաքապետարանի
կրթության բաժնի գլխավոր մասնագետ
Գ. Գրիգորյան

26-04-2012

The museum is an important part of Karabach, the lady's are great and loving. I hope they continue their mission to ask attention for the missing soldiers of Karabach

SPASIBA! thank you Mitra from Holland Utrecht

Տպավորությունները թանգարանից շա՜տ խորն են… Կցանկանայինք ինչ-որ բանով նպաստել մեր անկախության համար մարտերում անհայտ կորած զինվորների գտնվելուն, բայց, ավա՝ղ, ինչո՞վ: Նրանց հարազատներին ասում ենք՝ ձեզ հույս ու հավա՛տ, նրանք կվերադառնան…

Թաղավարդի միջնակարգ դպրոցի
12-րդ դասարան
26.04.2012թ.

Մենք՝ Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի 12 Հ-1 դասարանը, շատ տպավորված ենք այստեղ տեսած-լսածով: Մենք կիսում ենք ձեր վիշտը, հարազատներ եւ հավատում անհայտ կորածների վերադարձին:

27.04.2012թ.

Անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում անբացատրելի զգացողություն ես ունենում: Ինչո՞ւ խեղվեց այս հայորդիների ճակատագիրը: Ինչո՞ւ նրանց համար կիսատ մնաց ամեն ինչ… Հուսով ենք, որ մի օր կհայտնվեն նրանք անհայտությունից՝ հարազատներին նվիրելով սրտի բերկրանք:

Սպասե՛նք նրանց:

Իրինա Սարինյան
Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի
12-րդ հ-1 դասարանի դասղեկ,
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ
27.04.2012թ.

Անկեղծ կլինեմ. Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան իմ այցելությունը կապված է դիպլոմային աշխատանքիս հետ… Եկա ու հիմա զգում եմ, որ մինչ այս պահն իմ հոգուն ինչ-որ բան պակասում էր… Բառերն, ըստ իս, անզոր են արցունքն աչքերին, հավատը սրտում հեռուներում տառապող իր զինվոր որդուն սպասող մորը մխիթարելու համար:

Ես այս պահին միայն մի բան եմ խնդրում Աստծուց, որ սպասող բոլոր մայրերի հույսերն արդարանան՝ նրանց զավակները տուն վերադառնան:

Տաթեւ Հակոբջանյան
02.05.2012թ.

Այսօր իմ սաների՝ Ստեփանակերտի հ.1 հիմն. դպրոցի 3-րդ բ դասարանի աշակերտների, հետ այցելեցի ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան:

Երեխաները, թեկուզ փոքր, տպավորվոցին իրենց տեսածով ու լսածով: Դահլիճում անցկացրինք փոքրիկ միջոցառում՝ մեր հարգանքի տուրքը մատուցեցինք բոլոր զոհվածներին եւ անհայտ կորածներին: Մեր պարտքն է հիշել նրանց, խոնարհվել հիշատակի առջեւ:

Գայանե Գեւորգյան
03.05.2012թ.

Այս թանգարանում անբացատրելի, բառերով անարտահայտելի զգացում ես ունենում: Հիշել, հիշե՛լ նրանց, սպասել ողջերին, մտովի խնկարկել տառապելուց նահատակվածների համար… Մենք հայ ենք եւ պիտի դիմանանք ամեն ինչի, չհանդուրժենք այլեւս բռնություն ու հալածանք:

Տարոն Պետրոսյան
03.05.2012թ.

Նայում եմ նրանց նկարներին եւ հասկանում, որ պարտավոր ենք հիշել բոլորին: Բոլոր նրանց, ում տրված չէր մարտադաշտից տուն վերադառնալ… Ում շնորհիվ հիմա անկախ ենք:

Պահե՛նք հայրենիքը:

Ե.Գեւորգ
03.05.2012թ.

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության ստեղծման վկան եմ, հետեւել եմ կազմակերպության դեգերումներին, ուրախացել կայացմամբ, իսկ այսօր տեսնելով հուշաթանգարանը, լցվել եմ հպարտությամբ ու տոգորվել մեր որդեկորույս մայրերի անկոտրում ոգով:

Երանի՜ այն օրվան, երբ դուք կազատվեք ՍՊԱՍՈՒՄ-ի գերությունից եւ Ձեր ցավածեծ հոգին կլուսավորվի բարի լուրերով:

Իսկ մինչ ա՞յդ գլուխդ բարձր, Արցախամայր, հայացքդ՝ Քիրսին ու Մռովին հավասար, դու իրավունք չունես վհատվելու, քո զավակին փնտրիր մեր երկրի Ազատության ու Անկախության մեջ, այսօրվա խաղաղ օրվա ու մեր մանուկների ծիծաղի մեջ: Համոզված եմ, վաղվա լուսավոր օրն էլ կգա:

Կարինե Ալավերդյան
Լրագրող, թարգմանչուհի
04.05.2012թ.

Այստեղ զգացածս ցավն ու տպավորությունները ինձ կուղեկցեն երկար ժամանակ: Փա՜ռք ու պատիվ մեր բոլոր հերոսներին: Տա Աստված՝ անհայտ կորածները հրաշքով ազատագրվեն, տուն վերադառնան:

Արմինե Ենգիբարյան
ք.Կապան
04.05.2012թ.

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հուշամատյանում գրանցում եմ իմ եւ 10-րդ դասարանի աշակերտների ցանկությունը. թող այս տողաները, տանջված ու վիրավոր, տուն վերադառնան:

Հույսով ու հավատով սպասում ենք նրանց:

Դիանա Պետրոսյան
Խնածախի միջն.դպրոցի
պատմության ուսուցչուհի
04.05.2012թ.

Նայում ենք լուսանկարներին ու ցավ ապրում: Այսքա՜ն որդիներ Արցախ աշխարհի ում ճակատագրերը հայտնի չեն: Հոգու մի հեռավոր անկյունում հույս ենք փայփայում, որ նրանք անպայման կգտնվեն..

Շնորհակալություն թանգարանն ստեղծողներին:

Խնածախի միջնակարգ դպրոցի
11-րդ դասարանի աշակերտներ
04.05.2012թ.

Rencontre inattendue et très intéressante dans ces lieux à quelques jours de la célébration des 20 ans de la création de votre état. L'un de mon ami photographe était à vos côtés en 2002 et je me joins à lui pour, 20 ans plus tard, vous souhaiter l'avenir le plus prospère que vous puissiez désirer.

Sincèrement,

J-Rémi Agué Mayol

Beautiful, moving museum. Built on a grieving mother's motivation for closure. Very hospitable and gracious. RIP Karabak fighters.

sincerely,

D. Peleschuk

Հուսով եմ՝ կվերադառնաք…

Ժ. Գասպարյան
11.05.2012թ.

Dieses Museum ist ein beispielhafter Ort für alle Mütter der Welt, die ihre Kinder in Kriegen verloren haben. Ich freue mich, dass hier ein Raum ist, in dem Mütter beider Seiten trauern dürfen. Ich hoffe, dass die Töchter und Söhne dieses Landes mit allen Völkern in Frieden leben werden.

Stefanie F. 11. 5. 2012


¡MADRE MÍA! Vera debe de ser una persona con un sentido de la responsabilidad por su gente enorme. Gran reconciliadora y con una actitud superpositiva a pesar de la abrumadora circunstancia en la que los hechos de su vida tomaron lugar. Hip Hip hurra por una luchadora de la paz.
Vera, vales la pena.
MARTÍN ARCE from SPAIN / GALICIA 11.5.2012

Ուզում եմ այստեղ թողնել անունս ու դասարանիս անունը եւ ասել, որ սպասում ենք անհայտ կորածների տունդարձին:

Բ. Մարիանա
եւ Ստեփանակերտի հ.2 դպրոցի
9-րդ դասարան

Թեեւ նրանց կոչում են անհայտ կորածներ, բայց մեր սրտերում նրանք հայտնի են եւ անմոռաց: Հիշատակը նրանց վառ կմնա:

Այստեղ տեսնելով ծնկի իջած մոր պատկերը, ով ձեռքերը երկինք հառած՝ աղոթում է Աստծուն՝ որդուն տուն վերադարձնելու համար, ինքդ էլ ես ուզում միանալ նրան…

Խոստանում ենք, որ վառ կպահենք նրանց հիշատակը:

Ա. Ղուլյանի անվան
հ.2 հիմն. դպրոցի 9-րդ ա դասարան
16.05.2012թ.

Այսօր հ.2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի կոլեկտիվը եղավ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշթանգարանում: Տպավորությունն անբացատրելի է… Հուզմունք՝

եւ կարեկցություն նրանց ապասող հարազատներին:

Որքա՜ն աշխատանք կա կատարված այս սրբավայրում- Տա Աստված, որ տղաները վերադառնան հարազատ օջախ:

Տիկին Գրիգորյանը մեզ ներկայացրեց թանգարանի ստեղծման պատմությունը, նվիրեց «Սպասում» օրացույցը: Աշակերտների համար սա արիության դաս էր…

Դաղեկ Լ.Մելքումյան
15.05.2012թ.

Լինելով այստեղ, ծանոթանալով թանգարանի ցուցադրանքին, ինքս ինձ ասացի՝ թեեւ նրանք ֆիզիկապես չկան մեր կողքին, բայց կա՛ն մեր սրտերում եւ հիշողության մեջ, ու քանի գոյություն կունենա Հայը՝ կպահվի եւ անհայտ կորած Ազատամարտիկի հիշատակը:

Թող առաջիկայում նրանց կենսագրության մեջ բացվի նոր էջ՝ էջը տունդարձի…

Ռոբերտ.Հակոբյան
82396 զ/մ ս-նտ 17.05.2012թ.

Թիվ 38401 զորամասի սերժանտական խորհրդի եւ վաշտերի ենթախորհրդի նախագահներն անչափ տպավորվեցին թանգարանով եւ տիկին Վ.Գրիգորյանի պատմածով:

Անհայտ կորածների հարազատներին՝ համբերություն:

38401 զ/մ սերժանտական
խորհրդի նախագահ
ավ.ս-տ Ս.Մ. Հովհաննիսյան
17.05.2012թ.

47455 զ/մ սերժանտական անձնակազմի անունից շնորհակալություն ենք հայտնում թանգարանի տնօրինությանը:

Ա. Մկրտչյան
Վ. Կնյազյան
Ա. Ավետիսյան
Յ. Ղազարյան
17.05.2012թ.

Տպավորություններս թանգարանի մասին անպատմելի են: Համբերություն եւ հավատ՝բանտերում տառապողներին ու նրանց սպասող հարազատներին:

Հ. Սարդարյան
17.05.2012թ.

Շնորհակալություն եմ հայտնում ձեզ՝ մեր անհայտ կորածների եւ զոհվածների հիշատակը վառ պահողներիդ:Համբերություն ձեզ:

10ԼՀՅ
17.05.2012թ.

81 ԱՀԳմ-ի ողջ անձնակազմի անունից գլուխ ենք խոնարհում բոլոր անհայտ կորած տղաների առաջ:

Թիվ 37447 ՁԱՀ ՀԱՀԳԱԳՀ
մայոր Կարապետյան
17.05.2012թ.

Պատկերացնում եմ ձեր՝ որդեկորույս մայրերի, սպասման ծանրությունը… Համբերեք, գուցե մի օր կբացվի լույս տղաների ու ձեզ համար:

Կրտսեր սերժանտ Մարտիրոսյան
17.05.2012թ.

Շնորհակալություն՝ անհայտ կորած մեր ազատամարտիկների հիշատակը պահելու ջանքերի համար, որի վառ ապացույցներից մեկն էլ այս թանգարանն է:

Խոստանում եմ այդ գաղափարը փոխանցել իմ աշակերտներին:

Նարինե Սարգսյան
3-րդ դասարանի դասվար
19.05.2012թ.

Գոհ եմ, որ այցելել եմ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Այս օրը կհիշեմ միշտ եւ՝ աղոթեմ նրանց վերադարձի համար:

Մարիամ Սարգսյան
հ.1 դպրոցի 3-րդ և դասարանի աշակերտուհի՝
19.05.2012թ.

Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանն այցելեցինք՝ աշակերտներին պատմելու մինչ թշնամու ճանկն ընկնելը նրանց անցած ուղու, կատարած սխրանքների մասին:

Թեկուզ 4-րդ դասարանցիները փոքր են, բայց տպավորվեցին տեսածով ու լսածով:

Տիկին Գրիգորյանը նրանց ծանոթացրեց ցուցանմուշների հետ, հետաքրքիր դեպքեր ու փաստեր ներկայացրեց տղաների մարտական եւ ընդհանուր կենսագրությունից:

Շնորհակալություն՝ նրանց հիշատակը վառ պահելու համար:

Էմմա Իսնունց
հ.7 հիմն. դպրոցի
4-րդ գ դասարանի դասվար

Այսօր այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հուշթանգարան:

Շնորհակալություն նրա տնօրենին՝ այն ստեղծելու եւ մեր հանդիպմանը տղաների մասին պատմածի համար: Երեխաներին մատչելի լեզվով բացատրեց մեր պայքարի եւ տարած հաղթանակի իմաստն ու նշանակությունը, հայրենիքին անմնացորդ ծառայելու գաղափարի կարեւորությունը: Երեխաները շատ տպավորվեցին տեսած-լսածով:

Ա.Աբալյան
հ.7 հիմն. դպրոցի 4-րդ դասարանի դասվար՝
19.05.2012թ.

Առաջին անգամն եմ Արցախում: Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանով հիացած եմ: Ամեն ինչ անել է պետք նահատակվածների հիշատակի եւ ողջերի վերադարձի համար...

Մովսես Մազմանյան
ք.Երեւան
19.05.2012թ.

Ցավոք, առաջին անգամն եմ թանգարանում, բայց եկել եմ որդուս հետ: «Քար էի կտրել տեսնելով տղաների դիմանկարները: Մեկը-մյուսից ջահել, մեկը-մյուսից գեղեցիկ, հայացքներում՝ կամք ու վճռականություն: Այդպիսիները, մտածում ես, միայն ծանր վիրավոր, անգիտակից վիճակում կարող են գերվել: Որքա՜ն տխուր ճակատագիր է բաժին ընկել նրանց… Մենք էլ ենք ծանոթ տղաների կորցրել ու գիտենք, թե ինչ է նման պարագայում սպասելը: Հիշում ենք, նրանց

մասին պատմում մեր երեխաներին ու երազում, որ պատերազմ… միայն կինո- կամ հեռուստաէկրանի վրա տեսնեն:

Արեւիկ Ավագիմյան
ք.Ստեփանակերտ
20.05.2012թ.

Ի՞նչ անի մայրն այն, ում որդին չկա,
Որտեղ լինելու հասցեն էլ չկա
Բայց հուսահատ չէ, Տեր Աստված վկա,
Մայրական սիրտը զգում է՝ կգա…

Անհայտ զինվորի արիասիրտ մայրեր,
Հույսով սպասեք՝ եւ նրանք կգան,
Հանեք սեւերը, անուշ քույրիկներ
հավատով լցվեք՝ եւ նրանք կգան:
Անհայտ զինվորի սիրելի կանայք,
Ձեր սրտի ձայնին ասացեք, կգան,
Անհայտ զինվորի հրաշք զավակներ,
Հավատով լցվեք՝ նրանք ետ կգան:

Կգան, որ ապրի մայրը տառապած,
Կգան, որ քրոջ աչքերը ժպտան,
Կգան, որ որդիք առնականանան,
Սիրելի կանայք կրկին մայրանան:

Աղոթում ենք, Տե՛ր, հույս ու հավատով,
Փշրիր կապանքը թուրքի զնդանի,
Մեր անմեղ որդոցն այնտեղից հանիր:

Անահիտ Դանիելյան
«Աշխարհի հայեր» գիտա-պատմամշակութային,
բարեգործական հասարակական
կազմակերպության նախագահ
20.05.2012թ.

Թող բոլոր մայրերի սպասումներն իրականություն դառնան, թող ականներ չպայթեն, Արցախ աշխարհը թող այլեւս արցունք չթափի:

Մարտունու շրջանի
Սպիտակաշենի միջն.դպրոց
22.05.2012թ.

Փառք ու պատիվ մեր մարտունակ հայ ժողովրդին: Խոնարհվում ենք զոհվածների եւ անհայտ կոչածների հիշատակին:

Դ. Թիրպէնտեսեան
Սեդա Պոյաճեան
Ամերիկա
23.05.2012թ.

Մտնելով Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, ցավ զգացի. հուզվեցի այս տղաների նկարները դիտելով, նրանցից որմանց կենսագրական տվյալներին ծանոթանալով: Մի կողմից էլ լցվեցի հպարտության զգացմամբ: Իմ հայ ազգի նվիրյալ ու տառապյալ այս պաշտպաններին բարի վերադարձ Հայրենիք, հարազատ օջախ…Թող Աստված լսի մեր ձայնը:

Համեստ Մովսիսյան
ք.Երեւան
23.05.2012թ.

Дорогого стоит посещение сего музея. Я уроженец Нагорного Карабаха. Окончил в г.Степанакерте шк.3 в 1952г.Периехал с правнуком, чтобы он понял, что “карабахец” звучит гордо.

Музей бесподобен, его оформление и содержание говорят о беспримерном подвиге моего народа.Такие музеи помогают молодому поколению вырасти патриотами.

Память о героях вечно будет храниться в сердцах народа.Мы благодарим хранительницу музея и всех тех, кто помогает хранить память.

Спасибо всем!

Мкртычев Константин-старший
Мкртычев Константин- младший
23.05.2012г.

Каждый армянин считает своим долгом посетить этот музей памяти...

Стало традицией посещение этого святого места, ежегодно в день последнего звонка мы приходим сяда с учениками, чтобы заявить, что мы помним вас, каждого из вас, ваше дело продолжается...

Спасибо всем за чистое небо над нашими головами, за смех детей, за весну и лето, за радость жизни, за все-все, что вы отдали свое нам-живущим.

Мы верим, что вы вернетесь. Где бы вы ни были, храни вас Господь.

Учитель русского языка шк. 2
Григорян Н.

Thankyou for allowing me the opportunity to come to your country and learn about the struggles and issues pertaining to Nagorno-Karabakh. The people here are very beautiful. I hope you get peace in our time.

Phillip O'Neill Australia

Laura Delzotto USA Texas

In honour of heroes and heroines who hold frontlines of faith and freedom and with especial prayers for those whose sacrifice is unknown. They will never be forgotten and those who love them will always remain in our hearts.

Caroline Cox May 31st 2012.

Հաջողություն ձեր բարի աշխատանքին, մաղթում եմ հավատ ու ու կորով: Հարուստ տպավորություններով ենք հեռանում թանգարանից: Հուսանք, որ արդար լուծում կտրվի Արցախի անկախության ճանաչմանը, տեղում պահենք մեր հույսն առ տղաների վերադարձը …

Արգիշտի Թովմասեան
04.06.2012թ.

Մենք հպարտանում ենք ձեզնով: Միշտ կմնաք մեր սրտերում:

Հաջողություն ձեզ եւ համբերություն:

Վարանդ Գավաֆեան
04.06.2012թ.

Մենք՝ Ն. զորամասի նորակոչիկներս, այցելեցինք այս թանգարանը, ծանոթացանք Արցախի պատմության մեջ վերջին պատերազմում /հուսանք, որ վերջին էլ կմնա/ անհայտ կորած ազատամարտիկների մասին պատմող ցուցանմուշներին:Պետք է լինենք միշտ զգոն եւ ուժեղ, հասնենք մեր նպատակներին:

Կապիտան Աղաջանյան
09.06.2012թ.

77 ԱՄՆԳ-ի անձնակազմը բարձր է պահում հայրենասիրական ոգին ու հաղթանակի ձեռքբերման մարտերում զոհված ու անհայտ կորած զինվորականների հիշատակը: Պատրաստ ենք եղածին գումարելու նորը, թույլ չտալ, որ հակառակորդը տիրանա մեր հողի մեկ թիզին անգամ:

Մայոր /ստորագրություն/
12.06.2012թ.

Փառք ու պատիվ մեր ավագ ընկերներին՝ ողջ թե նահատակված, նեեւրկա թե բացակա: Պատրաստ ենք շարունակելու նրանց գործը:

Շարքային Ղազարյան Գեւորգ
12.06.2012թ.

Մենք՝ 46492 զորամասի նորակոչիկներս, այսօր այցելեցինք ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Նկարներից, մասունքներից, պատմություններից շատ բան իմացանք մեր քաջ տղաների մասին:

Շարքային Ա.Սահակյան,
ավագ լեյտենանտ. Էդուարդ Գրիգորյան
12.06.2012թ.

Ես եկել եմ Ուկրաինայի Կիեւ քաղաքից: Մեծ տպավորություն ստացա թանգարանից եւ ընդհանրապես Արցախից, շատ բան ունեմ պատմելու Կիեւի հայ համայնքին…

Կարծում եմ՝ ամեն հայ գոնե մեկ անգամ պետք է տեսնի Արցախն՝ անկախություն ձեռք բերելուց հետո:Եվ անպայման պետք է ակտիվ մասնակցություն ունենա նրա բարգավաճմանը:

Անդրանիկ Աղվանյան
13.06.2012թ.

Հերթական այցը կատարեցինք Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան ու նորից վերապրեցինք տղաներին կորցնելու ցավն ու ափսոսանքը… Հույս ենք փայփայում, որ այլեւս պատերազմ չի լինի, որպեսզի չլինեն եւ կորուստներ: Տիկին Վերայի ու իր գործընկերների ստեղծած թանգարանը մեր արժանավոր բացականերին չմոռանալու սրբավայր է, հուսանք, որ մի գեղեցիկ օր կվայելենք նրանց վերադարձի բերկրանքը:

«Արմավիրի Արծիվ 13»,«Զեյթուն»,«Արաբո»
ջոկատների անհայտ կորած ազատամարտիկների
հարազատների անունից՝
ՀՀ ԱԿԱՀՄ նախագահ
Ռ.Առաքելյան
19.06.2012թ.

17 տարի է՝ ապրում եմ Հայաստանում, բայց առաջին անգամ է բախտ վիճակվել լինել Արցախում: Ու հիմա պիտի ասեմ, որ ցանկացած հայ գոնե մեկ անգամ պետք է լինի մեր հայրենիքի այս չքնաղ կտորում: Խորապես տպավորված եմ Արցախով ու արցախցիներով եւ այս թանգարանով: Սրբավայրի ուժ ունեցող թանգարանով:

Արամ Դավուդյան
21.06.2012թ.

Շնորհակալություն Արցախի հերոսական ու պանծալի ոգուն մեզ մեկ անգամ եւս հաղորդակցելու համար: Լինելով այս հրաշք օջախում, լցվում ես հերոսական եռանդով, որը մեր հաղթական ճանապարհի ամենապայծառ փարոսն է եղել: Հպարտ եմ, որ ես էլ մի մասնիկն եմ այնպիսի մի երկրի, որտեղ հաղթանակած քաջերի ոգին զգում ես քո երակներում…

Մարիանե Մանուկյան
ՀՅԴ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
21.06.2012թ.

Հպարտ եմ, որ ապրում եմ Հայաստանում եւ ինձ զգում եմ պաշտպանված: Այդ զգացումը մեզ՝ երիտասարդներիս պարգեւել են Արցախյան ազատամարտի հերոսները՝ ողջ, զոհված եւ անհայտ կորած…

Նարե Մուրադյան
24.06.2012թ.

Մտնելով անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, որտեղ հոպարիս՝ Կարոտ Մկրտչյանի անվան գրադարանն է, ես ավելի պատասխանատվություն զգացի հայրենիքիս հանդեպ, լինել նվիրված հայրենյաց պաշտպան:

Մկրտչյան Մովսես
Կարոտ Մկրտչյանի եղբոր՝
Ղուկասի զավակ
24.06.2012թ.

Մտամրմունջ աղոթքով հայցում եմ Ամենակատար Աստծուց՝ իր մեծ ողորմությունը բաշխի մեր ազգի բոլոր զավակներին՝ հայտնիաց եւ անհայտաց, կենդանվոց եւ հանգուցելոց:

5-րդ պաշտպանական շրջանի
ՀՄ հոգեւոր սպասավոր
Գավրուշ սարկավագ Ասատրյան
26.06.2012թ.

Մենք մեզ պարտավորված ենք զգում յուրաքանչյուր տարի այցելել ու մեկ անգամ եւս պատվել Անհայտ կորածներին, գլուխ խոնարհել նրանց ծնողներին:

Ժորժետա Մեսրոպյան
«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
ք.Երեւան
29.06.2012թ.

Կրկին իմ ազատ Արցախում եմ ու կրկին՝ այս հուշաթանգարանում:Առաջ մտնում էի հպարտությամբ, բայց նաեւ հոգու կսկիծով: Սակայն այսօր եւ հպարտ եմ, եւ հոգիս է խա-

ղաղված: Նրանց ազատագրած պատմական աշխարհն այսօր ապահով ձեռքերում է: Այս հերոսների ժառանգներն են պահում Հայրենիքի սահմանները, վաղը՝ նրանց թոռները:

Փա՜ռք տղաներին, փառք իմ ազգին:

Աննա Գրիգորյան
«Երիտասարդության կամք» ՀԿ նախագահ
29.06.2012թ.

Շնորհակալություն Վերա Գրիգորյանին՝ այս հուշաթանգարանի գլխավոր կերտողին: Հուշաթանգարանը ներկա եւ ապագա սերունդների համար հայրենասիրության հսկայական դպրոց է, ոգեշնչման աղբյուր:

Ռոբերտ Բաբայան
պատմաբան
29.06.2012թ.

Ամեն անգամ այս օրը վերապրում եմ պատերազմը, անցած արհավիրքները:Մեկ ակնթարթով աչքիս առաջն են գալիս մարտական ընկերներիս երիտասարդ ու խրոխտ կերպարները …

Ծխում եմ լուռ, ծխու՜մ, ծխում՝
Սիրտս տված ծխախոտին,
Ու ծխի հետ կապտաերազ
Փաթաթվում եմ ձեր կարոտին:

Ասյա Բարխուդարյան
«Անմար կրակներ» ՀԿ նախագահ,
Նախկին ազատամարտիկ
29.06.2012թ.

Թանգարան եկանք մեր գնդապետ Գ.Սահակյանի հետ: Տպավորությունս շատ խորն է: Մինչեւ հիմա թե փոքր-ինչ երկմտանք ունեի ծառայության հարցում, այժմ արդեն վստահ եմ, որ հաղթահարելու եմ ամեն դժվարություն: Ոգեւորությամբ կծառայեմ հայրենիքիս՝ Հայաստանի Հանրապետությանը:

Շարքային Ք. Մարտիրոսյան
04.07.2012թ.

Ցավով ու ափսոսանքով ծանոթացանք անհայտ կորած մեր զինվոր տղաների ճակատագրերին… Որինը շարունակվում է, որինը՝ ավա՜ղ: Տուն՝ Չարենցավան եմ վերադառնում հույսով՝ թե օրերից մի օր կենդանի մնացածները կբռնեն տունդարձի ճամփան:

Գ.Զաքարյան
06.07.2012թ.

Առաջին անգամ եմ Արցախում, եւ առաջին այցելությունս «Անհայտ կորածների» թանգարանն էր:Շատ տպավորված եմ , անձամբ չեմ տեսել Արցախի գոյամարտը, բայց այն զգացի՝ թանգարանում… Համոզվեցի, որ Արցախը մերն է եւ միշտ էլ մերն է լինելու՝ քանի դեռ ունենք եւ կունենանք արցախցի հայրենասերներ:

Ք.Աբովյանից
10.07.2012թ.

Առաջին անգամ եղա Անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում եւ ցնցված եմ. այս ի՜նչ տառապանքներով է ձեռք բերված մեր հաղթանակը… Հանցագործ ու դավաճան կլինի նա, ում ուղեղի մեկ բջիջն անգամ կաշխատի ազատագրված տարածքների հանձնման ուղղությամբ: Այսքան զոհերից հետո ինչպե՞ս կարելի է մտածել այդ մասին:

Հավերժ փա՜ռք զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկներին եւ համբերություն նրանց հարազատներին: Ձեր գործն անմահ է, սիրելիներս:

Ռ. Ադամյան
Երեւան քաղաքի հ.48 դպրոցի
հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի
13.07.2012թ.

Ամեն անգամ թանգարան մտնելով ու տեսնելով տղաների նկարները, բարեւում եմ նրանց… Թող Աստծո հաջողությամբ տուն վերադառնան, տեսնեն ազատագրված ու վերաշինվող Արցախը:

Վաղարշակ Գրիգորյան
Հայրենական մեծ պատերազմի
2-րդ կարգի հաշմանդամ
13.07.2012թ.

Heel indrukwekkend museum over de oorlog
Vriendelijke museum directrice die de Engelse
taal prima beheerst. Van o.a. Klaas
gezamenlijk 2000 René Moerman Holland.

Ձեր անվիատ աշխատանքն ապահովում է մեր նահատակ ու անհայտ կորած տղաների հոգեւոր ներկայությունն Արցախում, եղեք միշտ այդպես կորովի:

Ն. Աբրամեան
08.07.2012թ.

18/7/2012
With sincere gratitude for showing us around the museum, which is an impressive tribute to those missing as a result of the war.
Go n-eirí an bóthar leat. Go mbuidh t-ardh leat i do streachailt
Donnacha Ó Beachain (IRELAND) 35

Z całego serca życzę Pani i pozostałym Mamom, Żonom i siostrom Samych dobrych wieści.
Karolina Stefańska, POLSKA 18.07.2012

Առաջին անգամ ազատ Արցախում եմ: Բազում ֆիլմեր էի տեսել, փաստավավերագրական հաղորդումներ նրա մասին,, բայց այս երկու օրը լինելով նրա թանգարաններում՝ պատկերացումներս բազմապատկվեցին: Հպարտ եմ, որ հայ եմ, հպարտ եմ, որ ձեր ավանդի եւ ընդհատված լիարժեք կյանքի շարունակողն եմ, տղաներ: Խոստանում եմ բաձր պահել ձեր հիշատակը:

Պարտական եմ ձեզ, ձեր արյամբ շաղախված այս հողին:Ինչ արյունով եք վերցրել՝ կպահենք սրբորեն:

Հասմիկ Մելիքսեթյան
20.07.2012թ.

Առաջին անգամն ըլլալով՝ ներկայ եղանք Անյայտ հերոսների թանգարանը, շատ հպարտ զգացինք իրենց հավատքին ու զոհողության. որ այսօր Արցախն իրենց պատճառով կայուն կը մնայ:

Մանուկ եւ Սիլվա Պաշըքեիան
Վարուժ եւ Վանիա Գալուստիան
Վարդիվար Յուսիկիան
Մոնրեալ, Գանատա
20 յուլիս 2012



Спасибо вам большое за то, что бережёте светлую память наших погибших и без вести ПроПавших на войне за наш Арцах. Память о них и их подвигах будут вечно жить в наших сердцах. И пусть нас раскидали по всему миру, мы не забываем Родину - наш Карабах.

Л. Арустамян
Из Пятигорска
20.08.2012г.

Տիկին Գրիգորյանը հոգով ու սրտով նվիրված է Արցախին եւ նրա անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը

հավերժացնելու գործին: Տիկին Վերա, քո կատարած աշխատանքը գնահատվելու է: Սա հերոսություն է:

Շահեն Մկրտչյան
պատմական գիտ. դոկտոր,
թանգարանագետ
21.07.2012թ.

Ազգի դժվար ժամանակաշրջանի հիշատակին հայոց աշխարհի այս թանգարան-օջախը լավագույն ապացույցն է մեր ժողովրդի արժանի ապագայի: Ձեր աշխատանքը ոգեշնչում է այցելուներին ու մղում նոր հերոսությունների, խաղաղ կյանքի նոր մարտահրավերների: Խորին շնորհակալություն Ձեր արած աշխատանքի համար:

Երևանի պատմական միջավայրի
ծառայության պետ
Արմեն Մկրտչյան
21.07.2012թ.

Очень сильное впчатление.

Спасибо вам за ваш неоценимый труд. Очень надеемся, что это поможет найти без вести пропавших героев-наших братьев, сестер. Один из них мой брат-Айрапетян Генрих. Очень хочу увидеть его когда-нибудь живым и здоровым.

Леонид, Гайко, Евгения,
Оксана Айрапетяны
Санкт-Петербург
21.07.2012г.

Желаю мира и терпения и дождаться своих детей.

Эвелина Саран
Таллин
Эстония
23.07.2012г.

Արցախ աշխարհի մայրերը ծնել են իսկական կորյուններ, հայրենիքի հերոսներ: Խոնարհվում եմ Վ.Գրիգորյանի առջեւ՝ կատարածի ու մեծ սրտի համար, հայտնում հիացմունքս ու հարգանքս:

Ք. Արմավիր
Էմմա Սարգսյան
25.07.2012թ.

Տիկին Գրիգորյան, Արցախի պես աներեր եք եւ այս թանգարանի պատերի նման ամուր... Մոտիկից գիտեմ Ձեր գործունեության մասին, անգնահատելի աշխատանք եք կատարել, կուզեմ՝ Աստծու աջը միշտ Ձեզ հովանի լինի:

Մարիամ Սպեփանյան
«Սոսե Մայրիկ» բարեգործական հիմնադրամ
25.07.2012թ.


Merci pour cette visite touchante pour une Mère à la recherche de son fils !
25/07/2012 Nicolas Schaller

Un éclairage intéressant sur les evenements de la région
Pierre (FRANCE)


Comme bien des choses les hommes font la guerre, la guerre les dépasse. Reste à jamais les familles et les amis.

Merci pour cette visite. Du courage pour la suite.

Mascence PÉNIGUET

Un musée Touchant et interessant et une mère pleine de courage. Bonne continuation dans vos efforts pour promouvoir la paix et réunir les familles.

olivier BAUMARD

Շատ ենք տպավորված թանգարանով: Նայելով մեր անհայտ կորած ազատամարտիկների նկարներին, մեկ անգամ եւս հասկանում ես, թե ինչպիսի գնով ենք այժմ ապրում Արցախ աշխարհում: Անհայտ կորած բոլոր տղաների հարազատներին ցանկանում եմ հույս, համբերություն եւ հավատ: Փառք ու պատիվ մեր ազատության ու անկախության համար ընկածներին:

Լիանա Աղաջանյան
Խնուշինակ
25.07.2012թ.

Մեր Արցախն ազատագրուած եւ պաշտպանուած է մէկական սուրբերով, ինչպէս Ավոյի եւ բոլոր զինուորների շնորհիվ, այս բոլորով ավելի կը հպարտանանք եւ ինչպես կըսեն՝ հայը կայ, կը մնայ ու միշտ պիտի շատանայ:

Ավո Մնշրեան
Լիբանանահայ երիտասարդներ
30.07.2012թ.


25/07/2012 With my best wishes for a final and fair solution of this conflict. Jordi from Barcelona

Good luck to find your own way - JM - Alicante

With my best wishes for a fast solution for this conflict.
Estesan from Barcelona

My heart goes out to the family's who were affected by this conflict.
I hope peace & salvation can be found now or in the future.
Matt from U.S.A.

Bojan Lakšić, Slovenia
Enrico Galesola, ITALIA

All the best for the peaceful future. Nino from Switzerland

Մասնակցելով անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի ստեղծմանը, մտածում էինք, որ այն ծառայելու է ներկա եւ ապագա սերունդներին՝ հայրենասիրության դասեր է տալու նրանց. ու հիմա, երբ տեսնում ենք այստեղ այցելող մատաղ ու երիտասարդ աղջիկներին ու տղաներին եւ հատկապես զինվորական ստորաբաժանումներին, համոզում ենք, որ իզուր չի եղել մեր չարչարմունքը…

Բոլոր անհայտ կորածների հարազատներին՝ մեր բախտակիցներին, մաղթում եմ համբերություն եւ Աստծո հաջողություն. թող վերադառնան մեր տղաները եւ մյուսների պես մասնակցեն Արցախի շենացմանը:

Անհայտ կորած ազատամարտիկ
Սպարտակ Գրիգորյանի հայր
Շուրա Գրիգորյան
31.07.2012թ.

Քանի դեռ հայոց մայրերը հզոր են եւ կորովի, հայոց աշխարհը կապրի հավիտյան:

Աստծո օրհնությունը թող սփոփի մեր մայրերի սրտերն ու մեր երկիրը:

Հարություն
31.07.2012թ.

Ես էլ եմ մասնակցել հուշաթանգարանի ստեղծմանը, այն ըստ մեր ուզածի, դարձել է յուրօրինակ սրբավայր՝ հիշատակատեղին մեր տղաների… Աստված տա՝ բոլոր անհայտ կորած տղաները վերադառնան, ամեն մեկը մի տան ճրագ էր…

Անհայտ կորած ազատամարտիկ
Անդրանիկ Սարգսյանի մայր
Աղեկսա Սարգսյան
31.07.2012թ.


Great museum! I wish for a ~~peaceful~~ peaceful end to this conflict.

Ryan USA NJ

Très intéressant! C'est bon pour le devoir de mémoire en espérant qu'il n'y ait pas d'autre musée comme celui ci!

Թող մեր զոհվածների եւ թուրքի զնդաններում դեռեւս կենդանի նահատակվողների գործը շարունակենք՝ նաեւ նրանց հիշատակին ծառայելով իրենց կեանքով ազատագրուած հողի վրայ:

Խաղաղություն Արցախին:

Սօսէ Գորեսեան Սիրիայ
01.08.2012թ.


Rørande utstilling. Håper søva vil gro.
Geir, Norway, 2.8.2012

Prob Potetlini / Cesate Dr. Giglio 2/8/2012
Italy / London

Stiprybės motiwams ir taikios ateities siam nuostabiam regionui
Šiauliai / Lietuva / 3/8/2012

Նրանք անհայտ չեն. նաեւ նրանցով է պահպանվել ու հզորանում մեր հայրենիքը:

«Դելպա» ՀՆ ջ.վ.մ. նախագահ
Ա.Պապյան
05.08.2012թ.


Laura i Andreu: sembla que li ha agrades que no acabin mai.
Aquests dissens dies encara s'han intercanviat molta d'una banda a l'altra, menys a dies en contra la manacre de cibils.
Un món millorable. Segur.

Gisona (Catalunya) - Catalonia - agost 2012.

Հավերժ փառք բոլոր նահատակներին եւ անհայտ կորած քաջորդիներին, որոնք իրենց կյանքով հաստատեցին մայր հողի վրա հաղթողի իրավունքով ապրելու իրավունքը:

06.08.2012թ.


Thank you for this sad but
informative museum. Let's pray for
peace and justice here and
everywhere!
Jan
USA - America

Kære er et trist minde om hvig som ramte et vender
hav af mennesker som ikke afskyttet. Lad os håbe at
dette ikke sidder museum et sin slags.
Troels Denmark

Ստեփանակերտում ծանոթացա ասես հրեշտակի հոգի ունեցող մի կնոջ՝ Վերայի հետ: Որդին անհայտ կորել է մարտադաշտում, իսկ ինքն իր մեջ կորով է գտել՝ ստեղծելու անանախադեպ մի թանգարան՝ բոլոր անհայտ կորածների պատվին ու հիշատակին…

Հզոր հոգու տեր այս կնոջը՝ Վերա Գրիգորյանին, օգնել է պետք, մարդիկ, որպեսզի կարողանա շարունակել աստվածահաճո գործը՝ պահել հերոս տղաների հիշատակն ու հնարավորինս օգնել նրանց ընտանիքներին:

Մարտիրոս Այվազյան
08.05.2012թ.

Пусть оберегает Господь Бог материнское сердце тех, дети которых пропали без вести. Светлого мира и чистого неба- над головой.

Здоровья и долгих лет жизни.

С огромным уважением-
семья Бабаян: Юлия и Меркер
Киев
23.08.2012г.

In questo piccolo muro la memoria
di un popolo piccolo ma eroico.
23 agosto 2012 Dall'Irpinia

Attraverso il ricordo il pensiero di vivere presenti.
Attraverso la memoria il deferente eroe può
ancora esercitare l'immenso potere delle sue
azioni sui posteri.

Thank you for the tour and description of events. We are
sorry for your loss and wish you many years of joy in
the future. August 23 2012

Thank you for the tours and for sharing your
passion with us. My heart goes out to you and to
the other mothers who have lost their sons to
conflict.
23/08/2012

Спасибо за создание такого музея, за ваш труд и помощь инвалидам.

Виктория Орлатая
Киев
Украина
23.08.2012г.

Տիկին Վերա, Ձեր գործունեությամբ վառ եք պահում Արցախի արյուն թափած ազատամարտիկների հիշատակը: Ձեզ ցանկանում եմ քաջառողջություն, Արցախի ժողովրդին՝ խաղաղություն:

Ա. Ամիրջանյան
23.08.2012թ.


Obisk muzeja je bil zelo
močan za moje čustva, saj je
tu mogoče gledati iz oči v oči
vojni z Karabahu. Upamo se
spomnim tudi naše vojne ko smo
jo imeli mi in tako bolje razumem
in čutim kako in s čim živijo
ljudje Karabaha. Želim vam
prihodnost svetla, miru, prosim
in brez poliriya brni.

24/8/12
Slovenia

Ամեն անգամ, երբ գալիս եմ այս թանգարանը, հպարտություն եմ զգում, որ Արցախը կանգուն ու կայուն է շնորհիվ նաեւ այս հերոսների, որոնց, ավա՜ղ, բաժին է ընկել ամենադժվարը…: Ես հավատում եմ, որ կգա օրը, երբ նրանք կվերադառնան հայրենի օջախներ: Աստված բոլորին պահապան…

Արման Կարապետյան
28.08.2012թ.

Ողջունում ենք ձեզ նման նվիրյալ հայրենասերներին: Եվ ամբողջ սրտով ցանկանում ենք, որ ոչինչ չխանգարի ձեր հեղինակած ազգանվեր գործին:

Վահե Խաչատրյան
Երեւան
28.08.2012թ.

Դժվար է նայել այս նկարներին, բայց նայել անհրաժեշտ է: Հիշենք եւ հուսանք, որ ամեն անհայտ զինվոր հետ կվերադառնա՝ վերադարձնելով նաեւ իրենց հարազատների՝ շատ սպասված ուրախությունը…

Անի
Երեւան
29.08.2012թ.


Piękne muzeum, stworzone ze smutku i żalu. Wiele mówi, o bardzo trudnej historii Waszego Narodu. Z całego serca życzymy spokoju, a Waszym Narodom pokoju.
29.08.2012
A. Banaszczyk, Poland


A poignant museum keeping alive the memory of those who have no known grave. May they rest in peace & rise in glory.
Denise Holding. 30.08.12
Հերբերտ Հոլդինգ

Փառք բոլոր նահատակներին՝ մեր սուրբ հողը փրկած հերոսներին: Աստված թող միշտ նրանց ընտանիքների հետ լինի ու վառ պահի հերոս ընտանիքների տան լույսը: Թող թանգարանը միշտ կանգուն մնա ու այսպես ջերմ ընդունի հայ ազգի զավակներին:

Մերի Ղազարյան
30.08.2012թ.

Женщина, сумевшая “заменить” Божью мать - святая по своему. Спасибо вам за сыновей- героев.
Силы вам и здоровья.

31.08.2012.

Հիշենք մեր հերոսներին: Հիշենք ու սպասենք մեր անհայտ կորածներին, հույսը մեռնում է վերջինը… Աստված թող օրհնի ձեզ, ձեր բռնած գործը շարունակական լինի: Շնորհակալություն ջերմ ընդունելության համար:

01.09.2012թ.

С наилучшими пожеланиями - народу Нагорного Карабаха- Арцаха, желаем счастья, здоровьч и мира.
От соотечественников из Америки-
Альберт Агабеков
03.09.2012г.

Զարմացած եմ այստեղ կատարված աշխատանքների ծավալով… Սրտով ու հոգով ձեզ հետ եմ… Ձեր զավակներն անհայտ կորել են պատերազմի դաշտում, փառք ու պատիվ նրանց՝ ողջ լինեն թե արդեն… Եվ, իհարկե, բոլոր նրանց, ովքեր այսօր կառուցում են Ղարաբաղը՝ մեր հին ու նոր Արցախը:

Էրիկ Շահնազարյան-ավագ
Էրիկ Շահնազարյան - կրտսեր
ք.Մոսկվա
04.09.2012թ.

Svit Senković in Urban Iglič
SLOVENIA

Muzej vojetro ni najbolj objektivno pa zagotovo osnovan s pristnimi častmi in skrbnica je resnično samo predstavila zbirko.

8.9.2012

Vielen Dank für die nette Führung!
Wir wünschen Ihnen viel Erfolg bei Ihrer wichtigen Arbeit!

8.9.2012

Danke für die engagierte Führung – schade, dass ich sie Russisch verstehe. Gut, dass in dem Kalender das Lied der Angelänge beider Seite

Menschlichkeit siegt. Alles Gute!

Karl

Vielen Dank für Ihre Bemühungen. Ich wünsche Ihnen viel Erfolg bei Ihrer Arbeit. Es war sehr beeindruckend.

Julia 8. September 2012

1 միգմ-ից նորակոչիկների կողմից շնորհակալություն ենք հայտնում զույգ թանգարանի աշխատողներին՝ մեր զոհված ու անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը վառ պահելու համար: Խոսք ենք տալիս շարունակել իրենց գործը, պահպանել ազատությունն ու անկախությունը:Առողջություն ու երկար տարիների կյանք ձեզ ու բոլոր արցախցիներին:

1 միգ 4 միջ նոն օգն.,
շարքային Ա.Ավանեսյան
11.09.2012թ.

我听不懂这位母亲是作在向我讲述什么,我除了告诉她我是中国人之外也无法再表达什么,但当她指指自己又指指向那无数张相片中的某个年轻人的头像时,我明白她便是这位战士的母亲,这些信息无需以言语传达。

说实话,在走完这两个纪念馆之后我此时不知还能说什么,记得昨天晚上在街头看到的涂鸦,上面写着:PEACE and LOVE.这便是此片土地上的人们真正的心声吧。

愿和平与爱常驻于此。

温子 2012/9/6

Мы поражены тем, что увидели в музее, за которым смотрит наша сестра Вера. Надо, чтобы таких, как она, были много, которые хотят найти тех, кого нет среди нас.

Огромное спасибо вам, будьте здоровы.

Сурик, Ленсер, Грант
Галустяны
20.09.2012г.

Ամեն անգամ հուզմունքով ենք այցի գալիս այս թանգարանը, որը խորին խորհուրդ ունի իր մեջ, թախծախառն հույս…

Հույսս գումարում եմ ձեր հույսին եւ աղոթում տղաների վերադարձի համար, եւ թող այն հասանելի ու լսելի լինի Աստծուն:

Լուսինե Չալումյան
եւ «Նարեկացի» արվեստի միությունից
եւս 35 հոգի ք.Շուշի
20.09.2012թ.

Es war mir eine Freude, als unabhängiger Reisender sogar die Republik Nagorno Karabag besuchen zu können.
20.9.2012 [illegible]

Низкий поклон Всем тем, кто погиб за свободу Арцаха. Вечная им память. Знаем по себе, как трудно терять самых дорогих и близких лядей. Но намного труднее тем, кто не знает о судьбе своих близких-как и где они погибли, где нашли последнее пристанище... Те, кто хранят память о них, делают вели-

кое дело.

Огромное спасибо за этот замечательный музей. Мы желаем, чтобы эти герои никогда не были забыты. И пусть со временем, но мы будем узнавать новые сведения о них.Они навсегда останутся живыми в наших сердцах.

Кулик Елена Петровна-
Жена бойца Ильи Кулика,
Мотрич Любовь Яковлевна-
Мама бойца Димы Мотрича,
Сасун Гаспарян
23.09.2012г.


Thank you for your time. I hope that you find ways to remember the past, so those mistake will not be repeated in the future
Hale RZ, USA

Կը մաղթենք, որ մեր յաջորդ այցելութենեն մեր բոլոր անյայտ տղեքը կը վերադառնան իրենց տները եւ բախտը կը-ունենանք անձամբ իրենց տեսնելու:

Ամահիր Ղահրեան
Մ. Սըլպրիան

Որոշ մեծահարուստներ կույր են, որ չեն տեսնում այս ամենը եւ սատար չեն կանգնում հուշաթանգարանին:

Ամեն անգամ Արցախ աշխարհ գալուց ես այցելում եմ այս թանգարանը եւ ուղղակի լուռ նայելով տղաների նկարներին՝ խոսք չեմ գտնում արտահայտելու զգացածս… Թող

Աստված պահապան լինի եւ անհայտ հեռվում գտնվողներին, եւ թանգարանն ստեղծողներին ու պահողներին:

Տիգրան Խաչատրյան
նախկին ազատամարտիկ
ք.Արթիկ Շիրակի մարզ
25.09.2012թ.

Խորին խոնարհումով ենք նայում այս տղաների նկարներին եւ Աստծուց խնդրում, որ նրանց հասցնի ծնողներին, ընտանիքներին: Ովքեր արդեն ննջեցյալ են՝ Տերը հոգիներին հանգստություն բաշխչ…Շնորհակալություն այս թանգարանն ստեղծողներին, սա հոգու մաքրման եւ զորացման սրբվայր է:

ՀՀ ազգային հերոս Մովսես Գորգիսյանի
դպրոցի զինղեկ՝ Մարիամ Փահլեւանյան
25.09.2012թ.

«Ազատագրում» ՀԿ ազատամարտիկներս, կազմակերպության նախագահի գլխավորությամբ, այցելեցինք այս հուշաթանգարան: Հավատացնում ենք ու երդվում այս տղաների նկարների առջեւ, որ Արցախ աշխարհին տեր ենք կանգնել ու կանգնելու ենք, տեր ենք մեր Հայաստան երկրին, նրա ամեն մի թիզ հողին: Չկա ոչ մի բան, որը մեզ կարող է մոռանալ տալ եւ հավատացնել, թե մեզ հետ դարերից եկածը մերը չէ:

Շնորհակալություն թանգարանն ստեղծողներին:

Մարիա Մելքոնյան՝ ՀԿ նախագահ
Սամվել Մանվելյան՝ՀԿ վարչության անդամ
25.09.2012թ.


25/09/2012.

Przyszły tu z Karabachu. Przejechałem przez piękny Azerbajdżan, widziałem zniszczony Agdam. Teraz jestem w spokojnym, pięknym Stepanakercie. Po 19 latach od zakończenia wojny wiele jest jeszcze do zrobienia, jej ślady są jeszcze widoczne. Życzę temu krajowi całkowitej odbudowy i spokojnej przyszłości. Niech jego losy mężą się tak jak życzę sobie jego obywatele.

JANUSZ WĘGRZYN

Ցանկանում եմ բոլոր մայրերին համբերություն, հույս ու հավատ առ այն, որ իրենց զավակները, վաղ թե ուշ, կվերադառնան…

Արման Մեջլումյան
Քաշաթաղի շրջան
գ.Քերչոր
25.09.2012թ.

Այսօր առաջին անգամ 10-րդ ու 11-րդ դասարանների աշակերտներին բերեցինք Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան ու խորապես ցնցված եւ անմոռանալի տպավորություններով ենք հեռանում այստեղից: Ձեր ու մեր համբերությունը եւ հույս-հավատը, սիրելիներս, կօգնի առաջ շարժվելու…

Աղոթում ենք ձեզ ու ձեր որդիների համար, տխրամած մայրեր, լավատեսորեն նայեցեք ապագային, նրանք մի օր կվերադառնան:

Մարտունու շրջանի Քերթ գյուղի
Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց
08.10.2012թ.

Շնորհակալություն այսքան կարեւոր ու ծանր գործ կատարելու համար: Հավաքված փաստաթղթերը եւ նյութերը ոչ միայն անհայտ կորածների հիշատակը հավերժացնելուն են ծառայում, այլեւ Արցախյան հերոսամարտի եւ հայ ժողովրդի դեմ ուղղված ծանրագույն հանցագործությունների վավերագրեր են: Հուսանք, որ այսպիսի անձնուրաց ու հետեւողական աշխատանքի արդյունքում կպարզվեն տղաների ճակատագրերը, եւ ովքեր կենդանի են՝ տուն կվերադառնան…

Վահե Գաբրիելյան
Հայաստանի դիվանագիտական դպրոցի տնօրեն
12.10.2012թ.

Շնորհավորում ենք Ձեզ Ստեփանակերտի օրվա առթիվ: Մաղթում ենք ձեզ երկարակեցություն եւ հաջողություններ՝ ձեր բազմաչարչար գործում:

Աստված պահապան բոլորիդ:

Ա. Հակոբյան
Ստեփանակերտի քաղաքապետի տեղակալ
12.10.2012թ.

Ստեփանակերտի օրը՝ առաջին անգամ եկանք այստեղ ու մեր տեսածից ցնցվեցինք… Անհայտ կորած ազատամարտիկների այս թանգարանում նկարներով ներկայացող մեր տառապյալ տղաների շնորհիվ է, որ այսօր ապրում ենք ազատ ու անկախ երկրում: Խոնարհվում ենք ձեր առջեւ եւ սպասում ձեզ, մեր ավագ եղբայրներ:

Համբերություն բոլորիդ, չկորցնեք հույսը… Պատերազմը

գրեթե ամեն հայ ընտանիքի վրա այս կամ այն չափով ծանր հետքեր է թողել, թող էլ երբեք արկ ու ականի պայթյուն չլսենք, արցախցիներս ապրեն ք հանգիստ ու խաղաղ:

Վիկա Սեւյան
Լուսինե Սարգսյան
Գոհար Ավանեսյան
ք.Ստեփանակերտ
13.10.2012թ.

Նայում ես նկարներին եւ՝ աչքերում տան կարոտը տեսնում ու հոգեմաշ սպասումը… Ասես թե նախորոք գիտեին իրենց տխուր ճակատագրի մասին:

Շատերը, հավանաբար, արդեն կենդանի չեն, գոնե դեռ ողջերի համար ազատության դուռը թող բացվի… Աղոթենք անհայտ կորած մեր եղբայրների ու քույրերի համար: Թող վերադառնան ու երջանկանան:

Նելլի Ղահրամանյան
16.10.2012թ.

Յուրաքանչյուր հայ, ով այցելել է այս թանգարանը, համոզված եմ, յուրահատուկ տպավորությամբ է հեռացել…

Աստված՝ անհայտ կորած մեր ազատամարտիկների հետ… Թող լույս բացվի նրանց համար:

Լուսինե Սարգսյան
Թ.8 ավագ դպրոց
18.10.2012թ.

Խորին շնորհակալություն մարդկանց՝ ովքեր ստեղծել են այս թանգարանը: Անհայտ կորածներին սպասող հարազատներին՝ անհատնում համբերություն: Թող նրանց սրտի երազանքը կատարվի:

Լուսինե Սայիյան
թ.8 ավագ դպրոցի
12-րդ դասարանի աշակերտուհի
18.10.2012թ.

Մինչեւ թանգարան այցելելս իմ ուսուցչուհին ներկայացրել էր, թե ինչում է կայանում թանգարանի էությունը… Եվ ահա այնտեղ ներկայանալով, ցավ ապրեցի, բայց եւ լսելով իրենց անհայտ կորած զինվոր զավակներին սպասող մայրերի ոգեպինդ խոսքը, հպարտացա, որ նման կորովի կանայք ունենք: Շա՛տ կորովի… որովհետեւ մեկ բան է որդուն հողին հանձնելը եւ մի այլ բան՝ նրա հա՞ չիրականացող վերադարձին կամ… դիակին տարիներով սպասելը: Թող ձեզ համար լույս բացվի, դիմակայո՛ղ մայրեր:

Արեւիկ Չալյան
Ստեփանակերտի հ.8 ավագ դպրոց
18.10.2012թ.

Պատերազմն ահավոր բան է. ավերվող քաղաքներ ու գյուղեր, որբացող երեխաներ, այրիացող ջահել հարսներ, որդիներին կորցնող մայրեր…Եվ ամենաահավորը՝ մարտադաշտում անհայտ կորչողներ, գերության զոհեր: Ես խոնարհվում եմ անհայտ կորած մեր քաջամարտիկների հիշատակի եւ նրանց հարազատների համբերությանի առջեւ: Թող ժամանակը սպեղանի լինի նրանց ցավին:

Այսօր մեր դպրոցի 1-ին եւ 5-րդ դասարանների աշակերտներն, ընդունվելով «Զարթոնք» մանկապատանեկան կազ-

մակերպության «Աստղիկների» եւ «Արծվիկների» շարքերը, հանդիսավոր երդվեցին լինել ազնիվ, ճշմարտախոս, ծառայել հայրենիքի պաշտպանության սուրբ գործին…Ես հպարտանում եմ իմ սաների անկեղծությամբ ու հավատում եմ նրանց:

Էլմիրա Գաբրիելյան
Ստեփանակերտի հ.12 հիմն. դպրոցի տնօրեն
20.10.2012թ.

Ամեն անգամ մտնելով այս սուրբ օջախը, նայելով մեր քաջազուների անմեղ աչքերին, մարմնովս սարսուռ է անցնում: Նրանցից շատերի մարտական կենսագրությունը շատ բան է պարտավորեցնում մեզ ՝ ազատ հայրենիքում ապրողներիս:

Մենք այնքան շատ ենք կապված ԱԿԱՀՄ հետ, որ մեր միջոցառումներից շատերն նրա հուշաթանգարանում ենք անցկացնում: Այիպես որ՝ բացառություն չէր այսօրվանը՝ երդման արարողությունը…Վստահ եմ, որ նրա մասնակիցները կդառնան մեր հայրենիքին արժանի զավակներ:

Լիանա Ծատրյան
Ստեփանակերտի հ.12 հիմն. դպրոցի դասվար
20.10.2012թ.

Այսօր այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, եւ ինձ թվաց, թե մտնում ենք սուրբ տաճար… Արցունքներս հազիվ էի զսպում:Նայելով ծաղկուն հասակում իրենց կյանքը հայրենիքի զոհասեղանին դրած՝ մեր գերեվարված տղաների լուսանկարներրին, մտովի ասացի՝ հաղթանակը եկավ նաեւ ձեր պայքարի եւ տառապանքի շնորհիվ, խոնարհվում եմ ձեր առջեւ:

Նարինե Հայրիյան
Ստեփանակերտի հ.12 հիմն.դպրոցի կազմակերպիչ
20.10.2012թ.



Yet another sad moment to see the faces of those who were not found but are missing. unfortunatly, as is well known, most of them are probably dead and very few. If any would see thier families again.
The pain of the missing son, and the never ending hope that He will return one day can be destructive and agonizing more then the buried.
I Hope that lize will remain peacefull in this lovell green, mountainous land. and that war will be a distant memory for them and for all menkind

Вера Армоевна, Спасибо Вам большое. Ваша работа- героическая. Вы до сих пор работаете на благо народа.

Группа из Абхазии
22.10.2012г

Առաջին անգամ եմ այստեղ ու չեմ կարողանում զսպել հուզմունքս: Տպավորությունները շատ մեծ են: Դժվար է տղաների նկարներից աչք կտրելը: Թող, ոչ մի մայր այլեւս չզգա մարտադաշտում անհայտ որդի ունենալու անագորույն ցավը…

Խոստանում եմ իմ ներդրումն ունենալ Արցախ աշխարհի շենացման ու բարգավաճման գործում:

Նարիմե Արզանյան
ԼՂՀ Մարտունու շրջանի
Խնուշինակ գյուղի դպրոցի
12-րդ դասարանի աշակերտուհի
24.10.2012թ.

Ես Արցախի ապագա զինվորն եմ եւ այս թանգարանում խոստանում եմ պահը գալուց պահել ու պաշտպանել հայրենիքիս սահմանները:

Անդրեյ Դոլուխանյան
Ստեփանակերտի թիվ 7 դպրոց
24.10.2012թ.

Wishing that you and others with missing relatives find news and are reunited.

Marlo Kokic 26.10.2012

2.11.2012

Without words!! Senza parole!!
che cose assurde la guerra!! Quanto dolore, quante vite perse... dispersi, morti, distruzione.
Quanto sarebbe bello stringersi una mano e sorridersi, aiutarsi, comprendersi.
Dopo tanto dolore, vi auguriamo un futuro di pace e serenità per voi e i vostri figli e nipoti.

Elisabetta [illegible] ISOLA d'ELBA – ITALY

homo homini lupus...
cui prodest?

Michele Cavallaro ELBA
ITALIA

Ես՝ Կարեն Պետրոսյանս, ցանկանում եմ, որ պատերազմ չլինի, եւ չլինեն անհայտ կորածներ… Թող Աստված մայրերին վերադարձնի մեր կորած ավագ եղբայրներին:

26.11.2012թ.

Ես՝ Իշխան Գարաքյանս, այս նկարների առջեւ երդվում եմ լավ ծառայել Հայոց բանակին:

25.11.2012թ.

Իմ եւ աշակերտների անունից բոլոր անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքներին մաղթում եմ ամենամեծ երազանքի իրականացում՝ որ նրանց զավակները վերադառնան գերությունից ու վայելեն ազատագրված հայրենիքում ապրելու բարեբախտությունը:

Արմինե Հովսեփյան
Ստեփանակերտի թ.11 ավագ դպրոցի12 /հում./ խմբի
պատմության ուսուցչուհի
26.11.2012թ.

Ամեն անգամ նայելով մեր անհայտ կորած հերոսների նկարներին, նրանց աչքերում ես տեսնում եմ երազած ապագան…Երդվում եմ՝ կլինեմ հայրենիքին պիտանի մարդ, երբեք չեմ հեռանա նրանց ազատագրած Արցախից…

Անուշ Պետրոսյան
թ. 11 ավագ դպրոցի աշակերտուհի
26.11.2012թ.

Մենք այս երկրին մաղթում ենք խաղաղություն: Թող սերունդներն առողջ մեծանան: Խոնարհվում ենք բոլոր նրանց առջեւ, ովքեր զոհվել կամ անհայտ կորել են Արցախյան հերոսամարտում:

Դավիթ Մկրտչյան
Համլետ Գեղամյան
Ֆրունզե Վարդանյան
04.12.2012թ.

Լինելով այս թանգարանում, այնտեղից դուրս եմ գալիս խորը տպավորված: Շատ հարուստ եւ ցուցանմուշներով մարդու հոգին ցնցող թանգարան է, ամեն ինչը՝ տեղը-տեղին: Շնորհակալություն այն ստեղծողներին:

Արամայիս Աղաբեկյան
05.12.2012թ.

Ես՝ զինված ուժերի ծառայող Արմեն Գարամյանս, ցանկանում եմ, որ թե խաղաղ, թե պատերազմական իրավիճակում չլինեն անհայտ կորած զինվորներ… Մենք հիմա խաղաղ պայմաններում ենք ծառայում՝ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ արիություն եւ տոկունություն ցույց տված հերոսների շնորհիվ: ԼՂՀ ԱԿԱՀՄ հուշաթանգարանից ստացա խոր տպավորություն:

11.12.2012թ.

Ամեն անգամ այցելելով Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, մենք՝ զինվորներս, ավելի ենք տոգորվում-ոգեշնչվում ազատագրված հայրենիքին լավ ծառայելու մտքով:

ՀՀՊՄ-ՀՊ-ի եֆրեյտոր Ա. Ենափիսոյան
12.12.2012թ.


I think this museum would be for peace not for making the angry for Azerbaijan.
Nikki Kakuchi

戦争の悲惨さを伝える写真などの展示はいつも胸に来るものがあります。
Junpei 湯沢文太郎

戦争を経験していませんが、この博物館から戦争の悲惨さが伝わってきました。カラバフにずっと平和が続くようにのります。
18/12/2012 Kento Kojima 小島賢

Թիվ 46492 զորամասի բոլոր նորակոչիկների անունից ուզում եմ շնորհակալություն հայտնել տիկին Վերային՝ հուշաթանգարանում կայացած բովանդակալից զրույցի համար: Հավատացնում եմ, որ դա մեզ համար հայրենասիրության դաս էր:

Գառնիկ Վարդանյան
24.12.2012թ.

Այս տողաները «անհայտ կորան» մարտի դաշտում՝ բայց ո՛չ մեր սրտերից…

Նրանց անցած ուղին միշտ մեզ հետ կլինի:

Թիվ 46492 զորամասի նորակոչիկներ
08.01.2013թ.

Dear Vera, 9-01-2013
You told me this moving story and think
Youre a really courageous women.
Keep on doing what you do because you are
an great example for many women.
I hope to see you again in beautiful Stepanakert!
Eveline
from Holland

37447 զորամասի ողջ անձնակազմի անունից խորին երախտագիտություն ենք հայտնում Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի աշխատողներին՝ դաժան փորձության մեջ ընկած մեր ազատամարտիկների հիշատակը վառ պահելու համար: Խմբովի՝ 28 հոգով գլուխ ենք խոնարհում բոլորի առջեւ:

Մայոր Կարապետյան, զորամասի ՀԱՀՏԱԳՀ
22.01.2013թ.

Մայր իմ սուրբ ու հարազատ.
Ապրիր երկրում մեր ազատ,
Թափած արյան, կյանքի գնով
Խլված հողս եմ եր առել՝
Մարած լույսը նորից վառել...

Նվիրում եմ Արցախյան պատերազմում զոհված, ինչպես նաեւ՝ հակառակորդի զնդաններում տառապած ու տառապող մեր անհայտ կորած ազատամարտիկների հիշատկին:

Նորայր Միքայելյան
Թիվ 38043 զորամաս
23.01.2013թ.

Թիվ 46994 զորամասի անձնակազմի անունից շնորհակալություն ենք հայտնում մեզ այս գեղեցիկ ու պարտավորեցնող հարկի տակ ընդունելու համար:Մենք՝ զինվորներս, մեծ հպարտություն ենք զգում, որ երեկվա մեր հերոսների գործի շարունակողն ենք…

Մ. Եղիազարյան
29.01.2013թ.

Այցելեցի ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Կսկիծով դիտեցի մեր հերոս տղաներին նվիրված ցուցասրահները, խոնարհվում եմ տկին Վերա Գրիգորյանի կատարած աշխատանքին, այն հույս ու հավատ է ներշնչում Արցախի եւ հայության խաղաղ, ստեղծագործ ու պայծառ ապագայի հանդեպ::

Շնորհակալություն:

Լիվեռա Հովհաննիսյան
ԼՂՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
Քաշաթաղի շրջանի երկրագիտական թանգարանի
Ծիծեռնավանքի մասնաճյուղի տնօրեն
29.01.2013թ.

Այստեղ կարծես մի ամբողջ ազգի պատմություն մեկ կաղրի նման անցնում է աչքիդ առջեւով:Այստեղ վերարժեվորվում է ամեն ինչ, մի ուրիշ հայացքով ես նայում կյանքին…

Փա՜ռք մեր ազատամարտիկներին, մեր երկու անկախ հանրապետություններին:

Վաչագան Գասպարյան
ՀՀ տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական
հանձնաժողովի աշխատակից
06.02.2013թ.

Պատմության ուսուցչուհի Վ.Ջավալյանի ուղեկցությամբ մենք՝ արհեստագործական ուսումնարանի վարսահարդար 1 կուրսի սաներս, հաճախել ենք անհայտ կորածների հիշատակին նվիրված թանգարան, եւ 239 երիտասարդ ազատամարտիկների հայացքների ներքո բառ չգտանք խոսելու, այդ հայացքները մեզ պատմեցին տարիներ առաջ տեղի ունեցածի մասին…

Այն ամենն, ինչ տեսանք հուշաթանգարանում, մեզ համար հայրենասիրության եւ բարձր քաղաքացիության դաս էր:

11.02.2013թ.

Բալիկներովս այցելեցի այս թանգարանը, որն ինձ չափազանց հուզեց: Անընդհատ մտածում էի. Հայրենյաց պաշտպանի օրն է մոտենում, իսկ այս տղաների ճակատագրերն անհայտ են… Ինչպիսի՜ ցավ:

Լեռնիկ Քամալյան
21.02.2013թ.

Այգեստանի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտների հետ եկանք անհայտ կորած ազատամարտիկների հիշատակին նվիրված թանգարան: Աշակերտները բավականին տպավորված են այն ամենից, ինչ տեսան ու լսեցին այստեղ: Հուշաթանգարանը մի կենդանի մատյան է մեր ազգային-ազատագրական պայքարի եւ պատերազմում տարած հաղթանակի մասին: Հաղթանակ, որն առանց զոհերի ու յուրատիպ այլ կորուստների չեղավ… Անհայտ կորածների ընտանիքներին մաղթում ենք հույս ու հավատ: Ձեր սպասումներում ձեզ հետ են:

Ն. Հայրիյան
Այգեստանի միջն.դպրոցի պատմության ուսուցչուհի
22.02.2013թ.

Ցավ ու ափսոսանք ես ապրում՝ տեսնելով այս հայորդիների դեմքերը: Նրանք պատերազմից տուն չդարձան, իսկ հարազատները հույսը չկորցրած՝ սպասում են: Սպասում ենք եւ մենք՝ ակնկալելով նրանց վերադարձը:

Արցախի պետական համալսարանի
դասախոսների եւ ուսանողների անունից՝

ռեկտոր Ս.Դադայան
պրոռեկտորներ՝ Ա.Աբրահամյան
Վ.Յարամիշյան
Վ.Ջավադյան
դեկաններ՝ Վ.Միրզոյան
Ե. Հայրապետյան
Շ.Այդինյան
Կ.Արամյան
Վ.Ավանեսյան
ուսումնական բաժնի պետ՝ Ժ.Անասպասյան
22.02.2013թ.

Հայկ Բալասանյանի անվան հ.5 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտներն այսօր եղան անհայտ կորած ազատամարտիկների հիշատակին նվիրված թանգարանում: Մեզ համար ավանդույթ է դարձել պարբերաբար այցելել այս խաղաղ անկյունը եւ հարգանքի ու հիշատակի տուրք մատուցել իրենց կյանքն ու ջահելությունը հայրենիքի ազատությանը նվիրած 239 անհայտ կորած ազատամարտիկներին:

Մենք խոնարհվում ենք նրանց մայրերի եւ հայրերի համբերության եւ սպասումի առջեւ:

Դասղեկ Վերա Ավետիսյան
25.02.2013թ.

A moving and important tribute to those lost in the wars. Thank you to the lady for her patience in showing me around and her friendliness, despite the lack of a common language.

Nick from London.

Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ հումանիտար դասարանի աշակերտներն առաջին անգամ են այստեղ: Պատերազմը վաղուց ավարտվել է, բայց շատերի ճակատագիրը դեռ անհայտ է: Թող այնպես լինի՝ նրանք բոլորը տուն վերադառնան, եւ այս թանգարանը մնա լոկ հիշողություն: Երեւի սա ամենամեծ հայրենասիրական դասն էր, որ սաներս առան այստեղ: Քանզի «պատերից մեզ նայող» յուրաքանչյուր ազատամարտիկ ունի իր կյանքի պատմությունը, որը մեզ էր ներկայացնում լուռ, առանց խոսքի:

Մենք խոնարհվում ենք նրանց առջեւ: Վստահ եմ, որ այսօրվա դպրոցականները վաղը դառնալու են նրանց գործի շարունակողները: Տիկին Վերային շնորհակալություն՝ նման թանգարան ստեղծելու համար:

Դավիթ Ա. Մնացականյան
19.03.2013թ.

Un caro saluto e un forte abbraccio alle madri dei figli scomparsi nella guerra.
Vi auguro di poter sentire ancora una volta la voce dei vostri cari e di respirarne il profumo e se non torneranno vi auguro di riuscire ad andare avanti con i denti stretti forte, con la speranza in un futuro migliore e con il ricordo di un mondo di pace e prosperità chiamato Unione Sovietica, un mondo incantato che vi è stato portato via con la forza dall'Occidente avido e invidioso. МИР МИРУ ★

GIANLUCA PARDELLI, LIVORNO, ITALY
05/04/2013

6/4/2013

A extraordinary experience. The director took the time to give a tour of the organisation. A particularly moving experience was when she pointed our her son in one of the photos of the missing. Vera is a exceptional woman with amazing courage.
I will thoroughly recommend this to others.

Shahid Khan
Britain / Pakistan

Учителя и учащиеся средней школы им П. Гевондяна сегодня посетили г. Степанакерт, провели Урок Мужества, посвященный 52-годовщине со дня рождения Национального Героя РА и Героя Арцаха Юрия Вагаршаковича Погосяна. Нам выпала огромная честь посетить музей солдат, которые невернулись с войны. Выражаем огромную благодарность Григорян Вере-за то дело, которое она делает.

Пусть вернутся наши солдаты домой.

Элла Мирзоян
директор школы
08.04.2013г.

I appreciate a lot the hospitality of staffs here, It is interesting to see this part of world and we pray for its people to get the freedom the dignity and their independence.

YOSRA Djahni
(Qc) Canada

Նրանք կռվել են հանուն հայրենիքի: Նրանց շնորհիվ է, որ այսօր ապրում ենք այս հողի վրա: Փառք ու պատիվ մեր անհայտ կորած ազատամարտիկներիին, որոնք իրենց կյանքը չխնայեցին՝ պաշտպանելով հայրենին: Նրանց տառապանքն իզուր չի անցել, համոզված եմ՝ Արցախի հանրապետությունը մի օր կճանաչվի որպես ինքնիշխան պետություն:

Դիանա Մարության
Ստեփանակերտի հ.2 դպրոցի ուսուցչուհի
11.04.2013թ.

Այս յուրահատուկ թանգարանի ցուցադրանքը դիտելուց լցվում ես միաժամանակ ցավով ու հպարտությամբ:Այս թանգարանն իր տեղը, դերն ու նշանակությունն ունի պատանիների ու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Մեր ջահել հերոսների սխրանքը հավետ կմնա սերունդների սրտերում:

Լևոն Հովսեփյան
պատմական գիտությունների թեկնածու
13.04.2013թ.


Jesteśmy oburzeni tragedią Karabachu.
Mamy nadzieję, że uda się najbliższym czasie zakończyć pomyślnie konflikt armiańsko - azerbejdżański.
Dziękujemy objektowo muzeum za oprowadzenie po tym muzeum.
Mateusz Głowacki
13.04.2013. Natalia Wilk
POLSKA

Իրենք նվաճեցին խաղաղություն, բայց, ավա՜ղ, չվայելեցին այն… Հավերժ փառք նրանց:

Դավիթ Ջամալիչ
ռազմական փորձագետ
13.04.2013թ.

Այս տղաներն իրենց կյանքը չեն խնայել հանուն հայրենիքի: Փառք ու պատիվ մեր ազատամարտիկներին: Նրանց շնորհիվ հիմա ծառայում ենք խաղաղ երկնքի տակ:

Կապիտան Մանուկյան,
շարքայիններ Նարեկ Բալասանյան,
Դավիթ Սարգսյան /82256 զ/մ/
13.04.2013թ.

Voici un lieu de mémoire remarquablement organisé, dont il est important de numériser tous les documents. Le rapprochement des familles éparses des deux côtés de la frontière est un message d'espoir qui doit être encouragé par tous les visiteurs.
Bravo à Vera qui sait faire vivre ces disparus!
23/04/2013 Famille GAUNY (Marne - FRANCE)

Այսօր՝ ապրիլի 27-ին Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան այցելեցինք: Տպավորություններն անպատմելի են… Որքա՜ն մեծ աշխատանք է տարվել այստեղ: Կեցցե՛ն թանգարանն ստեղծողները:

Կարմիր գյուղի միջն. դպրոցի դասղեկ
Հ. Ավետիսյան
եւ 8-րդ դասարանցիներ
27.04.2013թ.

После посещения музея без вести пропавших соотечественников я осталась под большим впечатлением. Спасибо всем тем, кто старается хоть чем-то помочь, дать надежду родственникам пропавших. Если и кто остался в живых из них, дай бог, чтоб вернулись они в целости-это наивысшая награда будет для нас всех.

Жанна Ванян
27.04.2013г.

Մարդուն գնահատում են ոչ թե ապրած տարիներով, այլ կատարած գործերով, թողած հետքով: Այդ առումով տիկին Վերա Գրիգորյանն արել է իրենից կախված ամեն ինչը՝ մեր հերոսական զավակների անունն ու պատիվը, նրանց սխրանքը բարձր պահելու համար: Փառք ու պատիվ նրանց եւ նրան…

Սուշեղ Օհանջանյան
30.04.2013թ.

ナラバフの歴史のスタート(独立)のために戦った人達の思いを感じました
涙が出ました

現在の町や人々の笑顔からは想像できませんが、20年前に
戦争があったことを実感しました。
No War!

竹内 裕
2013/1st/May



Երբ նայում եմ այս նկարներին, այս երիտասարդներին, որոնք անհայտ կորած են, բառերը չեն կարողանում արտահայտել զգացմունքներս, նեղություն եւ հրճվանք, տխրություն եւ երջանկություն, ժպիտ եւ արցունք, հպարտություն եւ ցավ… Խոնարհվում եմ բոլոր այն մայրերի առջեւ, որոնք որդիներին կորցրել են հայրենափրկիչ պատերազմում, որովհետեւ նրանք ծնել ու սնել են հերոս զավակների:

Մեղրիկ Ճապաղջուրյան
Սիրիա-Երեւան
01.05.2013թ.

Այսօր առաջին անգամ այցելեցի անհայտ կորածների թանգարանն ու տեսնելով նրա ցուցադրանքը՝ շատ հուզվեցի: Անցել են շատ տարիներ, նրանք չկան… Ես կաղոթեմ բոլորի համար, որ վերադառնան, նրանց շնորհիվ է, որ այստեղ՝ մեր ազատ հայրենիքում մեծանում ենք որպես հայ… Եկեք Չմոռանանք նրանց:

Լիլիթ
06.05.2013թ.


戦争は、いいも悪いもない、最悪な出来事。
これも、1人の20年前にあった出来事とは思えません。
まだまだ辛さのいえない人々も多いはず。
世界から戦争が無くなりますように！　末と ☺
This is a most moving museum – so much
suffering recorded but recognised as valued –
building hope for the future at this sensitive
country. May you have lasting peace for now
and the future generation. Thank you. 06.05.13.
Philip Clarke

Լինելով Ղարաբաղյան պատերազմի մասնակից եւ այցելելով անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան՝ տակնուվրա եղա: Երանի՜ նրանց բախտ վիճակվի վերադառնալ հայրենիք եւ գլուխները հանգիստ դնել բարձին… Աստված պահապան նրանց:

Տիգրան Նազարյան
գյուղ Գյուլաբաղ
14.05.2013թ.

Փառք ու պատիվ մեր բոլոր նահատակներին, մեր սուրբ հողը փրկածներին: Տարիներ առաջ, երբ առաջին անգամ ոտք դրեցի այս թանգարան, դեռ աշակերտուհի՝ մանկական մտածողությամբ էի ըմբռնում ու հասկանում ամեն ինչ: Այժմ, երբ աշխատում եմ թ. 9 դպրոցում եւ արդեն ինքս եմ աշակերտների հետ լինում այստեղ, տպավորություններս լիովին այլ են… Լույսի ճանապարհ՝ մեր տղաներին, որ անհայտ հեռվից տուն գան:

Աղավնի Հարությունյան
15.05.2013թ.

Ես՝Առնոլդ Գրիգորյանս, ՊԲ 3415 զ/մ զինծառայող եմ, կոչումով կապիտան: Արցախյան ազատամարտի տարիներին կորցրած լինելով տուն ու տեղ, մեծաթիվ հարազատների ու բարեկամների, փոքրուց եմ ցանկացել ծառայել հարազատ պետությանն ու ժողովրդին: Սիրում եմ այցելել ազգային գրադարաններ, պատկերասրահներ, թանգարաններ, եւ դա իմ մեջ մշակել է ազգային մտածողություն:

Հիշելով Գարեգին Նժդեհի ասույթները, կցանկանայի, որ մեր բոլոր պատանիներն ու երիտասարդները ինձ ու շատերի նման այցելեն նման վայրեր: Այս հուշաթանգարանը՝ նույնպես: Թող իրենց հեռավոր ու կարոտյալ զավակներին սպասող հարազատները մխիթարվեն հայրենիքի ազատ ներկայով՝ չդադարելով սպասել նրանց…

15.05.2013թ.

Ծառայում եմ Պաշտպանության բանակում: Հրետանավոր եմ: Շատ են եղել առիթներ, երբ մեզ տարել են տարբեր հուշահամալիրներ, թանգարաններ եւ այլն, սակայն այս շեմով ներս մտնելով՝ առաջինը խորհեցի… պատվի զգացման մասին: Ահավոր է, երբ մտածում ես, թե թշնամու ճիրաններում ի՞նչ կտտանքների են ենթարկվում այս տղաներից ողջ մնացածները...Եկեք արժանին մատուցենք նրանց տառապանքին:

Մհեր Եղիազարյան
15.05.2013թ.

Ողջունում եմ ձեզ, տառապող իմ ավագ եղբայրներ, դիմացե՞ք, համբերե՞ք էլի. կբացվի՛ լույս ձեր ճակատագրի վրա…

Հրայր Քամալյան
39138 զորամասի զինվոր
15.05.2013թ.

Տեխնիկական դիվիզիոնում եմ ծառայում: Հայրենիքի հանդեպ պարտքս մինչ վերջ կկատարեմ բարեխղճորեն: Այս թանգարանը մինչեւ հոգուս խորքը ցնցեց ինձ: Գիտեմ, որ պատերազմի ժամանակ ամեն ինչ է լինում… Համբերություն եմ ցանկանում գերությունում տառապողներին: Նրանք այնտեղ էլ են մարտիկ մնում, այլապես թշնամին առիթը բաց չէր թողնի՝ նրանց ահավոր լույսի տակ ներկայացնելու…

ՊՔ շարքային Պետրոսյան
15.05.2013թ.

Ես ծառայում եմ, այսպես կոչված, «Եղնիկներ»-ում, եւ այսօր պատիվ ունեմ լինելու ԼՂՀ ԱԿԱՀՄ հուշաթանգարանում եւ Առաջին մրցանակ ստանալ «Լավագույն շարադրության համար»…

Շուտով զորացրվելու եմ տուն՝ Գավառ, բայց հուսով եմ, որ ապագայում եւս հնարավորություն կունենամ այցելել Արցախ եւ այս թանգարանը՝ ներշնչվելու նրա ցուցադրանքով: Չեմ մոռանա տիկին Վերա Գրիգորյանի հայացքն ու կեցվածքը…

Գրիգոր Բիչյան
15.05.2013թ.

Այսօր՝ 2013թ. մայիսի 18-ին այստեղ ենք եւ ձեզ ասում ենք՝ հասկանում ենք ձեր ցավն ու երդվում ենք հարկավոր պարագայում ձեր զավակների նման հանուն հայրենիքի չխնայել ոչինչ…

Երեւանի թիվ 195 ավագ դպրոցի
աշակերտների անունից՝
Կոշեցյան Ռուբիկ

Մայիսի 18-ին ՀՀ իրավաբանների եւ հոգեբանների միջազգային ասոցիացիան «Ընտանիք-դպրոց-բանակ» ծրագրի շրջանակներում Երեւանի մի շարք դպրոցների կոնտինգենտի ուղեկցությամբ եղավ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում:

Տիկին Վերա Գրիգարյանի հետ հանդիպումը հուզիչ էր եւ ոգեւորող: Մեր մեջ խոսում էր հայրենասիրության ոգին: Ճիշտ խոսքը հավասար է գործի, մենք բոլորս պետք է խոսենք ու գործենք հանուն հայրենյաց շահի, հանուն ազգի ապագայի:

Խաչատուր Մարոզյան
Ասոցիացիայի նախագահ

Ես շնորհակալ եմ ճակատագրին՝ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հուշաթանգարանում լինելուս համար: Կյանքին սկսել եմ նայել նոր դիտանկյունից… Ցնցված եմ տիկին Վերա Գրիգորյանի հոգեկան ամրությամբ: Սեփական վիշտը սրտում անթեղած՝ նա տոգորված է ազգի բարօրության գաղափարով, կատարում է երախտագիտության արժանի մեծ աշխատանք: Խոնարհվում եմ նրա եւ իր բախտակիցների առջեւ:Թող Աստծո աջը լինի նրանց գլխին…

Էմանուել Մարգարյան
ՀՀ «Երեւան» հեռուստաընկերության
գլխավոր խմբագիր
18.05.2013թ.

Բարձր ենք գնահատում ձեր գործն ու անսահման սերն առ հայրենիք, խոստանում ենք ամեն կերպ աջակցել ձեր

կազմակերպությանը, որպեսզի նրա ձեռնարկումները լինեն շարունակական ու փոխանցվեն սերունդներին:

Երևանի հ. 195 ավագ դպրոցի անունից՝
Արփինե Մկրտչյան
18.05.2013թ.

To the union of relatives of the Artsakh War missing in Action Soldiers –

Thank you for the lovely tour of your museum and for the kindness with which you welcomed me today. We all have a responsibility in this life and this world to protect each other and to love each other. No violence can ever be justified and we should all work for the peaceful resolution of all conflicts, so that no mother, no father, no sister or brother should ever suffer in the way anyone suffers who does not know the fate of their loved one.

Best of luck!

Simon Tiller, London
20-05-13.

Ձեր թափած արյան ամեն մի կաթիլը, ձեր տառապանքի ամեն մի րոպեն, անհայտ կորած ազատամարտիկներ, փոխհատուցվելու է մեր շարունակական պայքարով եւ պահանջատիրությամբ՝ մինչ վերջնական հաղթանակ:

Բիայնա Օհանեան
23.05.2013թ.

Ծանր բան է սպասումը… Զարմանում եմ, թե որքա՜ն ուժ կա այս հետաքրքիր ու գործունյա կնոջ՝ ԼՂՀ ԱԿԱՀՄ նա-

խագահ Վերա Գրիգորյանի մեջ, որ կարողանում է ոչ միայն դիմակայել ահավոր ցավին, այլեւ փայլուն կերպով ղեկավարել մի ամբողջ կազմակերպություն եւ ստեղծել այսպիսի թանգարան: Այն ոտից գլուխ ցնցում է այցելուին…

Աստված տա, անհայտ կորած որդիները տուն դառնան՝ վերանա սպասման սոսկալի ցավը:

Է. Գաբրիելյան
Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի տնօրեն
24.05.2013թ.

Excellent museum very friendly people
lets hope it will never happe again
thanks for the great welcome !
Ronnie

Ձեզ հետ միասին հավատում ենք եւ սպասում տղաների վերադարձին: Դուք պետք է տուն վերադառնաք, տղաներ, լսո՞ւմ եք, համբերեցեք, կլինի վերադարձի ճանապարհ:

Սարգիս, Ասպոիկ, Ալեքս Սահակյաններ
Լոս Անջելեսի Մեսրոպյան ազգային վարժարան
03.06.2013թ.

Աստված ձեզի համբերություն տայ: Միշտ յույսով ապրեցեք, Աստված մեծ է:

Սալտանեան ընտանիք
03.06.2013թ.

Многострадальному народу Нагорного Карабаха-свободу, процветания и благословления.

Мероди Мажиров
Г.София Булгария

Մեր զորամասի ողջ անձնակազմի անունից գլուխ ենք խոնարհում անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի առջեւ:

ՊԲ 37447 զ/մ ՀԱՀԿԱՔՏ
04.06.2013թ.

Very interesting museum with lots of sad stories. I wish my Russian was better so I could have understood more of the explanations the friendly ladies working here provided.

5/6/2013 GERMANY

A totally sad story, much like a lot of other countries in the early 90's. I do hope the lost men rest in peace, and that their families can live on normally.

7.6.2013 SLOVENIA

Das vereinigte Volk kann niemals auseinandergetrieben werden. Ich hoffe, dass die chauvinistischen Gedanken rundum Karabah sich in einem nachhaltigen und andauernden Frieden auflösen werden. Möglichst bald.

Christof Schauwecker 10.6.2013 Switzerland

Für eine Versöhnung der Völker, das Überkommen von gegenseitigem Misstrauen und dem Aufbauen neuer Freundschaftlicher Beziehungen zwischen den Verfeindeten Leuten die hier Leben. Den Krieg reisst immer Familien auf beiden Seiten auseinander und niemand gehörte Gewinner unbeschädigt aus einem Konflikt hervor.

Alles Gute Niels Krause Switzerland

Հնարավոր չէ չհուզվել, երբ այցելում եմ այստեղ: Այդքա՜ն երկար տարիներ են անցել՝ նրանք չկան… Միաժամանակ չեմ զարմանում ձեր հոգու պնդության վրա՝ չէ՜ որ արցախցիներ եք… Դրանով ասված է ամեն ինչ Աստված Ձեզ հետ:

Ք. Ռակեղջյան
ք.Շուշի
11.06.2013թ.

12.06.2013
Voir tous ces visages disparus et Vera qui cherche à rapprocher les familles est un moment touchant de la visite de cette capitale. La mémoire est ce qu'il reste, merci à vous de l'entretenir.
Emmanuel (France)

Խոնարհվում ենք մեր հերոսների՝ Պետոյի, Կարոտի /որի անունը կրող գրադարանում նաեւ եղանք այսօր՝ այցելելով հուշաթանգարան/ եւ մյուսների առջեւ՝ այսօրվա անկախ ու ազատ պետությունն ունենալու համար: Շնորհակալ ենք մեր տղաներին, որոնց կյանքի շնորհիվ այսօր ապրում ենք խաղաղ երկնքի տակ: Այստեղ մուտք գործելիս թվում է, թե եկեղեցում ենք, մենանում ենք մեր մտքերի հետ ու հոգով պաշտում տղաներին՝ ինչպես սրբերի…

ՀՀ Պոռշյան ավանի Պ.Պոռշյանի անվան
դպրոցի 2013թ.շրջանավարտներ
եւ դասղեկ Եղիսաբեթ Հովսեփյան
24.06.12013թ.

Besten Dank für die interessanten Einblicke in ein Kapitel der bewegten Geschichte Karabakhs. Viel Erfolg auf dem Weg zur Unabhängigkeit!
Michael Portmann (Switzerland)


25 6 . 2013

Velmi pěkně připraveno a zajímavé informace. Děkujeme moc za vysvětlení a ochotu. Paní byla neskutečně příjemná a přestože umíme ruky jen trochu, tak nám vše trpělivě opakovala a pomohla nám pochopit místní problém. Těšíme se na příští návštěvu.

Zdeněk, Pavel (Czech Republic)

Նրանց մոռանալն անհնարին է, մենք նրանց բացակա չենք դնի մեր սրտում…

Շնորհակալություն ենք հայտնում ԱԿԱՀՄ նախագահին եւ վարչությանը՝ Հիշողության այս օջախն ստեղծելու համար:

Շուշիի հումանիտար քոլեջի
ուսուցչուհի Ն. Սպենդիարյան
եւ «Զբոսաշրջություն» բաժնի ուսանողներ
26.05.2013թ.

Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան այցելելով՝ խոր հուզմունք ապրեցինք: Թող անհայտության մեջ գտնվող բոլորը վերադառնան եւ ամոքեն ցաված սրտերը:

Եվելինա Դանիելյան
Թաղավարդի Ա. Գրաշու անվան
միջն. դպրոցի 9-րդ դասարան
27.06.2013թ.

Հնարավոր չէ առանց փշաքաղվելու նայել ձեր նկարներին, տղաներ:

Ամեն մեկդ՝ մի տան ճրագ,
Ամեն մեկիդ սրտում իղձեր՝
Այսօր… չկաք,
Ձեր կատարած գործը, սակայն,
Կա՝ կմնա:

Սուսաննա Շահնազարյան
գ. Թաղավարդ
27.06.2013թ.


04.07.2013
We didn't know much about Nagorno Karabakh conflict before coming in here. Here, in Stepanakert we're learning everyday. The museum of missing soldiers is a proof of these people's strength to never give up. Through uncertainty we were welcomed by a lovely lady that explained as long as she could her some pace in their lives, we wish.

Raquel and Pedro, Portugal

Շատ զգացողական վիճակ մըն էր այս թանգարանին մուտքը… Խոսքերը բավարար չեն, որպեսզի նկարագրիմ:

Շատ շնորհակալ ենք տիկին Վերային՝ այս նախաձեռնութեան համար, շատ դժվար է, բայց բոլորս պէտք է իրեն մեր մօր նման նայինք, մեծ յարգանք ձեզի:

Գնյոյեան Դրո
04.07.2013թ.

Արցախյան պատերազմում մեր բանակի հաղթանակն ապահովվեց նաեւ ա՛յս նվիրյալների շնորհիվ, որոնց ճակա-

տագիրն առ այսօր, պատերազմից 20 տարի անց էլ, անհայտ է… Հուսանք, որ մի օր նրանց լուսանկարները կիջնեն հուշաթանգարանի պատից՝ ի նշան այն բանի, որ տղերքը վերջապես վերադարձել են եւ քայլում են հարազատ հողի վրայով՝ հպարտ իրենց դիմակայելու ուժի համար…

Սամսոն Հովհաննիսյան
09.07.2013թ.

Տպավորված ենք Արցախ աշխարհի գեղեցկությամբ եւ արցախցիների հյուրասիրությամբ: Դժվար գնով է հայեցի պահվել այս դրախտը, այցելեցինք թանգարաններ, տեսարժան վայրեր, զբոսնեցինք երեկոյան Ստեփանակերտի գեղեցիկ փողոցներով: Հուշաթանգարանը մեզ համար կմնա անմոռաց փաստ ու իրողություն: Սա հիշատակի եւ մեծ սպասման տուն է…Դժվարությամբ ենք բաժանվում քեզնից, Արցա՛խ աշխարհ:

Շուշանիկ Մալխասյան, Ապարան
10.07.2013թ.

Թանգարան մտա հուզմունքով, դիտեցի ցավով, շրջեցի հպարտությամբ, հեռանում եմ Հույսով, որ անհայտ կորածների ցուցակը տարեցտարի կկրճատվի…

Տա՛ Աստված:

Գ. Պետրոսյան, փոխգնդապետ,
Ն. գնդի հրամանատար
10.07.2013թ.

Мы надеемся, что воины вернутся к своим родным. Мы вас любим и обнимаем крепко.

Белла Григорян
председатель Общества глухих НКР
10.07.2013г.

Հայաստանի խուլերի միավորման ինքնագործ խմբերով այցելեցինք ԼՂՀ զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանները: Մեր սրտերում վառ պահենք նրանց հիշատակը:

Լ. Մկրտչյան
Հայաստանի խուլերի միավորման նախագահի տեղակալ եւ մշակույթի ու սպորտի պալատի տնօրեն
10.07.2013թ.

«Արքայության զավակներ» պատանեկան խմբի անունից մաղթում ենք, որ այն կենդանի շունչը, որ զգացինք թանգարանում, ընկերակցի ձեզ եւ բոլոր սպասման մեջ գտնվող ընտանիքներին՝ ներշնչելով հավատ եւ հույս

Մենք ցանկանում ենք դառնալ հայրենյաց պաշտպանների արժանի հետեւորդը, շարունակել նրանց գործը:

Կարոտ Մուրադյան,
Արամ Մովսիսյան,
Վահե Գալստյան
10.07.2013թ.

I přes velice složitou problematiku tohoto konfliktu je dobré vidět zájem o čisté lidskou stránku bez upřednostňování politického zabarvení. Expozice je v rámci možností dobře připravená, pan příjemná a milá.
10.07.13. Za IMS děkuje Arsenij Baljajev

Ծառայության անցնելով ԼՂՀ Պաշտպանության բանակի զորամասերից մեկում, շրջագայել եմ նորակոչիկների հետ

հանրապետության տարածքում: Եղանք նաեւ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում:Խոնարհվեցինք նրանց հիշատակի առջեւ : Համբերություն ողջ մնացածներին…

Վահե Մարգարյան
11.07.2013թ.

Ծառայում եմ ՊԲ-ում: Վաշտի հրամանատար՝ թվով 17 նորակոչիկի հետ այցելեցի անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Տղաների դեմքերին նայելով՝ զգացի, որ իմ հոգում խտանում է թշնամու հանդեպ ատելությունը …Չենք թույլ տա, որ անգամ մի թիզ հող հակառակորդը խլի մեզնից:

Սարգիս Ազրջյան
12.07.2013թ.

Պատերազմն իր դրոշմն է թողել մեր հիշողություններում… Այդ նույն պատերազմում անհայտ կորած իրենց զավակներին, քույրերին ու եղբայրներին գտնելու հույսը չկորցրած հարազատները խմբվելով մի ընդհանուր տանիքի տակ, ստեղծելով « Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը», իրենց գերխնդիրը համարեցին միավորել բոլոր ջանքերը՝ պարզելու անհայտության մեջ գտնվողների ճակատագիրը, բարոյապես ու նյութապես աջակցել կազմակերպության անդամներին: Հիմնադիր համագումարը միաձայն միության նախագահ ընտրեց պատերազմից տուն չդարձած ազատամարտիկի մայր Վերա Գրիգորյանին: Կարեւորագույն խնդիր էր համարվում անհայտ անձանց ցուցակների ճշգրտումն ու հստակեցումը: Եվ միության նախագահ տիկին Վերան հավաքեց տղաների կենսագրությունը, մարտերի ժամանակ ու վերջին պահին իրավիճակը շատ թե քիչ բնորոշ փաստաթղթերն ու մասունքները՝ առանձնաց-

նելով թղթապանակներում: Այդ տեղեկությունների մի մասն այսօր բացառիկ ցուցանմուշներ են համարվում Վ.Գրիգորյանի նախաձեռնությամբ ստեղծված հուշաթանգարանում: Տիկին Վերան «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության» մի մասնիկն է, առանց ում անհնար է պատկերացնել միության գործունեությունը:

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատները չեն կորցնում իրենց զավակներին վերադարձնելու հույսը: Նրանք ամեն ինչով օժանդակում են Միության գործունեությանը, դրանով խորհրդանշելով իրենց զավակների, քույրերի ու եղբայրների նկատմամբ կարոտն ու սպասումը…Այդպիսի նշանակություն ունեն Միության հուշաթանգարանում կազմակերպված միջոցառումները: Նմանատիպ միջոցառումների ժամանակ մեկ անգամ եւս հիշում ենք նրանց, ովքեր իրենց անձնազոհության, նվիրումի եւ հերոսական ոգու շնորհիվ կերտեցին մեր հաղթանակը:

«ԱԿԱՀՄ» նկատմամբ ցուցաբերվող ուշադրությունից կարելի է եզրակացնել, որ վիշտը դուրս է եկել որդեկորույս մայրերի սրտից եւ դարձել համաժողովրդական: Այն դարձել է մերը, եւ յուրաքանչյուրս պարտավոր է սատար կանգնել ցանկացած հարցում: Եվ ամենամեծ աջակցությունը կլինի այն, եթե կարողանանք համատեղ ջանքերով պարզել մեր տղաների ճակատագիրը: Չէ՞ որ մենք բոլորս քաջ գիտակցում ենք այն ծանր դրությունը, որում գտնվում ու անորոշության ծանրությունը, այն խեղդում է հարազատներին…

Խնդրենք Աստծուն, որ վերադարձնի մեր որդիներին…

ԼՂՀ ՊՆ ՌՀԴ եւ ՀԿՀԿ բաժնի սպա՝
կապիտան Նունե Աբաղյան-Գաբրիելյան
12.07.2013թ.

Խոնարհվում ենք Ձեր առջեւ:
Թող Աստված Ձեր հույսն ու հավատն իրականացնի:

Տանյա Առստամյան, Ծովիկ Սաղաթելյան
5.07.2013թ.

Խոնարհվում եմ ձեր լուսանկարների առջեւ, տղաներ, թող բարեբախտությունը մի օր տուն վերադարձնի բոլորիդ:

Վահրամ Հակոբյան, թիվ 46492 զ/մ
15.07.02013թ.

Սրտանց ցանկանում ենք, որ նրանք գտնվեն եւ հասնեն իրենց ընտանիքներին, վառ պահեն իրենց օջախների կրակը:

Նարեկ Մկրտչյան
16.07.2013թ.

Thanks for letting us have a look around this touching memorial to the war. May it never be forgotten.
16.07.2013, Gary, UK

我都不大懂這位女士說什麼，我是從香港來的背包客，
也是第一次來，還沒有來亞美尼亞之前，我是不知道有
Karabakh 這个「国家」，很高興可以來這裡，認識這裡的
文化歷史。

Super West - Jack Chow, Hongk
16-7-2013

Thank you for showing us around this museum, this is a conflict little-known and understood in the West and it is sobering to see this tragic piece of it.

Dylan Trent Vancouver, Canada



来 Karabakh 之前没听说过有这个国家。来了这里之后，感觉这个地方是
个很美丽的地方。尤其喜欢 Stepanakert 这个城市，安静和谐，人们友善
喜欢每天傍晚坐在喷泉广场，喝喝茶聊聊天，一直到深夜。原以为
这么个国家，原来里的人们美有如画。

@纳森也中校V
2013/7/17

Ni bula vinaka, sai koya saka ogo e dua na nai
valanareumi vinaka ena vukudra na luvedra era duri
era vuku ni vanua. Sa neimami masu na luve
ni vanua o Viti me na tiko kei kemuni na vakaqa
ni noda Kalou ko Jiova.

EPINERI VULAKEMVAKI
Suva, Fiji.
17/07/2013...

Առաջին անգամ ենք Ղարաբաղում: Ի՜նչ անուշ աշխարհ… Այս թանգարանն էլ շատ յուրահատուկ է… Հուսով ենք, որ ազգն ու աշխարհը կհիշեն այդ յուրահատկության մասին եւ անեն հնարավորը՝ տղաներին անհայտ հեռուներից վերադարձնելու համար:

Թեհրանից /Իրան/
եւ Գլենդելից /ԱՄՆ/՝
Իվեթ Շահգալդեան,
Ալեն Բարսեղեան,
Էդգար Շահգալդեան,
Քրիստին Շահգալդեան,
Սառա Թերզեան,
Համլետ Բունիաթյան:
17 յուլիս 2013թ.

Ամեն սփյուռքահայ պատանի ու երիտասարդ, որ աշխարհի չորս ծագերից գալիս է տեսնելու Արցախը, շրջելու նրա ազատագրված տարածքներում, պիտի զգա, որ ոտքը Սրբազան հողի վրա է դնում, զգա այդ հողի ուժն ու արժէքը:

Բայց շրջագայությունը կատարյալ չի լինի, եթե նրանք չայցելեն հայրենափրկիչ պատերազմի թոհուբոհում անհայտ կորած ազատամարտիկների այս խորախորհուրդ թանգարանը… Հոս է, որ նրանք լավագույնս պիտի իմանան, թէ ինչ է նշանակում Ազատ Հայրենիք: Հոս է, որ շատ ավելի տեղին է հնչում «հողն արյունով են փրկում» ֆրազը, իսկ այցելելով՝ վիրալիցքավորված են վերադառնում տուն՝ մտածելու, թէ Հայրենիքը նախ եւ առաջ իրեն է եւ հայրենիքը պահելու ու ծաղկեցնելու պատրաստ է նախ ինքը…

Իբրեւ Մուսա-լեռցիներ՝ մենք հաճախ ասում ենք «Մենք լեռն ենք տակավին, թող որ գայ թշնամին»… Ու եթե Մուսա լեռան քառասուն օրվա սխրագործությունը կրկնեց Արցախի հերոս ժողովուրդը, բազմաճակատ մարտերում ու մանավանդ Շուշիի ազատագրմամբ վերահաստատեց հայոց երբեմնի արժանապատվությունը՝ թող որ բարձր գին վճարելով, որի խոսուն վկան է այս հուշաթանգարանը, ապա պիտի հավատալ, որ հայը վերստին բռնել է անպարտելության ուղին:

Մեր ազատամարտիկների թափած արյան ամեն կաթիլը պիտի ծնի նոր հերոսներ, որոնք պիտի կերտեն ամբողջական Հայաստան՝ ամբողջական հայությամբ. Ազատ ու անկախ միացյալ Հայաստան: Այդովը մեր զոհվածների եւ անհայտ կորածների յիշատակը կմնայ անմար:

Յակոբ Այնթապլեան եւ ընտանիք՝
Մուսալեռ - Այնճարից
17 յուլիս 2013թ.

Եղա հուշաթանգարանում: Ի՜նչ ասեմ... Պարզապես իմ զորակցությունն եմ հայտնում անհայտ կորած ազատամարտիկ ընկերներիս ընտանիքներին: Արթիկի շրջանի Փոքր Մանթաշ գյուղից վեր եմ կացել եկել, որ նրանց նկարներին ասեմ՝ տղերք, իրո՛ք ոչինչ ու ոչ ոք չի մոռացվել, մենք հիշում ենք ձեզ, ձեռքներս են, որ չեն հասնում ձեզ.... ներող եղեք, տղերք, ու դիմացեք: Դիմացեք, գուցե մի օր ցանկալի ճանապարհ կբացվի, ո՜վ գիտի. կյանքում ամեն ինչ էլ լինում է: Հավատացեք ու դիմացեք:

Վերջում ասեմ, որ Կարոտ Մկրտչյանի անվան գրադարանը հիացրեց ինձ, շատ հետաքրքիր գրքեր կան այնտեղ, բայց ամենագնահատելին հենց այն է, որ գրադարանը կրում է անհայտ կորած հերոս հրամանատարի՝ պռոշյանցի Կարոտի անունը... Մի պայծառ տղայի, որին հայրենիքում շատերն են հիշում:

Գարեգին Թորոսյան, նախկին ազատամարտիկ
18.07.2013թ.

Thank you for welcoming me into your wonderful museum – the pursuit of freedom and independence has not been easy, but it is good to see that the solution will be to honour and remember, and not to let anger overtake the desire for the future.
Edward Thomas Barkes – 20th July 2013.

22nd July 2013

I haven't words for describe this museum. I think that only the people can to understand this tragedy for to build a very durable peace. Thank you very much!
Volodo – Abh

Very moving to see all the photos of the those who gave their lives for their freedom. It speaks deeply to us all.

Robert Smith, UK

Interesting to know about Karabakhian history. Albéric HERPIN France 22nd of July 2013.

It's a powerful emotion to come to a place full of memory and sadness.
I appreciate in particular that nobody who dies in the struggle for civil rights is forgotten in Stepanakert.

Carlo Sango Italy

To miejsce ukazuje dramat Górnego Karabachu oraz jego mieszkańców. Mam nadzieję, że dramat lat 90' nigdy więcej się nie powtórzy

Maciej Lebuk Poland

L'accueil réservé par les habitants du Haut-Karabagh est exceptionnel. Les visages et les maisons semblent porter le deuil d'une guerre tragique, mais les plans se reforment, les façades se reconstruisent, les arbres n'ont jamais cessé d'être là, de même que l'espoir, certainement, sans qui cette république, forte comme ses gens, n'existerait pas encore ici. Je souhaite à ce territoire un avenir long et prospère.

Geoffroy de Nazelle
23/07/2013

Восхищаемся вашим мужеством и выдержкой, желаю вам найти ваших близких живыми и здоровыми.

23.07.2013г.

Թող Աստված պահապան լինի ձեզ: Դուք ունեք մեծ համբերություն, որ սպասում եք ու չեք տրտնջում: Այդ հավատի շնորհիվ է, որ կարողանում եք ձեր մեջ ուժ գտնել ու սպասել: Թող Տիրոջ օրհնությունը լինի Ձեզ, Տիկին Վերա, ու բոլոր-բոլոր սպասողներին:

Օրհնությամբ՝ Տեր Հովհաննես
քահանա Հովհաննիսյան
23.07.2013թ.

DĚKUJEME ZA POUTAVÉ VYLÍČENÍ HISTORIE KONFLIKTU O NAHORNÍ KARABACH. PRŮVODCI BYLI SKVĚLÍ A DOKÁZALI VZBUDIT NÁŠ ZÁJEM O TUTO ZEMI

24. 7. 2013

ČESKÁ REPUBLIKA

Առաջին անգամ չէ, որ մտնում եմ անհայտ կորածների հուշաթանգարան ու միշտ էլ՝ հույս ու հավատով, թե իզուր չեն որդեկորույս մայրերն սպասում գերության մեջ գտնվող իրենց զավակներին…

Վ. Գոնչորյան
Վ. Սրբեփանյան
24.07.2013թ.

Very sad to see all of this. Hopefully there will never be a repetition of this!

Ine & Jeroen – Belgium 24/7/2013

Сегодня я посетила Ваш музей. Спасибо Вам и всему Степанакерту, что чтите память о без вести пропавших.

Рина Саркисян
24.07.2013г.


Na gauna keda vakamuriya kina nai tabanoa
e koto no, ka keda sarava na i vovo se na
ka bula mai na valu, eda lolokn balita ni
na valu ena vuku ni nodra. Na kaci ni
vanua e dua na ka bibi ka keda na dui
vakadinadinataka talega ena noda vanua.
Me solati kemuni na loloma kei na
vakacegu leva ni noda Kalou ko Jiova.

Epineri Vulakouvaki
Epineri Vulakouvaki
Suva, Fiji. 24/07/20

Сегодня я побывал в вашем музее. Память... здесь столько памяти и воспаминаний о тех, кто когда- то зашищал наш Карабах, отдав за родину жизнь. Нас сегодня здесь около 70 человек и все под большим впечатлением.

Гор Айрумян
24.07.2013г.

Մենք՝ 37221 զորամասի զինվորներս, շատ տպավորված ենք այս թանգարանով ու հպարտ՝ մեր հաղթանակած բանակով:

27.07.2013թ.

Very moving and sad insight to the war in this region. Interesting exploration of the attendants.
Many thanks for the visit.
Robert Thürlimann 29/07/13
Fabian Thürlimann
Luzius Thürlimann

INDEED A VERY MOVING MUSEUM. ALL THE BEST WISHES TO THE PEOPLE OF KARABAKH WITH A HOPE FOR A BRIGHT FUTURE. 26/7/13
ASK GUDMUNDSEN, DENMARK

May peace remain in the Karabagh region and no more such museums are needed. I wish Karabagh and its people a bright future and I hope to see the region prosper again if I get the chance to return.
Eric Shm, Hong Kong

37221 զորամասի հրամանատարության եւ անձնակազմի անունից շնորհակալություն ենք հայտնում Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի տնօրենին՝ ստեղծածի համար եւ մաղթում նոր հաջողություններ:

Ա.Ազատյան, Զ/մ ՀԱՀՏԱԳՏ, կապիտան
27.07.2013թ.

Մենք՝ Մոնռէալի «Սուրբ Հակոբ» վարժարանի աշակերտներս ու մեզ ընկերակցող ուսուցիչները կը խոնարհինք գլուխներս մեր նահատակ անունների առաջ, իսկ անհայտ կորած տղաների համար աղօթում ենք, որ վերադառնան իրենց տառապող մայրերին:

Տերն ընդ ձեզ, հերոս մայրեր:

Մոնրեալի «Սուրբ Հակոբ» ազգային վարժարան
27.07.2013թ.

Einblicke in den Krieg von der Seite Karabakhs, Traurige Geschichten und Tragödien die hinter den unzähligen Portraits stehen. Simon Voyt, Germany

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներ՝ Ա .Պողոսյանս եւ Ա.Ստեփանյանը , հույս ունենք, որ տղաները կվերադառնան: Վատագույն դեպքում՝ հանգստություն եւ խաղաղություն նրանց հոգիներին…

27.07.2013թ.

Բոլորին վերադարձ ենք ցանկանում:

40 նորակոչիկներ

Мы, потомки Нагорного Карабаха, посетили музей без вести пропавших, глубоко впечатлены увиденным, верим, что найдутся парни, которые оставили след в истории Арцахской войны. Проделана большая работа директором музея Григорян Верой Армоевной и его работниками.

Преклоняем голову перед пропавшими героями Арцахской войны. Мы всегда будем помнить о них.

М. Арамян.
Н. Багдасарян
Полтава /Украина/
29.07.2013г.

Բարձունքը մերն է՝
տղերքը չկան…
Տղերքն ավելի
բարձրում մնացին…

Գեւորգ Ասպուրեան
Լիբանան
30.07.2013թ.

May peace reign in Karabakh region.
Despite the fact that museum is very well organised and stories and published books by the lady who runs it are interesting it would be much better if places like this doesn't exist in the world

30.07.2013

Byli jsme tu, návštěvníci z Prahy z L'Fabra
30.07.2013
Tomáš Suchan FELIX

Grazie per la bella visita al museo della signora Vera... Perchè la guerra non ci sia più
31.07.2013
Giovanni (BOLOGNA ITALIA)

Il museo è molto ben curato con estrema passione e professionalità per ricordare le atrocità che gli uomini non finiscono mai di commettere.
Questa volta speriamo che sia l'ultima e che il sole non smetta mai di splendere in questa fantastica terra. Grazie alla signora Vera e un abbraccio a lei per il suo figlio che purtroppo è caduto per difendere la propria patria.
31.07.2013 Andrea - Bologna (I

Հպարտության զգացում ենք ապրում մենք՝ անկախության սերունդը: Անկախություն, որ ձեռք բերվեց լավագույն տղաների քաջագործության շնորհիվ:

Պարտավորվում ենք հարգել զոհվածների հիշատակը, զորակցել անհայտ կորածների ընտանիքներին, որոնք հույսը չեն կորցնում, օրնիբուն սպասում են իրենց որդուն, եղբորը, հորը…

Իր երկրի պատմությունը չիմացող անձը դատապարտված է կործանման:

Անի Գեւորգյան
ԵՊՀ «Վարդանանք» ՌՀԴՄ
03.08.2013թ.

Արցախյան պատերազմը ոգու մի յուրօրինակ արբեցում էր, արբեցում, որի շնորհիվ 21-րդ դար մտանք հաղթանակած: Ցավոք, հաղթանակն այդ հեշտ չտրվեց մեզ, ունեցանք զոհեր, անհայտ կորածներ… Բայց կա՛ ազատ Արցախը, կա ինքնիշխան Հայաստանը, եւ ապագան էլ մերն է լինելու:

Հայկ Բեջանյան
ՀՊՏՀ
03.08.2013թ.

Վերա ջան, Աստված ուժ ու կարողություն տա դիմանալու…

Երանի՜ բոլորը վերադառնան:

Քեյթի Գունդակչյան
03.08.2013թ.

Посещал музей памяти безвести пропавших и до глубины души взволнован увиденным.Хочу выразить благодарность всем тем, кто принимал участие в его создании.Высоко ценю особенно деятельность бессменного руководителя СРБПА - увжаемой Веры

Григорян- матери безвести пропавшего воина... Этот музей есть и будет школой воспитания молодежи Арцаха!

Юрий Аванесян, отец погибшего солдата
03.04.2013г.

Անհայտությունն անորոշություն է, իսկ նրանք անորոշ չեն, նրանք թողել են մեզ ազատ , անկախ հայրենիք: Ուրեմն՝ եկեք նրանց անվանենք հայրենիքի նվիրյալ զավակներ: Նրանք անհայտ կորածներ չեն, նրանք մեզ հետ են այսօր եւ ապագայում:

Նկարիչ Ս.Գաբրիելյան
05.08.2013թ.

Հուշաթանգարանը տպավորիչ է: Թող Աստված պահապան լինի տղաներին ու ձեզ. անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ: Ձեզ: Պահապան լինի ողջ ազգիս հայոց, ձեռքը՝ հովանի մեր զինծառայողների գլխին…

Տիկին Գրիգորյանի գործը սուրբ գործ է… Ձեզ պես հայրենասերների շատ լինելու դեպքում ազգը կբարգավաճի:

Թիվ 38677 զ/մ կրպ.սերժանտ
Անուշավան Սահակյան
06.08.2013թ.

Հավերժ հիշատակ մեր հերոսներին, որոնք իրենց կյանքով մեզ կյանք շնորհեցին: Խոնարհվում ենք նահատակվածների շիրիմների եւ անհայտ կորածների տառապանքի առջեւ, աղոթում բոլորի հոգիների համար:

Նրանց մայրերին՝ անսպառ հույս ու համբերություն…

Անուշ Հայրիյան եւ փոքրիկ Տիգրան
06.08.2013թ.

C'est un grand moment d'émotion et de souvenirs douloureux qui sont rassemblés ici. Témoignages précieux et douloureux. Archives déterminantes pour la suite du combat pour la reconnaissance du RHK.

Aruchumian Nichanian.

Jesteśmy bardzo poruszeni wizytą w tym muzeum, pani, która nas prowadziła jest bardzo miła, bardzo nam przykro z powodu zaginięcia jej syna... Szczególnie wzruszające jest zdjęcie przedstawiające Mamy przy jednym stole z Armenii, Nagorno Karabach i Azerbejdżanu, których synowie zaginęli. Mamy nadzieję, że konflikt tego rodzaju nie powtórzy się w przyszłości.

Marcin, Karina i Julian Stencel

WWW.KARINAMARCIN.PL

Wiera, I wish peace for you, your son and your country. Thank you for your kind welcome and hospitality - it will leave a lasting impact on my memories of my visit to your beautiful country. Your smile outshines the darkness of the history that surrounds you.

Daniel Krysztopa 2-9-2013

Շնորհակալություն հիշողության այս կայանն ստեղծողներին:

07.08.2013թ.

Կորցրածդ թող շուտով վերադառնա, հա՛յ մայր:

L. U.
07.08.2013թ.

7/8/2013
Im sorry for your losses. Your country is beautiful. Im happy that you ~~finally~~ got your independence
Sarah [Spain]

7/8/2013
It is unfourtunate that these events had to happen, I'm sorry for your loss and may you even find your loved ones in the future
Ali [Lebanon]

7/08/2013
I wish to this territory a peaceful future
Irene [Italy]

Спасибо за память по без вести пропавшим.Спасибо за ожидание их с войны, несмотря на время. За уверенность в продалжение жизни после смерти детей. За стойкость, мужество, непоколебимую силу жизни.

Акунц Лаура, Гидоян Ивета
Жительницы г.Еревана
08.08.2013г.

Տիկին Վերա, հիացած եմ այս սիրո, եռանդի ու նվիրվածության համար… Աղոթենք Աստծուն, որ բոլոր որդիները ողջ եւ առողջ վերադառնան տուն, եւ այս թանգարանը դառնա նրանց ու ձեր ուրախ հանդիպումների հավաքատեղի:

Սվետլանա Մանուկյան
ՀՀ Սարդարապատի հուշահամալիր,
Հայաստանի ազգագրության եւ
ազգային ազատագրական
պայքարի թանգարան
09.08.2013թ.

Մենք՝ Վայոց ձորի Խաչիկ գյուղի միջնակարգ դպրոցի պատանի երկրապահներս, շնորհակալություն ենք հայտնում այստեղ կատարված հսկայական աշխատանքի համար:Թող անհայտ կորած ազատամարտիկները հայտնվեն մի օր… Մենք լավ ենք պատկերացնում Արցախի հոգս ու խնդիրները, քանզի ինքներս էլ գտնվում ենք ուրիշինը դարձած մեր Նախիջեւանի սահմանագլխին… Գլուխ ենք խոնարհում զոհված ազատամարտիկների շիրիմների եւ անհայտ կորածների տառապանքի առջեւ:

Վ. Գրիգորյան
Խաչիկ գյուղի ԵԿՏ հրամանատար,
դպրոցի տնօրեն
10.08.2013թ.

Եկել եմ Էջմիածնից: Շատ մեծ էր այս թանգարանը տեսնելու ցանկությունը: Եվ հուզմունքը, որ զգում եմ հիմա, դժվար է բառերով նկարագրել: Նայում եմ տղաների նկարներին՝ համակվում ցավով ու հպարտությամբ: Նրանք իրենց ջահելությունը չխնայեցին հայրենիքի համար, նրանք օտար բանտերում ժամանակից շուտ ծերանում են հարազատներից

հեռու, կտտանքների տակ…Խոնարհենք գլուխներս նրանց տառապանքի առջեւ եւ համբերություն մաղթենք…

Վերա Պողոսյան
11.08.2013թ.

Շատ ազդեցիկ թանգարան է… Բնույթով բոլորովին տարբեր: Անչափ հայրենանվեր աշխատանք է կատարված: Ապրողներն են, որ պահում են զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկների վառ հիշատակը: Փառք ու պատիվ մեր ազատամարտիկներին: Տիկին Վերա, Աստված Ձեզ առողջություն եւ ուժ տա, որպեսզի Հիշատակի եւ Սպասումի այս տունը երկար ու լավ պահվի… Եվ թող ոչ մի մայր չզգա այն ամենն, ինչ Դուք եք զգացել ու ձեր բախտակիցները:

Գայանե Շահբազյան
թ.Էջմիածին
12.08.2013թ.


This was a strong experience.
This heroic fighting stirs us when
we come so close to us as does
here. We have also been out out
town and felt the ferocity of the
battle - Thank you for this
memorial-museum.

Յուզիչ յանդիպում եւս մեր Արցախի այցելութեան ընթացքին:

Հոս կսորվինք, թե յոյսն ու հայրենասիրությունը որքան մղիչ զգացումներ են:

Աղոթքով պիտի հեռանանք այս վայրէն:

Շիրաճեան ընտանիք
Լիբանան

Un musée émouvant dans sa profusion d'objets chargés d'émotions. 239 disparus de trop. Notre cœur est avec eux et nous leur adressons nos prières les plus chaleureuses. Auvendal & François, PARIS (France)

Um saúdo desde a Galiza. Vivam as loitas de libertação. Mas quiçá haja demasiados cruzes e Cristos entre os desaparecidos/as! Berto 15-8-13

13.08.2013թ

Մենք՝ «Ռաֆֆի» միության սկաութերս, մուտք գործելով այս սրբավայր, մեծ ցավ զգացինք կորուստների համար եւ կուզենանք զորակից դառնալ ձեզ, մայրեր, որ սպասում եք ձեր որդիներին…

Անձամբ ես չեմ կարծում, թե կյանքիս այս րոպեները երբեւէ կմոռանամ…

Մարո Չարմանչյան
Հայ մարզամշակութային «Ռաֆֆի» միություն
16.08.2013թ

Thank you for letting us visit the museum - after being here and seeing the countryside it was very interesting to see and learn more about the war.

Karla Wilkinson Canada

Daniel Koziol Germany

Saturday, August 17 2013

Very moving exhibition, I wish this country will never have to go through such a pain and will live peacefully forever.

Petr, Czech Republic 17th August 2013

Հերթական անգամ այցելեցինք հուշաթանգարան: Այս անգամ մեզ միացել էին Ղարաբաղյան պատերազմի վետերանների միության տղերքն ու Արթիկի թիվ 7 ավագ դպրոցի նախազորակոչային տարիքի աշակերտները:

Շնորհակալություն տիկին Վերային՝ իր կատարած աշխատանքի համար:Մենք հավատում ենք, որ մի օր իրենց սիրող ափը կվերադառնան տղերքը…

Աննա Գրիգորյան՝ «Երիտասարդության կամք»
ԵՀԿ նախագահ, Գարիկ Եղիազարյան,
Տիգրան Խաչատրյան՝Ղարաբաղյան պատերազմի
վետերանների միություն,
Վաղինակ Չարչյան՝
Արթիկի թիվ 7 ավագ դպրոց
18.08.2013թ.


That peace prevail on this land.

Loulé - Portugal
20/08/2013

Благодарим Вас за проделанный огромный путь, за вечную память павшим в этой страшный войне, за вашу веру и надежду на возвращение всех без вести пропавших. Пусть надежда никогда Вас не покидает.

Татевосян
20.08.2013г.


It is now 25 years, since the liberation
war of Nagorno-Karabakh took place, and
many mothers, sisters, wives, are
still missing their loved ones. This
museum is a moving tribute to all
of them, and will make sure that
they will never be forgotten. They
fought for a good cause, for their
own land, for their own values, for
justice, for love. This is a story
of freedom and resistance, and they
gave all they have: their lives.

Thank You, Merci
Carlos Pereira, Portugal

Տպավորիչ աշխատանք է տարվում այս թանգարանում: Մենք խոնարհվում ենք մեր զոհված եւ անհայտ կորած զինվորների առջեւ, հուսով ենք, որ վերջիններս մի օր կվերադառնան հայրենիք: Աստված լուսավորին նահատակների հոգին:

Տէր եւ փրկիչ՝ Գասպար,
Ալիկ Արոյաններ
եւ զավակներ՝ Լուսիկ ու Սերժ
21.08.2013թ.

Խոնարհումս՝ բոլոր անհայտ կորածներին եւ զոհված ազատամարտիկներին:

Կարեն Բարսեղյան
28.08.2013թ.

Հուզմունքով եմ գրում այս տողերը: Շնորհակալություն այն մարդկանց, որոնք վառ են պահում հերոս մարտիկների անուններն ու հիշատակը, թող Երկիր մոլորակի վրա այլեւս տեղ չգտնեն նման ողբերգություններ…

Նունե Մարգարյան
24.08.2013թ.


Tyle już lat minęło od wojny a konflikt wydaje się
równie tępy jak niegdyś – mamy jednak nadzieję.
Że dla wszystkich przyjdzie ten upragniony moment gdy
zwaśnione narody będą umiały żyć obok siebie a nasze
dzieci nigdy nie doświadczyły wojny
Adam, Bartek z Polski
27/08/2013

Բառ չունեմ՝ քսան տարի անհայտությունում գտնվող իրենց զինվոր զավակներին սպասող ծնողների վշտին զորակցելու… Թող արեւ կծագի անհայտ կորածների ճանապարհին, թող Աստծո հրեշտակների թեւերով տուն կվերադառնան:

Ձեր այս մեծ գործից ուղղակի հիացած եմ, թող տղաները գան, եւ թանգարանը դառնա նրանց հաճախման ուրախատեղի:

Նաիրա Սարինյան
Խաչենի միջն. դպրոցի ուսուցչուհի
27.08.2013թ.

Notre coeur se déchire à la vue de tous ces patriotes morts ou disparus pour que revive nos terres ancestrale. Tous des heros qui resteront dans nos pensées. Vive L'ARTSAKH et l'ARMENIE
2/9/2013
Mme Stepanow Annie et les membres de l'association Arménienne des Pennes Mirab

Քաջալերելի է ձեր այս յանդուգն ու հետեւողական աշխատանքը:

Ձեր սրտի իղձն՝ ի կատա՛ր…

Վարուժան Պայահասեան
Մարսել
Ֆրանսիա
02.09.2013թ.

Յարգանք՝ Արցախի Ազատագրական պայքարի զոհված եւ անհայտ կորած հայորդի զինվորներին, որոնք իրենց ամե-

նաթանկը նվիրեցին յանուն Հայրենիքի սիրոյ:

Արցախը եղավ Ազատ, Անկախ եւ Միացավ Հայաստանի գաղափարի իրականացման, Անդրանիկի հերոսութեա, որը պիտի իրականանայ յաջորդ սերունդների նվիրյալ գործով: Այսպէս միայն մեր հերոսները հանգիստ կառնեն, նրանք ովքեր զոհվեցին նույն գաղափարով եւ յավերժ դարձրին հայրենասիրությունը:

Հենրիկ Խալոյեանի ընտանիք
03.09.2013թ.

I hope that your hopes will be answered at a day soon and you will see your boys again. Never lose your hopes!

09.09.2013 BOGDAN IVANEL

Máte tu krásné hory. Vesnice jsou zničené. Doufám, že až přijedu příště, budete je mít už znovu postavené.

P. Horký, Praha. 16.9.2013

You will always be in our hearts, thoughts and prayers. We will remember them Գոռ Գոռ Խալոյեան

I cannot imagine the pain you all must feel. God be with you, comfort you and fill you with his love and grace. We remember them.

Christina Manning Jekel
Sept 2013

May you find peace and love - you are very strong for enduring this pain. We'll keep them in our hearts and minds forever.

Michelle Haggerty 2013
Steph Kulyoptewicz

Stephen Brotherton Sept 2013

May peace come to all whose loved ones are remembered and still prayed for here. May there still be freedom - a freedom that the evil men of this world can not destroy.

Father David Thomas (Wales, U.K.)

peace of prience, our Lord of Lord may bring abundance of peace to all missing soldier, and their family, my prayers, all love, deep respect will be with you always

Ne Sasa
Chin State, Burma

May God bless this place and I will pray for you everyday and think you always.

24.9.13 Lucy Clements
(Wisconsin, USA)

I find this museum very sad obviously but fortunately Nagorno Karabakh has finally found peace.

All the best to the people of Karabakh
Martin Naliß
24.09.2013

I think you do a great job of showing off your country's history as well as your passion for it! I hope you will be able to receive interested guests for a long time.

Jim (from the Netherlands)
24.9.2013

Ich wünsche den Menschen der Republik Berg-Karabach, dass Sie in Frieden, Unabhängigkeit und Liebe leben können. Das Museum hat mich sehr beeindruckt

Timo (from Mainz / Germany)
26.09.2013

Dieses ist eine sehr schöne Gedenkstätte, welche lange erhalten bleiben sollte. Es ist schön mit welcher Freundlichkeit man hier empfangen wird. Ich wünsche diesem noch sehr jungen Staat, dass er schnell weltweit anerkannt wird und die Menschen hier in Zukunft in Frieden leben können, ohne sich jemals wieder um einen nahenden Krieg machen zu müssen.

Nicolai Behrends aus Bremerhaven, Deutschland
26. 9. 2013

This museum keeps the story of the fates of many sons alive in a remarkable, unique way. In a way, missing soldiers keep the wounds of the relatives, especially the parents, longer open. One can feel the hurt of those great women that keep the

memory alive.
1.10.2013, Olaf, Berlin, Germany
Stefan, Berlin, Germany

Very touching and interesting museum. May there be peace in your country forever and no more missing people ☺

Zbyněk, Czech Republic, 1.10.2013

Իմ հարգանքի ու երախտագիտության տուրքն եմ տալիս բոլոր նահատակվածներին, անհայտ կորածներին եւ ողջերին, որոնք Արցախյան գոյամարտի տարիներին իրենց հերոսական գործերով, արիությամբ ու խիզախությամբ կարողացան բազմապատկել հայ ժողովրդի մարտական փառքը ու միշտ պատրաստ էին թեկուզ մեկ քայլ եւս կատարել Արցախի անկախության ճանապարհին՝ եթե անգամ այն իրենց համար լինի վերջինը…

Փառք ու պատիվ Արցախի մայրերին, որոնց ծնած զավակները հանուն հայրենիքի ու հավատքի գերազանցեցին սպարտացի մարտիկներին: ԱԿԱՀՄ նախագահ տիկին Վ.Գրիգորյանն իր գործընկերների հետ հսկայածավալ աշխատանք է կատարել՝ ուղղված անհայտ կորած ազատամարտիկների հարազատների համար բոլոր առումներով ուշադրություն եւ օգնություն ապահովելուն:

Ռ. Խաչատրյան
02.10.2013թ.

This very well kept museum keeps the hope alive to trace the whereabouts of the missing. A very sad disaster for the families well beyond the war. May this place bring a little comfort and hope and keep their memory alive for ever.
DAVID VERBEECKT, Belgium
02.10.2013

Հիշատակի տուրքն ենք տալիս Արցախյան ազատամարտի բոլոր հերոսներին: Մենք՝ երիտասարդներս, հպարտանում ենք մեր հայրերի, պապերի սխրանքով: Նրանց թափած

արյան յուրաքանչյուր կաթիլն ավելի է բարձրացնում մեր մարտական ոգին:

Իմացած եղեք, որ միշտ պատրաստ ենք կանգնել թշնամու դեմ՝ մեր պապերի թողած հողերի պաշտպանության ու պահպանության համար…

Երեւանի Մալթիա-Սեբաստիա համայնքի
երկրապահ կամավորական ջոկատ
04.10.2013թ.

Մենք այսօր շատ ցնցված ենք: Իզուր չեն ասում «Լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել»: Տիկին Գրիգորյանը մանրամասն բացատրեց ամեն ինչի մասին: Մենք հուզված ենք հեռանում այստեղից, բայց՝ ակնկալիքով, որ հաջորդ այցի ժամանակ տղաների մի մասն արդեն հարազատների մոտ կլինի…

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան
թիվ 7 հիմնական դպրոցի 7բ դասարանի
աշակերտների եւ ծնողների անունից՝
Գայանե Զաքարյան
04.10.2013թ.

Այսօր այցելելով Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, ես եւ իմ ընկերները ծանոթացանք ցուցադրանքին: Իմ անունից կարող եմ ասել, որ շատ ցնցված եմ… Այս մեծ գործի համար՝ շնորհակալություն տնօրինությանը:

Վահան Սողոմոնյան
06.10.2013թ.

Спасибо большое за такую экспозицию Вашего музея. Я была очень тронута рассказами о войне. Вечная память всем защитникам Родины.

Бадоина Нина
Зармайр Бенклян
Ереван-Москва
08. 10.2013

Հերթական անգամ Արցախում եմ. մասնակցելու եմ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության 15-ամյակի հանդիսավոր միջոցառմանը:Շնորհակալություն:

Խոնարհվում եմ այստեղ կատարված աշխատանքի համար:

Աննա Գրիգորյան
«Երիտասարդական կամք» ԵԿՀ նախագահ
10.10.2013թ.

Ողջունում ենք Վերա Գրիգորյանին Անհայտ կորածների 15-ամյակի միջոցառմանը եւ ցանկանում նոր հաջողություններ հերոս տղաների հավերժացման գործում:

«Ղարաբաղյան պատերազմի
վետերանների միության նախագահ»
Յուրի Միքայելյան
Արագա Մկրտչյան, Արտուշ Բաղալյան
Հայաստան
10.10.2013թ.

Շնորհակալություն այս օջախին, որն ի թիվս այլ գործառույթների՝ ծառայում է նաեւ մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությանը:

ՊԲ փոխգնդապետ Փաթյան

Թող լինի այնպես, որ այս թանգարանի պատերից կախված նկարները թեթեւ «սրտով» ետ դառնան ընտանիքները…Այդպես կլինի, երբ վերադառնան մեր տղաները:

Թող Ղարաբաղում եւ ընդհանրապես աշխարհում ոչ մի անհայտ կորած չլինի. բոլորն ապրեն ազատ, անկախ հայրենիքում, մայրերն՝ իրենց բալիկների հետ…

Տողի միջնակարգ դպրոցի
6-րդ դասարանի աշակերտներ
16.10.2013թ.

Ամեն անգամ հուզմունքով ենք ունկնդրում հայրենիքի պաշտպանության համար անձնազոհաբար մարտնչած, բայց անհայտության մեջ մնացած ազատամարտիկների մասին տեղեկությունները: Անսահման է նրանց մայրերի վիշտը. չգիտեն՝ ո՞ղջ է իրենց զավակը, թե՞…

Նրանցից մեկն էլ թանգարանի տնօրեն Վերա Գրիգորյանն է,որն այնքա՜ն անքուն, սպասումով լի գիշերներ է անցկացրել, եւ որին չի լքում հավատը…

Այս թանգարանն ստեղծվել է մեծագույն սիրով ու հույսով, ուրեմն՝ թող անհայտ կորած ազատամարտիկները վերադառնան եւ ամոքեն հարազատների սրտերը:

Տողի միջնակարգ դպրոցի
11-րդ դասարանի անունից՝
դասղեկ Զ. Ջավադյան
16.10.2013թ.

Խիղճս վկա՝ ամեն անգամ հուզմունքով եմ ներս մտնում այս մուտքով… ԼՂՀ ԱԿԱՀՄ սրահների պատերից մեզ են նայում մեր ազատամարտիկները, որոնց ճակատագիրը ներկա պահին անհայտ է:

Շնորհակալություն տնօրինությանը՝ կատարած մեծագույն աշխատանքի համար:

Վազիֆ Իշխանյան
ԼՂՀ փաստաբանների պալատի
խորհրդի անդամ
18.10.2013թ.

Տիկին Վերա, Ձեզ այս թանգարանն ստեղծելու համար խորին շնորհակալություն: Մենք հիացած ենք այն սիրո, եռանդի ու նվիրվածության համար, որ տեսնում ենք Ձեր մեջ: Թող բոլոր անհայտ ազատամարտիկները վերադառնան եւ ամոքեն հարազատների սրտերը:

Ստեփանակերտի Հովհ. Թումանյանի անվան
հ.9 հիմնական դպրոցի 6-րդ բ
դասարանի անունից՝ դասղեկ
Մ. Ավանեսյան
18.10.2013թ.

Շնորհակալություն պատասխանատու գործի համար: Ամեն այցի շատ ենք հուզվում եւ մեզ ավելի պարտավորված զգում նրանց գործը շարունակելու…

Արցախ աշխարհին՝ խաղաղություն, անամպ երկինք:

Ստեփանակերտի Հովհ.Թումանյանի անվան
հ.9 հիմնական դպրոց 5-րդ ա
դասարանի անունից՝ դասղեկ
Հեղինար Առստամյան
18.10.2013թ.


Ce musée est très émouvant.
Adrien (France)
Un accueil très chaleureux avec un point plein d'histoire. Longue vie au haut Karabakh. Guillaume
du combat pour la liberté d'un peuple qui aimait. Le courage des habitants du Haut-Karabagh est impressionnant. Xavier
FRANCE

Բոլորիս սրբազան պարտքն է հիշել ու վառ պահել մեր հողի ազատության եւ անկախության համար իրենց զոհաբերած քաջորդիներին: Մեր երախտագիտությունն ենք հայտնում այս հիասքանչ թանգարանն ստեղծողներն, սպասարկող անձնակազմին:

2013թ. թողարկման 300 սպաների անունից՝
լեյտենանտ Ալեքսանդր Խաչատրյան

Այսօր Ակնաղբյուրի՝ Վ.Ջիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներս մի խումբ ուսուցիչների հետ այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հուշթանգարան, հանդիպեցինք Վերա Գրիգորյանին: Տպավորությունները շատ են ու լավ: Այս սրբավայրում զգացինք, որ պատերազմի սպիները դեռ թարմ են մնում… Սերը հայրենիքի հանդեպ բազմապատկել է պետք…

Սա էլ արիության դաս էր մեզ համար՝ ու դրա համար շնորհակալություն:

21.10.2013թ.

Մարտունու շրջանի Բերդաշենի՝ Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի 7ա դասարանի աշակերտներս ծնողների հետ այցելեցինք ԱԿԱՀՄ հուշաթանգարան: Ի՞նչ բառերով արտահայտել շնորհակալությունը՝ այստեղ կատարված վիթխարի աշխատանքի համար…

22.10.2013թ.

Dziękuję Pani Wierze za wzruszający i pouczający czas spędzony w tym miejscu. Oby się to nigdy nie powtórzyło i oby los ich dzieci jaki by nie był - wyjaśnił się.
-Dorian Dawidowski 29 10 13

Այսօր Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի 10բ դասարանի աշակերտներս այցելեցինք զոհված Ազատամարտիկների հուշաթանգարան: Տպավորությունները շատ են: Հասկացանք, որ պատերազմի հետեւանքները մինչ այսօր էլ հուզում են մարդկանց: Մենք տեսանք անհայտ կորած հերոսների նկարները եւ իմացանք, թե ինչ երիտասարդներ կան այստեղ:

Շնորհակալություն Ձեզ, տիկին Վերա Գրիգորյան, հայրենանվեր գործի համար:

30.10.2013թ.

Nice memorial. Sad times. Best wishes for the future of your Republic. From a Northern Irish backpacker.
Jonny Blair (dontstopliving.net) 1/11/13

Հուշաթանգարան ամեն այցիս սիրտս կսկծում է… Երբ է գալու օրը, երբ մեր անհայտ կորածները կհայտնվեն տանը եւ թանգարանը դարձնեն Թեթեւացած Սրտի տուն… Այստեղ շա՜տ աղոթքներ են հնչել մեր տղաների վերադարձի համար: Փառքդ շատ, տիկին Վերա Գրիգորյան… Ամեն:

Գագիկ Բեգլարյան
ոստիկանության փոխգնդապետ
բանապահեղծ,
02.11.2013թ.

Առաջին անգամ եմ այստեղ: Հիացած եմ Վ.Գրիգորյանի կատարած աշխատանքով: Հուշաթանգարանը մեծ երախտիք է հոգու հանգստությունը կորցրած. տարիներով տառապող ու սպասող մոր կողմից…

Մեկ անգամ եւս առիթն ունեմ մտքերս հանձնելու թղթին, խոնարհումի- երախտիքի - հիշատակի խոսք ասելու Արցախյան ազատամարտում ընկած քաջորդիների, անհայտ կորածների հասցեին, որոնց տունդարձին սպասում ենք բոլորս:

Ս.Թովմասյան
11.11.2013թ.

Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի տնօրենը շատ կեցցե.պատկերացնում ենք, թե որքան ջանք է ներդրվել այս ամենն ստեղծելիս: Շնորհակալություն նրան ազնիվ ու հարկավոր գործ կատարելու համար:Տա Աստված, որ երբեք պատերազմ չլինի ու կորած մարդ չունենանք:

Ժողովրդական վարպետ
Բագրատունի Գրիգորյան
12.11.2013թ.

ԱԿԱՀՄ հուշաթանգարանը մեր՝ հ.12 հիմնական դպրոցի համար սրբատեղի է դարձել, իսկ տիկին Վերա Գրիգորյանը՝ բոլորիս համար հերոսուհի… Հնարավոր չէ չգերագնահատել տարիներով կատարած նրա աշխատանքի արդյունքը… Մեր սաների հետ ամեն անգամ թանգարանում լինելով՝ ավելի ենք պարտավորվում մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում…

Դավար Ի. Ավրյան
18.11.2013թ.

Անչափ տպավորված եւ հուզված եմ…

Թող սպասող մայրերի հույսերն արդարանան, ու մի օր էլ բացվի… վերադարձած ազատամարտիկների սրահը:

Վարսիկ Սարգսյան
12.11.2013թ.


Dit is een heel mooi museum wat goed
documenteert wat voor een tragedie er zich
heeft afgespeeld in dit gebied. Veel respect voor
de vrouw die dit heeft opgezet ondanks haar eigen
persoonlijke verlies. Moge er nu rust en vede zijn
Geert Jan Kaper 14-11-13

Խորապես տպավորված եմ Ստեփանակերտում անցկացրած էքսկուրսիայից, շատ կարեւոր բաներ իմացանք մեր նախնիների, Արցախյան գոյամարտում զոհվածների եւ անհայտ կորածների մասին: Շնորհակալություն եմ հայտնում հրամանատարությանը եւ կազմակերպողներին՝ նման հնարավորություն ընձեռելու համար:

թիվ 34153 զ/մ
Սամվել Սապրյան
19.11.2013թ.

Շնորհակալություն տիկին Վերային՝ այսքան չարչարվելու եւ մեր ընկերների հիշատակը պահելու համար: Հույս ու հավատով սպասում ենք տղաներին…

Ն. զորամասի հրամանատար՝
փոխգնդապետ Ն. Ավետիսյան
19.11.2013թ.

Vielen Dank für den Besuch und die sehr interessante Führung. Das Schicksal der Familien ist sehr bedrückend.

19.11.2013 Christian Sinjoman

Ես տեսել եմ պատերազմ, նրա ականատեսն եմ եղել, այո, եւ ամեն անգամ այստեղ լինելով՝ վերհիշում- վերապրում եմ այն դաժան օրերն ու աղոթում, որ իրական հրաշք տեղի ունենա՝ մեր անհայտ կորածները վերադառնան իրենց մայրերի գիրկը:

Դ. Ստեփանյան՝
Ստեփանակերտի հ.5 դպրոցի
9-րդ եւ 6-րդ դասարանցիների անունից
21.11.2013թ.

Խորը տպավորված ենք ԱԿԱՀՄ այցելությունից: Անչափ շնորհակալ ենք տիկին Վերային, որ մեզ ծանոթացրեց թանգարանի ցուցանմուշներին: Հուսով ենք, որ մեզ մեկ անգամ եւս հնարավորություն կլինի այստեղ գալ…Իմանալով, որ 700-ից ավել անհայտ կորածներից 239 հոգի Արցախյան ազատամարտի մասնակիցներ են , կրկնակի խոնարհվեցինք նրանց դիմանկարների առջեւ…Մարդը, որի անունով կոչվում է մեր դպրոցը, նույնպես ազատամարտիկ է եղել…

Անի Հարությունյան,
Ստեփանակերտի
Վիտալի Ջհանգիրյանի անվան
հ. 11 ավագ դպրոցի 12 դասարան
28.11.2013թ.

Պատմության մեր ուսուցչուհու հետ հաճախեցինք անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Դժվար է նկարագրել մեր զգացածը… Եթե կարճ ձեւակերպելու լինեմ՝ ցավ, հպարտություն, կարոտ…

Մեր ուսուցչուհուն՝ ընկեր Ջավալյանին, եւ տիկին Վերային շնորհակալություն, առաջինին՝ մեզ այստեղ բերելու, երկրորդին՝ ջերմ ու բովանդակալից ընդունելության համար:

Եվ այն բարերարներին շնորհակալություն, որոնք օգնում են այս կազմակերպությանը՝ ԱԿԱՀՄ-ին:

Անուշ Ավանեսյան
03.12.2013թ.

Բառեր չեմ գտնում արտահայտելու իմ եւ գործընկերներիս տպավորությունները…Շնորհակալություն Վերա Գրիգորյանին՝ կատարած եւ կատարելիք աշխատանքների համար:

Այսօր բոլորս միասին մոմեր վառեցինք այն հույսով, որ տղաներից գոնե մեկը տուն կվերադառնա, մայրերի, քույրերի, կանանց ու զավակների աչքները ճամփի են…

ԼՂՀ ուսուցիչների ուսուցիչներ՝
Կարինե Բարսեղյան
Անահիտ Սարգսյան
Նորա Միրզոյան
Վիոլետա Թովմասյան
Քրիստինե Գրիգորյան
05.12.2013թ.

Շնորհակալություն պատմության մեր ուսուցչուհուն՝ այսօր մեզ Անհայտ կորած եւ զոհված ազատամարտիկների թանգարաններն այցի բերելու համար:Հոգու սնունդ ստացանք… Երանի՜ անհայտ կորած ազատամարտիկները վերադառնան եւ իրենց ծնողներին երջանկություն պարգեւեն:

Ստեփանակերտի արհեստակցական
ուսումնարանի խոհարարական
1-ին կուրս
17.12.2013թ.

Ուսուցչուհի Վ.Ջալավյանի հետ ներկայացանք անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Այստեղ մեզ լավ բացատրեցին ամեն ինչ, ավելի շատ բան իմացանք պատերազմի մասին: հայրենիքը թանկ բան է, եւ նրան պաշտպանելը՝ բոլորիս պարտականությունը:

Ստեփանակերտի
արհեստակցական ուսումնարանի
վարսահարդարարական 3-րդ կուրս
17.12.2013թ.

Ամեն անգամ անցնելուց ոտքերս ինձ, կամա թե ակամա, բերում են այստեղ…

Տիկին Գրիգորյանը հայրենասիրական մեծ աշխատանք է կատարել աճող սերունդների համար, որպեսզի իմանան մեր ազատամարտի պատմությունը, նրա ուրախ եւ տխուր էջերը… Թող Աստված անհայտ կորած հայորդիներին տուն վերադարձնի:

Վ. Վիրաբյան
18.12.2013թ.

Կարոտով սպասող ամեն մի մայր,
Թող որ գրկի որդուն կրկին
Ու կարոտով իր ջերմագին
Նրան սեղմի իր տաք կրծքին,
Թող որ երբեք ոչ մի մանուկ
Հոր կարոտը չզգա կյանքում,
Թող որ ամեն կորած զինվոր
Նորից եւ գա հայրենի տուն:

Վիկտորյա Սարգսյան
18.12.2013թ.

Ես առաջին անգամ եմ այս թանգարանում: Տպավորություններս անպատմելի են…Թող հայ ազգն այլեւս պատերազմ չտեսնի: Մեր քաջ տղաները իրենց ջահելությունն ու կյանքը չխնայեցին հանուն հայրենիքի եւ մեր ազատության, շատերը զոհվեցին, շատերն էլ անհայտ կորան,

Փա՜ռք նրանց բոլորին:

Գայանե Ասրյան
18.12.2013թ.

Առաջին անգամ ենք այստեղ:Մեզ ընդունեցին շատ ջերմ:Թանգարանում տիրում է հայրենասիրության շունչը…

Շատ տպավորված ենք: Տա Աստված՝ տղաները վերադառնան, այս թանգարանը մնա հուշ…

ԼՂՀ ուսիկանության ծառայողներ՝
Վալերի Ռյաբուխին
Դավիթ Ղուլյան
23.12.2013թ.

Благодарим сотрудников музея за оптимизм и веру в поисках наших соотечественников.

С уважением- братья и племянник
погибшего на этой войне
Арутюняна Арама Нерсесовича
23.12.2013г.

5-րդ ՊԾ նորակոչիկներն այստեղ ծանոթացան պատերազմի տարիներին անհայտ կորած ազատամարտիկներին նվիրված թանգարանին եւ շատ տպավորվեցին տեսածից, նրանց հայացքներում ես տեսա հայրենիքը պաշտպանելու վճռականություն եւ հավատարմություն տված զինվորական խոստմանը: Շնորհակալություն ենք հայտնում տիկին Գրիգորյանին՝ մեզ ցույց տված ջերմ ընդունելության համար: Խոնարհվում ենք Ձեր առջեւ…

Կապիտան Թեւանյան
20.12.2013թ.

Նորակոչիկներով այցելեցինք Արցախյան պատերազմում զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանները: Ես տեսա, թե որքան տպավորվեցին տղաները, որքան էին հուզվել…:

Խոնարհվում ենք բոլոր զոհվածների եւ անհայտ կորածների առջեւ:

Նաեւ շնորհակալություն ենք հայտնում թանգարանի տնօրինությանը՝ ջերմ ընդունելության համար:

23524 զորամասի ԱՀՏԱ գծով պեղակալ՝
մայոր Վանյան
27.12.2013թ.


For the peace, love and mutual understanding of human being.
28-12-2013
陸建强 Kelvin Luk
@ 精彩的世界 Facebook


Very interesting museum, friendly staff.
A bit more information in English would be great though.
28-12-2013 Mark, Holland.

Բախտները չբերած մեր հերոս տղաներ, ձեր հարազատների, բարեկամների ու մտերիմների հետ մենք եւս սպասում՝ ու հավատում ենք, որ մի օր կգաք, թող Աստված օրհնի ձեր դարձի ճանապարհը...

Սլավա Հայրապետյան
31.01.2014թ.

Աստծուց, խնդրում եմ, որ ձեզ համար բացի փակ դռները… Ես, մեր տառապած մայրերի, հայրերի, քույր-եղբայրների, մեր սիրելի կանանց աչքերում արցունքների փոխարեն ուզում եմ տեսնել երջանկության ժպիտ…

Վերադարձեք, տղաներ, վերադարձե՞ք:

Արմեն Հովսեփյան
31.01.2014թ.

Այսօր տանկային բրիգադի նորակոչիկները ծանոթացել են ԼՂՀ պատերազմի տարիներին անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանին:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում տիկին Գրիգորյանին՝ ջերմ ընդունելության համար: հույսով եւ հավատով սպասում ենք մեր բոլոր անհայտ կորածներին:Նա մանրամասն մեզ ծանոթացրեց թանգարանի ցուցադրանքին, բացատրեց ամեն ինչ,

Մեր խոնարհումը՝ զոհված եւ անհայտ կորած տղաների առջեւ…

1-ին ՏՎԲ-ի հրամանատարի ԱՀՏԱԳՏ՝
Ա. Մկրտչյան
04.02.2014թ.

Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի 9-րդ(գ) դասարանի աշակերտներն այցելեցին պատերազմի տարիներին անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան:

Ի՞նչ կարելի է ասել՝ տեսած ու լսածից հետո, եթե ոչ այն, որ

գլուխ ենք խոնարհում տղաների տառապանքի առջև…Տիկին Գրիգորյանին ու նրա բախտակիցներին էլ մաղթում ենք համբերություն ու հավատ…

9-րդ(գ) դասարանի դասղեկ՝
Ն.Ավանեսյան
11.02.2014թ.

It is absolutely impassive what you and your organisation is doing for the families of the missing persons. It is extremely important to keep the memory of those missing and help the families to cope with the uncertainty.
Wishing you strength and a lot of patience
Zurab

Մենք՝ հայ երիտասարդներս, մեր պարտքն ենք համարում պահել ու պաշտպանել հայ ազատամարտիկների արյան գնով ձեռք բերածը:

Փառք ու պատիվ նրանց, խոնարհվում ենք հիշատակի առաջ:

Հուսանք ու սպասենք նրանց, թող օրը բացվի ավետիսով… Շնորհակալություն տնօրենին՝ ջերմ վերաբերմունքի համար:

Վեհանուշ Հովսեփյան՝
Artsakhpress լրատվական
գործակալության լրագրող
17.02.2014թ.

ԱԿԱՀՄ հուշաթանգարան հերթական այցելությունս համոզեց, որ հերոսամարտում անհայտ կորածների անցած ուղին

լուսաբանվում եւ հայտնավորվում է շնորհիվ մի մարդու՝ տիկին Վերա Գրիգորյանի: Նա է, որ շունչ ու հոգի է հաղորդում թանգարանին: Թող նրա ջանքը իզուր չլինի, տղաները թող բարով գան ու տեսնեն, թե Մայրն ինչպես է մաքառել իրենց համար…

«Արցախ-Յուրենց»
23.02.2014թ.

Այսօր Կարոտի /պռոշյանցի Կարոտ Մկրտչյան/ ծննդյան օրվա առթիվ եկել եմ իմ խորին շնորհակալությունը հայտնելու թանգարանի տնօրենին՝ հերոս տղայի հիշատակը այսչափ վառ պահելու համար: Եղա Կարոտի անվան գրադարանում, հիացա: …Եկա ասելու՝ Կարոտի ընկեր Բոնդոն իր գլուխը խոնարհում է նրա եւ բոլոր բախտները չբերած հերոսների հիշատակի առջեւ: Ո՞վ իմանա, գուցե տղերքը գտնվեն ու գան…

Թալինցի Բոնդո,
Արագած Մկրտչյան
02.03.2014թ.

«Ղարաբաղյան պատերազմի վետերանների միությունը» շնորհավորում է հրամանատար Կարոտի ծննդյան 50-ամյակը եւ ողջունում տիկին Վերային՝ հերոսին նվիրած միջոցառումը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Յուրի Միքայելյան
02.03.2014թ.

Շնորհավոր ծնունդդ, սիրելի Կարոտ Մկրտչյան: Մենք քեզ երբեք չենք մոռանա:

Գեւորգ Շահեան
02.03.2014թ.

Ինչպիսի՜ զուգադիպություն. ծննդյանս օրն է եւ՝ Կարոտի 50-ամյակի այս միջոցառումը…Կարոտի թանգարանը, Կարոտի գրադարանը, Կարոտի կարոտը՝ բոլորիս հոգում…Ցնցող օր է: Շնորհակալություն ձեզ, արցախցիներ, այս սուրբ պահի համար:

Ռիպա Շահեան
Արմատներով՝ Ուրֆայից
2.03.2014թ.

Խոնարհվում եմ բոլոր հերոսների առաջ: Ուզում եմ, որ միշտ խաղաղություն լինի, եւ սպասող մայրերը գտնեն իրենց զավակներին: Փառք ու պատիվ ձեզ, հերոսների հերոս մայրեր:

Աննա Մարգարյան
Կրթության ազգային ինստիտուտ
ՀՀ Արարատի մարզ
18.03.2014թ.

Ces photos, ces objets personnels nous rendent sensible la réalité d'un conflit qui a déchiré cette terre, séparé des familles, et assombri pour toujours l'existence de ceux qui ont perdu un être cher – fils, frère, mari, père…
Très sainte Vierge Marie, « ayez pitié de ceux qui s'aimaient et qui ont été séparés » (prière de l'abbé Perreyve).
Merci à celles qui sont là d'entretenir la mémoire.
20 mars 2014
Brigitte de Guilleton

Փա՜ռք մեր ներկա ու բացակա հերոսներին: Խոստանում ենք իրենց գործը շարունակել արժանավայելս:

ՊՔ 37218 զորամասի անձնակազմ
28.03.2014թ.

WE ONLY LEARN ONE LESSON FROM HISTORY:
THAT WE NEVER LEARN ANYTHING FROM HISTORY
SADLY THIS MEANS THAT THERE WILL NOT
BE "A WAR TO END ALL WARS". EVEN WITHOU
WAR TODAY ± 25,000 PEOPLE DIE OF HUNGER
AND EASILY PREVENTABLE DISEASES EVERY DAY
V.W. PETER 21-3-14

Ցավում ենք նրանց համար, հպարտ ենք նրանցով:Բոլորիս համար դժվար է հաշտվել կորուստների հետ, բայց գիտենք, որ նրանք ընդմիշտ կմնան մեր հուշերում եւ սրտերում:

Սոսի Հայկ Հակոբյանի անվան միջն.դպրոցի
10-րդ եւ 12-րդ դասարանների աշակերտներ
03.04.2014թ.

20 տարի անց եղանք Մատաղիսի դիրքերում, հետո էլ տիկին Վերայի ստեղծած հուշաթանգարանում: Աստված հատուցի մի օր Ձեր ջանքերին, նվիրյալ տիկին…

Արագած Մկրտչյան՝
Ղարաբաղյան պատերազմի վետերան
16.04.2014թ.

Աշխարհի երեսին կարող են ապրել միայն այն ազգերը, որոնք չեն մոռանում իրենց անցյալը, դասեր են քաղում ապուպապերի թույլ տված սխալներից ՝ չմոռանալով դրանք, ապրելով ներկայով եւ առաջ շարժվելով: Տեղում դոփելը նույն մահն է, ցեղասպանության շարունակությունը, միայն այն տարբերությամբ, որ նմանվում ենք հիվանդին, որը տանջվում է, տառապում՝ չունենալով ոչ մի հույս բուժման:

Այցելությունս Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան վառ վկայությունն է այդ ամենի: Տղաներ՝ որոնց ճակատագիրն անորոշ է, նրանք գտնվում են ողջերիս եւ մահացածների սահմանագծում… Ֆիզիկապես ոչ մեզ հետ՝ նրանք հոգեպես եւ հոգու արիությամբ մեզ ուժ են տալիս առաջ շարժվելու, շարունակելու իրենց կիսատ գործը: Մենք՝ ողջերս պարտավոր ենք դա անել,այլապես հաջորդ սերունդը մեզ չի ների: Գլուխ եմ խոնարհում բոլոր այն մայրերի առաջ, որոնք զավակներ են կորցրել եւ շարունակում են մաքառել:

Ազատուհի Օհանջանյան
փորձագետ

It was an indescribable experience to see the faces of the missing soldiers. Thank you for keeping these memories alive for all to see
God bless you all,
Gary Ganavian

Obrigada pela poesia desse lugar.
Deus abençoe.
Bruna Guerin / Brasil

As memórias dos soldados que lutaram por essas montanhas vão sempre ser lembrados.
Lindas lembranças que foram suscitadas aqui.
Mako Abe

Մենք սպասում ենք նրանց վերադարձին: Թող գան ու ամոքեն ցաված սրտերը: Հայի հպարտ հոգին

կհարատեւի. կապրի՝
եթե անգամ... անգամ
չթողնեն, որ ապրի:

Անահիտ Գրիգորյան
Հովսեփավանի հիմն. դպրոցի փնօրեն
23.04.2014թ.

Թե մարտի մեջ փառքս ուզեն՝ կնվիրեմ,
Մաքառման մեջ ջանքս ուզեն՝ կնվիրեմ,
Հանուն Հայոց՝ պատվի զավակ իմ Արցախի՝
Ուր էլ լինեմ, կյանքս ուզեն՝ կնվիրեմ.

Սա է յուրաքանչյուր արցախցու նշանաբանը, եւ այս նշանաբանով էլ առաջնորդվելով՝ մեր քաջ որդիները մարտի նետվեցին, պայքարեցին ու հաղթեցին: Սակայն յուրաքանչյուր հաղթանակ զոհեր է պահանջում. Դա է վկայում այս թանգարանը, նաեւ այս քաջորդիների շնորհիվ է, որ ապրում ենք ազատ ու անկախ հայրենիքում:

Ա. Ավանեսյան
Խ.Աբովյանի անվան հ.1 հիմն. դպրոցի
«Զարթոնք» ՄԿ նախագահ

Հ.6 հիմնական դպրոցի 2-րդ բ դասարանի աշակերտներն այցելեցին Արցախի գոյամարտում անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան՝ գլուխ խոնարհելու նրանց շարունակվող տառապանքի առջեւ: Աղոթում ենք նրանց համար եւ սպասում վերադարձին:

Դասարանի դասվար
07.05.2014թ.

Աշակերտների հետ միասին սիրով այցելեցինք Անհայտ կորած զինվորների թանգարանը: Այդ տարիքից, այո. նրանց մեջ սերմանել է պետք հայրենասիրություն ու բարձր քաղաքացիության գաղափար… Որպեսզի սիրեն հայրենի հողը, գնահատեն տղաների թափած արյունը: Նրանք խոստացան, որ այդպես էլ կանեն:

Ստեփանակերտի հ.7 դպրոցի
դասվար Նասիբյան
08.05.2014թ.

A poignant memorial to the fallen & missing soldiers in the war. It's a pity such a museum has to exist. So many heartbreaking artifacts & pictures of the missing soldiers are here to remind us that wars should not have happened anywhere! If only there are english explanations available. May all the missing/fallen soldiers rest in peace. 8 May 2014 Rafael, Singapore

11.5.2014 KÄYNTI KADONNUODEN SOTILAIDEN MUSEOSSA OLI MIELENKIINTOINEN. MUSEON HOITAJA ON TEHNYT VAHTAVAN SUURENTÖN. MATERIAALIA ON PAILJON JA TUOTU ETTEI KAIKKIA OLE VIELÄ EDES SAATU MUSEOON NÄYTILLE.
TERO FINLAND. TEEMU FINLAND

Ես՝ Էրիկ Կարապետյանս, երդվում եմ տեր կանգնել տղաների թափած արյանը եւ առաջին իսկ հնարավորության դեպքում վրեժխնդիր լինել մայրերի թափած արցունքի համար:

15.05.2014թ.

Անհնար է առանց ցավի զգացման նայել այս նկարներին, հուզմունքից խեղդվում ես ու միեւնույն ժամանակ հպարտու-

թյուն զգում այն մտքից, որ ապրում ես համեստ հերոսների երկրում, ինչպիսին այս տղաներն են: Բարի վերադարձ ձեզ…

Նազիկ Ավդալյան՝
ծանրորդուհի. միջազգային
մրցամարտերի հաղթորդուհի

Dziękujemy że podzielenie się z nami swoją historią. Mamy nadzieję, że zagubieni żołnierze znajdą spokój. Jednocześnie życzymy powodzenia w prowadzeniu muzeum.

Մենք՝ Հադրութի շրջանի Մարիամաձորի Ն.Սայիյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներս, լինելով անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում, մեծ հուզմունք ապրեցինք, սպասումը շատ դժվար է, մենք դեռ սպասում ենք նրանց վերադարձին եւ հավատում ենք , որ Աստծո օրհնությամբ նրանք տուն կգան: Մեծ գործ է կատարված տիկին Գրիգորյանի կողմից, որի համար շնորհակալ ենք նրան: Մենք էլ ենք պատրաստ ամեն գնով պաշտպանել մեր հայրենիքը, բայց Աստված տա՝ նման պաշտպանության կարիք չզգացվի…

Արմիդա Գաղայան
10-րդ դասարանի աշակերտուհի
17.05.2014թ.

Пусть ваша работа достигнет своей цели и пропавшие будут найдены.

Гаянэ Амбарцумян
Женский ресурсский центр.
19.05.2014 г.

A very important issue raised, involving persons, that should be raised globally in order to prevent more wars and violence!

Hoping that you will get justice and peace one day!

Lara Aharonian.
2014.

Եղանք Անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում: Խոնարհվում ենք բոլորի առաջ: Շնորհակալ ենք ձեզ, տղաներ, այսօրվա լավ ու խաղաղ օրվա համար, շնորհակալ ենք պայծառ ապագայի համար: Ձեզանից մեկն էլ իմ եղբայրն է՝ Արամ Մինասյանը, որին մարտական ընկերները Մեծ Արամ էին կոչում, զոհվեց Լաչինի միջանցքում… Համբերություն ձեզ եւ ձեր ծնողներին:

22.05.2014թ.

Մեր սաների հետ այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Չեմ կարող նկարագրել այն զգացողությունները, որոնք պարուրեցին մեզ: Թվում էր, թե մտել ես մի օջախ, որտեղ քեզ սպասում էին… Մենք էլ ձեզ ենք սպասում, տղերք, հույս ենք պահում, որ կվերադառնաք ու շենացնեք ձեր օջախները, ստանաք այն պարգեւները, որոնց արժանի եք հենց միայն հերոսաբար կրած տառապանքի համար…

Ալվինա Մեհրաբյան
22.02.2014թ.

Ամեն տարի հրաժեշտի զանգին ավանդույթ է դարձել այցելել Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների մի-

ության թանգարան: Դա մեր բոլորի սուրբ պարտքն է՝հիշել բոլորին՝ ում կյանքի գնով ձեռք է բերվել թանկ խաղաղությունը…

Ստեփանակերտի հ.12
հիմնական դպրոցի տնօրեն
Է. Գաբրիելյան
22.05.2014թ.

May 29th. 2014

With deep sadness we appreciate your Museum for the Missing Soldiers and we will not forget you, the missing people, soldiers and civilians. Their families will remain in our hearts. Thoughts and prayers as we also pray for peace, justice and freedom for your people. With deep affection Christine Gilbert

We share with you your deep sadness and pain of loss mixed with uncertainty. The visit to your Museum for the Missing Soldiers of Artsakh has deeply moved us and we will continue to tell your story and of your longing for peace and justice.
We carry you in our hearts. Helen Gilbert
H.A.R.T

Թող Աստված միշտ տղաների կողքին լինի: Հայ մայրեր, դուք եք մեր հույսն ու հավատը, եղեք առողջ եւ պահապան Հայ աշխարհին:

Աստված էլ ձեր որդիներին թող պահի…

Սիրով՝ Անդրե
05.06.2014թ.

Անհուն կսկիծով ենք նայում ձեզ, բայց եւ հպարտանում, որ շնորհիվ ձեր թափած արյան մենք կանք…կա ու կլինի աշխարհը Հայոց:

Թ. Կալերի հիմն. դպրոցի
Կազմակերպիչներ եւ
մի խումբ աշակերտներ,
05.06.2014թ.

Thank you for being so honest and speaking so openly with us. It is good to see that no one has been forgotten.
Mark + Keith
5/6/14

Այսօր նորից հայտնվեցի այստեղ… Ընկերներիս կարոտն է բերում:

Այս լռության մեջ մտովի խոսում եմ նրանց հետ, հույս փայփայում, թե մի օր կգան… Ամեն մեկը՝ մի տան սյուն: Տիկին Գրիգորյան, Ձեզ եւ մյուս մայրերի աչքերում վշտի փոխարեն թող լույս ցոլա: Այդպես կլինի, երբ վերադառնան տղաները:

Վ. Վիրաբյան
06.06.2014թ.

5/6/2014

GESCHÄTZTESTE BIRGIT. ICH WÜNSCHE EUREM VOLK EINE FRIEDLICHE ZUKUNFT UND EINEN EHRLICHEN + RESPEKTVOLLEN UMGANG MIT DER VERGANGENHEIT
WS

Aangrijpend relaas door een moeder gebracht. Heel persoonlijk.
Hopelijk wordt het in het Engels toegankelijker
Pieterjan - België

Thank you for your time. Sorry for your losses, family pain.
Amadlia

9 Jún 2014 Tomáš zo Slovenska.
Mamka národného hrdinu, bojovníka za vlasť mi
ukázala prehliadku čarovného múzea. Ďakujem.
Tomáš

12.06.2014
Vielen Dank für die Möglichkeit, all die Leben
hier sehen zu können. All diese Geschichten
gehen sehr nah.

Constance Müller, Deutschland
Eric Moreno, España

Մեկը չէ, հարյուրը չէ՝ հազարնե՛րը գնացին… Եվ շատերը չտեսան իրենց կռած հաղթանակը, կյանքը զոհաբերեցին հայրենի երկրի ազատությանն ու անկախությանը: Ոսկե տառերով գրվեց նրանցից յուրաքանչյուրի անունները մատաղ սերնդի սրտում: ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի տնօրինություն, ձեր կատարածը շնորհակալության է արժանի:

«Հայոց Աղավնիներ» երիտասարդական
հայրենասիրական խմբի ղեկավար
19.06.2014թ.

It hurts my heart to see all this sorrow and pain.
My thoughts are with you all.
Lucie & Demir, London 2014

Выражаем глубокую благодарность Вере Григорян за замечательный и трогательный музей, за то, что она собирает, хранит и передает нам историю нашей исторической Родины

Посетив музей, нельзя остаться равнодушным.Спасибо Вам большое.

Волгоград
20.06.2014г.

Մենք ուզում ենք, որ անհայտ կորածների հարազատների համար բացվեն տեղեկատվության սահմանները….

Արմեն Սարգսյան
Հակոբ Հովհաննիսյան
«Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»
21.06.2014թ.

Ես, որպես զոհված ազատամարտիկ քեռի ունեցող, սպասում էի, որ նրա նկարն էլ կլինի թանգարանում, բայց չկար, գուցե չեն բերել… Բայց նա միշտ իմ սրտի թանգարանում է…

Արարատ Ավանեսյան
23.06.2014թ.

Ես ունեմ պատերազմին մասնակցած քեռի, որի մասին ասում են՝ շատ քաջն էր…Կձգտեմ իր նման լինել, կծառայեմ այնպես, որպեսզի ինձ համար էլ հպարտ լինեն:

Սամվել Շահինյան
23.06.2014թ.

Այսպիսի պատկառելի եւ ցնցող թանգարանում առաջին անգամն եմ լինում, ծանոթացա անհայտ կորած հերոսների հետ, նաեւ՝Բեկորի, Ավոյի ու շատերի, նրանց նկարներն էլ , հատուկ, բաժնում, կան այստեղ: Թանգարանը դաստիարակության օջախ է, դրանում համոզվեցի այստեղ:

Միհրան Թամոյան
Հայաստան
23.06.2014թ.

Shall the remains of all missing soldiers who bravely did their duty be recovered, for their loved ones won't find their peace until then

03-09-2014

Marius M. Marcin B.

Dziękuję bardzo, za pokazanie mi i objaśnienie historii wojny o Gorski Karabah. Było to dla mnie bardzo interesujące i miłe przeżycie.

Krzysztof z Wrocławia

25-06-14

Very impressive to see all the pictures of the missing soldiers. A nice memorial f the lost ones.

Sarah en harmen
netherlands

Մենք՝46677 զ/մ անձնակազմով առաջին անգամ ենք այս թանգարանում: Ուրախ ենք, որ պահպանվում է տղաների հիշատակը: Շնորհակալ ենք թանգարանի տնօրենի տեղեկատվությունից եւ ջերմ ընդունելությունից:

Մ. Ներսիսյան եւ 80 զինվորներ
27.06.2014թ.

28.06.2014 Malaysia

The exhibits in this small museum do not have English captions and narratives, and so we could not really grasp the full message conveyed by them. All the same, wars are cruel and all human beings should strive for peace by all means.

1. CHIN MEE POOH
2. LEE BENG ENG
3. CHONG LEE YOONG
4. CHAN MAY WAN

Thank you Vera for the interesting visit of the Musee. Shall Peace prevail.
Best Regards
Olivier Weber, France June/28/2

We hope the people of this region can be reunited with Armenia and remain a peaceful place.
Linda and Dave Ness USA 30 June 2014

Մենք էլ ենք առաջին անգամ այստեղ ու դժվարանում ենք գրել մեր տպավորության մասին՝ այնքան որ շատ ենք հուզ-

ված տեսած-լսածից… Հիանալի թանգարան է, թեեւ՝ տխրության դրոշմով… բայց այստեղ ցուցադրված է եւ հաղթանա՛կը, ու դա շատ լավ է, ոգեւորող, բոլոր պատերազմներում էլ լինում են կորուստներ, ի՞նչ արած… Թող հայ ազգն այլեւս պատերազմ չտեսնի, մեր անհայտ կորածներն էլ տուն գան:

ՊՔ 46677 զ/մ 126 նորակոչիկներ
մայոր Մկրտչյան
01.07.2014թ.

Թիվ 38043 զորամասի 23 զինվորներ հրամանատարի հետ միասին այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան եւ անցկացրինք դաս հայրենյաց: Հիացած եւ հուզված ենք: Թող Աստծո հրաշքով վերադառնան անհայտ կորածները:

Հարություն Հարությունյան
01.01.2014թ.

Թող մեր անհայտ կորած եղբայրները բարով վերադառնան: Ես այս տողերը արցունքոտ աչքերով եմ գրում:

Հրաչ Գաբրիելյան
01.07.2014թ.

– WISHING PEACE AMONG ALL THAT HAVE FOUGHT FOR
THEIR COUNTRY, REST IN PEACE, BEST WISHES FROM
LOS ANGELES CALIFORNIA
– KoKo Avo Manoukian / 9090 Մանուկյան

Մենք՝ ԱրՊՀ պատմության 2-րդ կուրսի ուսանողներս, պարոն Ա. Վարդանյանի գլխավորությամբ այցելեցինք Արցախյան գոյամարտում անհայտ կորած ազատամարտիկներին

նվիրված թանգարանը: Տիկին Վերան մեզ ներկայացրեց յոթ-բաքանչյուր սրահի պատմությունը: Կիսեցինք այն ցավը, որով այսքան տարիներ տառապում են անհայտ կորածների հարազատները, բայց եւ, հույսը չկորցրած, սպասում են նրանց: Սպասում ենք մենք եւս՝ ակնկալելով վերադարձ:

Առսրամյան Դիանա, Առսրամյան Լեսմոնյա, Ավագյան Ծովինար, Բախշիյան Դիանա, Կարապետյան Սոնյա, Մուսայելյան Սվետլանա, Պետրոսյան Նարինե, Սարգսյան Աննա, Սաղյան նարինե, Սարգսյան Էլինա
03.07.2014թ.

Ամեն անգամ ակնածանքով եմ մտնում ԱԿԱՀՄ թանգարան: Այստեղ ամեն նմուշ խոսուն է, ամեն հերոսի կյանք ընդհատված լեգենդ:Խաթարված ճակատագրեր՝պանծալի, հայրենապաշտ, հերոսական կենսագրություններով: Անկատար երազանքներ, որ իրականացում են փնտրում…

Սպասումը լույս է՝ հերոսների վերադարձի հույսը: Իրենց որդիներին օրնիբուն սպասող մայրերն այս թանգարան այցելում են կորցրածը գտնելու՝ հրաշքի հույսով:Անչափելի է Վերա Գրիգորյանի ներդրումն այս շնորհակալ գործում: Նրա հսկայածավալ գործունեության շնորհիվ թանգարանը խոսուն պատմության վկա է դարձել՝ տարեգրություն է կերտում:

Սոֆյա Սարգսյան
«Ստեփանակերտ» թերթի
գլխավոր խմբագիր
04.07.2014թ.

Спасибо. Было очень познавательно. Дай Бог, чтобы в будущем у нас не было необходимости строить такие музеи.

Амаяк Даниелян
10.07.2014г.


Qui perd la memòria, perd la identitat;

"Caminem per poder ser i volem ser per caminar"
Lluís Llach

Una abraçada des de Catalunya.

Caterina i Jordi
8/7/14

The museum is incredibly moving and the tragedy of the conflict has no bound. Yesterday we met the families of the missing. I sincerely hope that the people of Artsakh find peace
Thomas McCall, Carmarthen, Wales, UK

Վերա Գրիգորյանը ճանաչված անուն է հասարակության մեջ: Նա այն մարդկանցից է, ովքեր պատասխանատվություն են կրում իրենց հայրենիքի ճակատագրի համար: Առանձնապես նրա գիրք-ուսումնասիրությունները պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների թեմայի արտացոլման գործում, եւ չափածո հուզիչ ժողովածուները նույն թեմայով մեծապես ողջունելի են: «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության» հուշաթանգարանի ստեղծումը Վ.Գրիգորյանի գործունեության, կարելի է ասել, պսակն է:

Արարատ Վարդանյան
Պատմագիտության թեկնածու, դոցենտ
10.07.2014թ.

Այս այցը մեր սրտի պարտքն էր՝ բոլոր անհայտ կորածներու մայրերուն եւ հարազատներուն: Թող Աստված բոլորիս աղոթքները լսի ու տուն բերի մեր եղբայրներն ու քույրերը:

Մոնրեալի Ազգային Սուրբ Հակոբ
վարժարանիաշակերտներ՝
Անայիս Պաղդասարեան, Նաբալի Սեքքեան,
Սիանա Պզտիկեան,
Սառա Թերզեան, Մարիամ Մկրտչեան,
Ռիանա Սիուֆի, Յարուբ Կանիմեան,
Թաթիանա Տեր-Յարութիւնեան.
Ռիթա Մանիրոյեան, Յէդիսխա Մենդէզ,
Սիակ Փաշայեան, Ռուբէն Չէրչեան
10.07.2014թ.

10.07.14.
They say a picture is worth a 1000 words, but seeing these pictures I say the words to describe them are countless.
Raupen Jerjian

12.7.14 – Very interesting museum which shows the tragedy of war in NKR. I hope one day there will be full English language captions on the exhibits.
P. Swardyan

14-7-14
The museum is very interesting. Thank you for telling us more about the soldiers. It is tragic work but we are glad that you are continuing the work.

Արցախի ազատագրության համար զոհված մարտիկների հիշատակը վառ կմնա բոլորիս սրտերում, անհայտ կորածներին էլ, հույս ունենանք՝ ողջություն եւ վերադարձ:

14.07.2014թ.

Ես Հիսուսի անունով օրհնում եմ ձեր Երկիրը եւ ձեր ժողովուրդը եւ ձեր ընտանիքը:Ես սիրում եմ ձեզ:

Ալիս
16.07.2014թ.

Слава Богу, что есть такие музеи, как этот. Чувствуется глубокая боль о всех пропавших солдатах Но есть люди, которые не забыли их, в Чьих сердцах они останутся живы.

Мария Казахстан
16 07 2014г.





Спасибо большое за такой хороший музей. Дай Бог сил, терпения - справится со всеми трудностями.

Татьяна
17.07.2014


Είδε η όμορφη αυτή γη να μην
βαριέσαι ποτέ κι να δίνει ο Θεός τις
σε υγεία κι ευημέρια.
Γιώργος & Τατιάνα Ρυγας

Արցախի անհայտ կորած ազատամարտիկների թանգարան…Նայելով տղաների նկարներին՝ չես կարող զսպել արցունքներդ: Բոլորս նրանց ծնողների, քույրերի, եղբայրների նման հույսով սպասում ենք, որ մի օր, որտեղից որէ, կվերադառնան նրանք…

ԱրՊՀ Պատմության բաժնի
2-րդ կուրսի ուսանողներ
18.07.2014թ.

Աստված տա՝ հայտնի դառնան անհայտ կորած ազատամարտիկների ճակատագրերը, եւ այս հուշահամալիրից մնան լոկ հիշողություններ...

Ծառայել ես հայրենիքիդ
Քաջակորով ու արի,
Մտքով՝ մաքուր, սրտով՝ իգիթ,
Կամքով՝ նման ժեռ քարի:
Վիրավոր մեր հպարտ արծիվ,
Հարյուր տարի էլ անցնի՝

Քո անունն ու հիշատակը
Երբեք -երբեք չեն մարի:

Անհայտ կորած ազատամարտիկ
Անդրանիկ Սարգսյանի քրոջորդի՝
Գարի Մանուչարյան
25.07.2014թ.

Լոնդոնից 40 սկաուբներով ժամանեցինք Արցախ՝ ուխտագնացության, սովորելու եւ ծանոթանալու մեր հողերին… Հպարտ ենք Ազատամարտի զինվորներով՝ ողջ, զոհված թե անհայտ կորած…

Հուսանք, որ անհայտ կորածները երբեւէ կվերադառնան: Միշտ ձեզ հետ կլինենք մտքով ու սիրով:

25.07.2014թ.

Համազգային ուսանողական հավաքի կողմէ /2014/ ձեզի կը մաղթինք համբերություն եւ հարատեւ վերելք: Մենք միշտ ձեզի հետ ենք…

01.08.2014թ.

This very moving museum and the people running it are a tribute to Karabakh, it's struggles and it's resilience.

Stephen M. Bland, UK 27 July 2014

Մենք հավատում ենք, որ նրանք ողջ են: Աղոթում ենք, որ ամեն մի սպասող մայր, կին, երեխա մի օր հանդիպի կորցրած հարազատին: Թող Աստված ուժ տա բոլորին, երբեք չկորցնեք հույսը:

Նունե Հարությունյան
02.08.2014թ.

Merci beaucoup pour le chaleureux accueil et l'exposition fut très émouvant.
Thank you for the warm welcome and the museum was very moving.
Vielen dank für die Gastfreundlichkeit – die Ausstellung war sehr berührend.

Jesse Alexander, Vienna/Montreal

Kondolencje dla rodzin ofiar z oku
shon hooflikh.

Piotr Kucharski

Dziękuję za oprowadzanie z pięknej historii
Kowalskich. ~~Ten~~ Wiem, że pozwoli nam ona
lepiej zrozumieć historię tego miejsca oraz
jej, często tragiczne, konsekwencje. Dziękuję też nie
w dziś życie do dzisiaj.

Krystof Magda

30/07/2014
Merci pour la découverte de votre pays
et de votre histoire. Le musée est très émouvant.
+ Accueil très bienveillant.

Hélène et KARIM (FRANCE)

Stepanakert. 4 august. 2014.

En rørende og sterk opplevelse å komme hit.
Vi minnes de som falt.
Håper slike museer blir overflødige i fremtiden.

R. Nesje Kirkenes Norway
Y. Berg Trondheim
F. Berg Kirkenes

Мы сегодня с дочкой посетили Музей памяти без вести пропавших солдат. Я до глкбины души тронута тем, что увидела здесь Дай Бог долгой жизни Вере Григорян за все, что она сделала. Никто и ничто незабыто Мы помним- и наши дети должны помнить.

Гаянэ Арутюнян, Г Ставрополь
04.08.2014г.

Այս ամեն բաները տեսնելով, լսելով ու զգալով նրանց կենդանի լինելը՝ մեր սրտի աղոթքն է, որ շուտ վերադառնան իրենց ընտանիքները:

Մխիթար Հարությունյան
04.08.2014թ.

Il y a beaucoup d'émotion qui se dégage de la visite de votre musée, les visages des disparus et leurs effets personnels sont une trace qui doit permettre de trouver le chemin de la paix et de la réconciliation –

Ferrane et Roland 4/08/2014

Նրանք անմահ են, ու հոգիները՝ միշտ մեզ հետ, քանի դեռ բաբախում է մեր սիրտը եւ հոգիներս էներգետիկ լիցքերով կապված է նրանց հետ:

Օ. Հարությունյան
04.08.2014թ.



Merci très énormément et accueil chaleureux comme toujours ici ! Merci.
Aurore et Nicolas 5/08/14
FRANCE (PARIS)

Schön zu sehen, dass durch dieses Museum die Erinnerung an diese Tragödie aufrecht erhalten wird. Wir hoffen, dass die Gewalt bald ein Ende hat und dass alle Familien wieder zusammenfinden.
11/8/14 Germany/Switzerland

Con mucha emoción en este memorial un abrazo y saludo fraternio a los hermanos armenios de eghernapah
[illegible]
11/8/14

Si bien no es una visita muy feliz me alegro que se recuerde a nuestros hermanos que lucharon defendiendo nuestra patria, ojalá ya no hayan más caídos y podamos vivir como pueblo que somos. Muchas gracias Gayane por la recibida y la dedicación que le dedica a este lugar. Por más paz y menos guerra, գութ գուրզա Հայոցդար, Գուրզա Արցախ!
[illegible]

Огромное Вам человеческое спасибо за проводимую работу. Да хранит Вас Господь.

Семья Сафаровых и Асриян
11.08.2014г.

Մեր սիրելի Արցախ:

Վերոնիկա Բերեա Մանուկեան
«Գայանե» պարախումբ
Ուրուգվայի Հայ ազգային կենտրոն
11.08.2014թ.

Հույս, հավատ,սեր, տա՛ Աստված՝ մի օր էլ գամ - լսեմ, որ տղաները անհայտ կորած չեն, եւ ուշ թե շուտ կհանդիպենք նրանց: Թող ոչ մի մայր երեխա չկորցնի:

Շնորհակալ ենք ձեզ , մեր անմահ հերոսներ, հույսով սպասում ենք ձեզ

Վիչոյան

Կեցցե՛ խաղաղությունը:

Թող պատերազմ չլինի:

Կեցցեն հայ ժողովուրդը, Հայաստանը եւ Արցախը:

Գաբյուս Կեցաեան
12.08.2014թ.

Թող մեր ամեն ազատամարտիկի հիշատակը հավերժացվի այնպես, ինչպես դա արվում է այս թանգարանում, եւ թող այլեւս ոչ մի մայր չարժանանա մեր կորած ազատամարտիկների ծնողների ճակատագրին:

Կեցցե՛ն մարդկային բանականությունն ու խաղաղությունը:

Ամահիպ Ազարյան
12.08.2014թ.

Ձեր սխրանքն անմահ է, հիշատակն՝ անմոռանալի, Ձեր շնորհիվ է, որ մենք այսօր ապրում ենք ազատ, անկախ երկրում, մեր ազատամարտիկներ: Խորին շնորհակալություն թանգարանի ղեկավարությանը եւ անձնակազմին:Ձեր կատարածն անգնահատելի է:

Լիլյա Հոկկայան
12.08.2014թ.

Մեծ յուզմունքով եւ հիացմունքով կը բաժնվինք այս սուրբ վայրեն: Մեր հաղթանակն ու աղոթքը այն է, որ կորած ազատամարտիկները վերադառնան իրենց սիրելիներին: Աստված զորացնի բոլորիդ:

Վեր. Ներսես եւ Սեւան
Պալապանեաններ
14.08.2014թ.

15/08/2014

Very interesting museum telling the history of the war between Nagorno and Azerbaijan with a lot of memory and work of war souvenirs. We enjoyed the visit.

Գլեն.

Անհայտ կորած ազատամարտիկները, հուսով ենք, կվերադառնան:

Արմինե Բարսեղյան
Էլլա Սարգսյան
Երեւան, 18.08.2014թ.

It's a pity that nowadays we are not able to solve problems talking. People should have the right to decide how they want to live and organize themselves without the violence.

Barbara and Vincent

Մենք՝ Արցախի ՊԲ Ն զորամասի սպաներս՝ փոխգնդապետ Բորիս Բաբայան, մայոր Մարատ Մաթեւոսյան, կապիտան Իգոր Պողոսյան եւ ուրիշներ, շարունակում ենք ձեր գործը, եւ վստահ եղեք, որ անառիկ կպահենք մեր սահմանները,հարկ եղած ժամանակ հրետանու հուժկու հարվածներով վերականգնենք արդարությունը:

Խորին երախտագիտություն ենք հայտնում թանգարանի ղեկավարությանը, որ տվել են մեզ այսպիսի հնարավորություն՝ հիշելու մեր անցյալը , մեր նահատակներին, մեր հերոսներին:

19.08.2014թ.

Գեներալ Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի 10-րդ դասարանի սաների անունից ասում ենք՝ փա՜ռք Արցախյան գոյամարտում անհայտ կորած ազատամարտիկներին, համբերություն ենք մաղթում նրանց ընտանիքներին, ընկերներին, աղոթում՝ որ չհուսահատվեն, շարունակեն սպասել նրանց վերադարձին:

Ավագ լեյտենանտներ՝
Ն. Սարգսյան, Ա. Ավանեսյան
20.08.2014թ.

Նույն վարժարանի 10-րդ դասարանի դիմորդների անունից ասում ենք՝ պատերազմում անհայտ կորած մեր զինծառայող-

ների պատիվն ու հիշատակը միշտ վառ կպահենք:

Ս. Խաչատրյան, Ա. Դանիելյան,
Ռ. Հակոբյան, Կ. Թեւոսյան, Տ. Լեւոնյան
20.08.2014թ.

Սպասում ենք նրանց վերադարձին:

Վրեժ Կարապետյան
ՀՀ քաղաքացի
20.08.2014թ.

Потрясающий музей. И больше, чем музей-пространство для памяти. А если есть память-есть настоящее и будущее.

Большой удачи вам и спасибо.

Гости из Москвы:
Светлана, Алексатдр,
Дмитрий, Степан, Марина
20.08.2014г.

Յուրաքանչյուր արցախցի իր հոգում ունի կարոտ ու թախիծ այն մարդկանց հանդեպ, ովքեր կյանքի գնով են ազատագրել հայրենիքը: Խորին երախտագիտություն Վերա Գրիգորյանին, ում կատարած աշխատանքի շնորհիվ թանգարան այցելողը վերապրում է այն ամենն, ինչի միջով տարիներ առաջ անցել է Արցախի ժողովուրդը: Վստահ եմ, որ նույնիսկ օտարերկրացիները չեն կարող անտարբեր անցնել այստեղ ներկայացված պատմության էջերի կողքով…

Սեյրան Գրիգորյան
20.08.2014թ.

Ապրես, Վերա ջան, այս աներեւակայելի աշխատանքի համար… Ինձ թվում է, թե Երկիր մոլորակի վրա չի գտնվի մարդ,

որը կարողանար այսպես հավերժացնել ազատամարտում անհայտ կորածների հիշատակը: Տա Աստված՝ կատարվի երազանքդ, որի անունը տալ էլ պետք չէ, հասկանալի է ինքնըստինքյան:

Ա.Մանգասարյան
Ստեփանակերտի Ագրարային համալսարանի
ծրագրավորման կենտրոնի դասախոս
21.08.2014թ.

Հիացած եմ, միեւնույն ժամանակ՝ հպարտ: Լինելով ազատամարտիկի դուստր՝ երդվում եմ հավերժ հարգել եւ հիշել զինվորներին՝ անկախ նրանից, թե նրանք կորած են, զոհված թե ողջ: Աստծո կամքով թող էլ պատերազմներ չլինեն: Հայաստանն ու Արցախն էլ թող լինեն-մնան անկոտրուն միասնական մարմին ու հոգի:

Խաղաղություն ամենեցուն:
Խանում Գրիգորյան
25.08.2014թ.

Տպավորությունները շատ մեծ են, ուղղակի կասեմ՝ցանկանում եմ, որ ամեն մայր գտնի իր կորած զավակին… Ես միշտ էլ հավատացել եմ, որ հայ զինվորը սրբությամբ է կատարում պարտքը հայրենիքի հանդեպ:

Փիրուզա Բաղոյան
25.08.2014թ.

Յուրաքանչյուր հայ պետք է գիտակցի, որ Հայոց անկախության դրոշակակիրը հայ զինվորն է: Անկախության դրոշը դարեր շարունակ փողփողում էր միայն հայոց ոգու գաղտնարանում… Պետք է գիտակցել, որ հոգով աղքատ է այն երկիրը, որում մեռած է պայքարի կամքը:

Շնորհակալություն մեր հերոսներին:

Կարինե Բաղդոյան
26.08.2014թ.

«Իմ թատրոն» թատերախումբը խոնարհվում է Ձեր կատարած աշխատանք առջեւ: Մեզ օրհնված ենք համարում, որ այսօր պատիվ ունեցանք ծանոթանալու Ձեզ հետ, տիկին Վերա, եւ Ձեր կողմից կատարած աշխատանքին:

Հայաստանի մանուկների հիմնադրամ
26.08.2014թ.

Հույսով ու սպասումով, որ անհայտ կորած մեր եղբայրներն ու քույրերը կվերադառնան իրենց օջախները՝

Կորյուն Նահապետյան.
ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության,
ազգային անվտանգության եւ
ներքին գործերի հանձնաժողովի նախագահ
28.08.2014թ.

Երկրապահ կամավորականների «Պատանի երկրապահ» ակումբի սաների այցը թանգարան տպավորիչ էր եւ հուզիչ: Հայրենանվիրումն ու հայրենասիրական մթնոլորտը թելադրող էր: Պատմության անիվը հայերիս համար պտտվեց դեպի էներգետիկ տիեզերական ծիրը:

Շնորհակալ ենք թանգարանի աշխատակիցների բարեհամբույր վերաբերմունքից:

Սամվել Սաֆարյան մայոր
29.08.2014թ.


It is not just sad but heartbreaking seeing how many lives were perished, how many families lost loved ones and how many sons and daughters a country has lost. 26.08.2014 Penny Papadopoulou, London, UK.

from Osaka, Japan 01.09.14

Ամեն անգամ մտնելով ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հուշաթանգարան, մի ներքին ձայն հուշում է, որ նրանք կան ու Աստծո հաջողությամբ կվերադառնան եւ Հուշաթանգարանը կմնա Արցախի պատմության տարեգրության եւ հայրենասիրական թեմաներով լեցուն մի դարբնոց: Սիրելի մայրեր, պինդ կացեք, հույսը վերջինն է մեռնում:

Սեյրան Միքայելյան
«Արցախգազ» ՓԲԸ գործադիր տնօրեն
01.09.2014թ.

Խոնարհվում եմ անհայտ կորածների ծնողների առջեւ. Երախտագիտությունս հղում Վերա Գրիգորյանին՝ կատարած հայրենանվեր աշխատանքի համար, միաժամանակ դիմում բոլոր հարազատներին. կյանքում ամեն ինչ լավ է վերջանում, ու եթե ինչ որ բան լավ չի վերջացել՝ նշանակում է դա դեռ վերջը չէ… Ապրենք հույսով:

Միքայել Գասպարյան
ԼՂՀ կառավարության աշխատակազմի
Կազմակերպչական բաժնի վարիչ

Թող միշտ խաղաղություն լինի Արցախ աշխարհում:

Սաթենիկ
02.09.2014թ.

Дорогая Вера, спасибо Вам огромное за эти полтора часа - я поражен от Вашей работы, Вашей сердечности и Вашего терпения. Дай Бог, чтобы ожидание когда-то для всех закончилось...

Лоуренс Броерс
18,09,2014г.

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

«Հուշամատյան-3»-ի լույս աշխարհ գալը հովանավորել է մեր համերկրացի Սեյրան Միքայելյանը, ում վաստակը մեծ է Արցախյան շարժման, պատերազմի եւ նորանկախ հանրապետության կայացման գործում:

Կարծում եմ, ընթերցողն ավելորդ չի համարի նրա հակիրճ դիմանկարը ներկայացնելու մտահղացումը՝ առնվազն որպես երախտագիտության նշան…

Սեյրան Միքայելյանը 2010թվականից մինչ այսօր «Արցախգազ» ընկերության գործադիր տնօրենն է՝ մինչ այդ անցած լինելով երկար ու հայրենանվեր ճանապարհ: 1976թ.ավարտելով Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը եւ մեկեւկես տասնամյակից ավել աշխատելով Երեւանում՝ ընդհուպ մինչեւ «Երարդշին» տրեստի կառավարչի տեղակալի պաշտոնը, նա 1992-ից վերջնականապես վերադարձավԱրցախ՝ ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի կողմից նշանակվելով շինպետկոմի «Արցախշին» տրեստի կառավարիչ /կոմիտեի նախագահի տեղակալ/:

Թե դա ինչ էր նշանակում այն ժամանակ, հուշել կարող են մամուլում տեղ գտած հետեւյալ տողերը» «Լինելով պրոֆեսիոնալ շինարար, վերադարձավ Արցախ՝ իր լման ներդնելու բանակաշինության գործին, պատերազմից ավերված բնակավայրերի վերականգնմանը: …Բացի Ասկերանի գնդից՝ բոլոր գնդերի շինարարությունն իրականացվել է Ս. Միքայելյանի օրոք: Գեներալ Իվանյանի խոսքերով՝ մեր հաջողությանը մեծապես նպաստեց կարճ ժամանակամիջոցում Խոջալուում տանկուսուցման նպատակով կառուցված պլատֆորմը: …Միքայելյանի ղեկավարած շինտրեստը 1993-94թթ. հիմնականում աշխատում էր բանակաշինության համար, մասամբ էլ՝ իրականացնում քաղաքաշինական-վերականգնողական աշխատանքներ»:

Հավանաբար, այդ ամենն է հիմք ունեցել երջանկահիշատակ Գուրգեն Գաբրիելյանը՝ գրելով այս տողերը.

Այլոք կռվի այս նեղ պահին
Հողն են լքում օտարի պես,
Իսկ դու թքած մահվան գահին՝
Տուն ես դարձել, որ Տուն կերտես:

Եկար որպես խիզախ զինվոր
Կառուցումի ու պայքարի,
Կողքիդ՝ նագանը զորավոր,
Ձեռքիդ՝ մուրճը վեմ ու քարի:

Թող միշտ լինի մուրճը ձեռքիդ,
Ու չլինի կողքիդ նագան…
Որպեսզի քո սուրբ եզերքի
Խաղաղ կյանքի օրերը գան:

1994-96թթ.՝ ԼՂՀ շինարարության նախարարի տեղակալ, 1996-98թթ.՝ քաղաքաշինության նախարարության շինինդուստրիայի, կոմունալ ծառայությունների, որակի հսկողության վարչության պետ, 1998-2003թթ.՝ «Արցախգազ» ՓԲԸ գործադիր տնօրեն, 2003-04թթ.՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ԾԻԳ եւ ԳՎՎ գլխավոր մասնագետ, 2005-ին՝ ԼՂՀ ԿԱ ջրային տնտեսության պետկոմի նախագահ, 2010 թվականից… չկրկնենք, ընթերզողն արդեն գիտի:

Սեյրան Միքայելյանի վաստակը բարձր է գնահատվել պետության ու կառավարության կողմից: 2012թ. նա ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով, 2014-ին՝ ԼՂՀ վարչապետի մեդալով:

Եվ իհարկե, Սեյրան Միքայելյանը, ճանաչող բոլորը կհաստատեն, ամեն ինչից առաջ կենսուրախ, լավատես ու բարի անձնավորություն է: Մի կողմ թողնելով առաջին երկու հատկանիշները, ասեմ, որ նրա բարությունը կրում է գործնական բնույթ, ինչի վկայություններից մեկն էլ սույն գրքի տպագրության հովանավորումն է: Ընդ որում՝ սա ԱԿԱՀՄ-ի հանդեպ դրսեւորած՝ նրա բարեգործական միակ ձեռնարկումը չէ:

Հասարակական կյանքին ակտիվ մասնակցության, ինչպես նաւ աջակցության համար ԼՂՀ «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» ՀԿ կողմից 2014թ. շնորհվել է ԼՂՀ ԱԿԱՀՄ պատվավոր անդամի կոչում:

Սեյրան Միքայելյանը ամուսնացած է, ունի երկու երեխա, երկու թոռ:

Եվս մեկ անգամ շնորհակալություն այդ պայծառ մարդուն՝ անձամբ իմ եւ մեր ողջ կազմակերպության անունից:

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ-3

(2012-2014թթ.)

Խմբագիր՝	*Ռոբերտ Եսայան*
Սրբագրիչ՝	*Իրենա Մարտիրոսյան*
Համակարգչային շարվածքը՝	*Գայանե Խաչատրյան*
Էջադրումը՝	*Մարինա Ավանեսյանի*
Կազմի ձեւավորումը՝	*Ալբերտ Բաղդասարյանի*

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 10 + 40 էջ ներդիր տպ. մամուլ: Տպաքանակը՝ 1000

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25